ISSN 1828–3948

Ժամանակակից ԵՎՐԱՍԻԱ

VI(2)
2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՏՈՐ VI (2)

ԵՐԵՎԱՆ 2017

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

CONTEMPORARY EURASIA

EDITED BY RUBEN SAFRASTYAN

VOLUME VI (2)

YEREVAN 2017

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСТЯНА

ТОМ VI (2)

ЕРЕВАН 2017

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Ռուբեն Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. դ., դոցենտ
Լիլիթ Հարությունյան, պ. գ. թ., դոցենտ
Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ., դոցենտ
Լևոն Հովսեփյան, պ. գ. թ.
Մուշեղ Ղահրիյան, պ. գ. թ.
Նազելի Նավասարդյան, պ. գ. թ.
(գլխավոր խմբագրի տեղակալ)

«Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականի այս հատորն ընդգրկում է Մերձավոր Արևելքին, և Հարավային Կովկասին առնչվող ուսումնասիրություններ: Հոդվածների հեղինակների ուշադրության կենտրոնում են Եգիպտոսի ներքաղաքական գործընթացները, Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության և Իրանի տարածաշրջանային քաղաքականության հիմնախնդիրները, ինչպես նաև ղարաբաղյան հակամարտության համատեքստում միջազգային փորձի տեղայնացման հնարավորության հարցը: Պարբերականը նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, փորձագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև եվրասիական տարածաշրջանով հետաքրքրվող լայն շրջանների համար:

ISSN 1828-3948
© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2017

PUBLISHED BY THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL
OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

EDITOR IN CHIEF
Ruben Safrastyan, Academician of NAS RA

EDITORIAL BOARD:
Vahram Ter-Matevosyan, Dr. Phil., Assoc. Prof.
Lilit Harutyunyan, PhD, Assoc. Prof.
Gohar Iskandaryan, PhD, Assoc. Prof.
Levon Hovsepyan, PhD
Mushegh Ghahriyan, PhD
Nazeli Navasardyan, PhD, (Deputy editor-in chief)

The current issue of the "Contemporary Eurasia" V (1) is devoted to the key political developments and processes in the Middle East and South Caucasus. The Volume contains articles dealing with some aspects of the internal political transformations in Egypt, foreign political issues of Saudi Arabia, Iran's regional policy and the issue of the localization of the international experience of conflict settlement in the context of Karabakh problem. The publication may be of interest for political scientists, experts and students and for a wide range of readers interested in the Eurasian region.

ISSN 1828-3948

ИЗДАЕТСЯ ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГЛАВНЫЙ РЕДАКТОР
Рубен Сафрастян, академик НАН РА

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Ваграм Тер-Матевосян, д. и. н., доцент
Лилит Арутюнян, к. и. н., доцент
Гоар Искандарян, к. и. н., доцент
Левон Овсепян, к. и. н.
Мушег Гагриян, к. и. н.
Назели Навасардян, к. и. н., (заместитель главного редактора)

Выпуск V (1) периодического сборника "Современная Евразия" посвящен актуальным событиям Ближневосточного региона и Южного Кавказа. Включенные в сборник статьи рассматривают вопросы внутриполитических трансформаций в Египте, внешнеполитической стратегии Саудовской Аравии, некоторые аспекты региональной политики Ирана, а так же вопрос локализации международного опыта урегулирования конфликтов в контексте Карабахского конфликта.
Выпуск предназначен для историков, политологов, дипломатов, экспертов, студентов, а также для широкого круга читателей интересующихся Евразийским регионом.

ISSN 1828-3948

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ԱՆԿՅՈՒՆ

ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԳԻՊՏՈՍԻ՝ 2011-2012ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. «ՄԵԿ ՄԱՐԴ, ՄԵԿ ՁԱՅՆ, ՄԵԿ ԱՆԳԱՄ» ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ «ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ» ՀԱՂԹԱՆԱԿԸ 16

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ
ՎԱՀԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՍԱՈՒԴԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱԴԻՆԱՅԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 35

ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՂԱԶՎԻՆ-ՌԱՇԹ-ԱՍԹԱՐԱ ԵՐԿԱԹԳԻԾՆ ԻՐԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏԱՐԱՆՑԻԿ ՄԻՋԱՆՑՔԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ 51

ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 77

ԿԼՈՐ-ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ 91

- ✓ ԻՐԱՔՅԱՆ ՔՐԴՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՇՈՒՐՋ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 91
- ✓ ՀԱՅ-ԼԵՀԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ 93
- ✓ ՍԻՐԻԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ 95

CONTENTS

FROM THE EDITOR'S DESK

GOR GEVORGYAN
THE PARLIAMENTARY ELECTIONS IN EGYPT IN 2011-2012; THE "ONE MAN, ONE VOTE, ONE-TIME" SYSTEM AND THE VICTORY OF THE "ONE-TIME DEMOCRACY" 16

ARAKS PASHAYAN
THE SAUDI CONCEPT OF EXPORTING WAHHABISM AND THE ISLAMIC UNIVERSITY OF MADINAH 35

NAZELI NAVASARDYAN
QAZVIN-RASHT-ASTARA RAILROAD AT THE CROSSROAD OF IRANIAN RAILWAY TRANSMISSION 51

ANNA KARAPETYAN
LOCALIZATION OF THE INTERNATIONAL EXPERIENCE OF CONFLICT SETTLEMENT IN THE CONTEXT OF KARABAKH CONFLICT ..77

ROUNDTABLE DISCUSSIONS AT THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES, NAS RA 91

- ✓ ON THE INDEPENDENCE REFERENDUM IN IRAQI KURDISTAN 91
- ✓ ARMENIAN-POLISH COOPERATION: PAST, PRESENT AND PROSPECTS 93
- ✓ DEVELOPMENTS IN SYRIA AND THE REGION 95

СОДЕРЖАНИЕ

КОЛОНКА ГЛАВНОГО РЕДАКТОРА

ГОР ГЕВОРГЯН
ПАРЛАМЕНТСКИЕ ВЫБОРЫ 2011-2012 ГГ. В ЕГИПТЕ: СИСТЕМА "ОДИН ЧЕЛОВЕК, ОДИН ГОЛОС, ОДИН РАЗ" И ПОБЕДА "ОДНОРАЗОВОЙ ДЕМОКРАТИИ" 16

АРАКС ПАШАЯН
КОНЦЕПЦИЯ *ЭКСПОРТА* САУДОВСКОГО *ВАХХАБИЗМА* ИСЛАМСКИЙ *УНИВЕРСИТЕТ МЕДИНЫ* 35

НАЗЕЛИ НАВАСАРДЯН
ЖЕЛЕЗНАЯ ДОРОГА КАЗВИН-РАШТ-АСТАРА НА ПЕРЕКРЕСТКЕ ИРАНСКОГО ЖЕЛЕЗНОДОРОЖНОГО ТРАНЗИТА 51

АННА КАРАПЕТЯН
ВОЗМОЖНОСТЬ ЛОКАЛИЗАЦИИ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА УРЕГУЛИРОВАНИЯ КОНФЛИКТОВ В КОНТЕКСТЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА 77

ДИСКУССИИ И КРУГЛЫЕ СТОЛЫ В ИНСТИТУТЕ ВОСТОКОВЕДЕНИЯ НАН РА 91

- ✓ РЕФЕРЕНДУМ О НЕЗАВИСИМОСТИ В ИРАКСКОМ КУРДИСТАНЕ 91
- ✓ АРМЯНО-ПОЛЬСКИЕ ОТНОШЕНИЯ: ПРОШЛОЕ, НАСТОЯЩЕЕ И БУДУЩЕЕ 93
- ✓ СИРИЙСКИЕ СОБЫТИЯ В РЕГИОНАЛЬНОМ КОНТЕКСТЕ 95

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Ես կփորձեմ շատ հակիրճ ներկայացնել իմ տեսակետն այն աշխարհաքաղաքական գործընթացների վերաբերյալ, որոնք տեղի են ունենում մեր տարածաշրջանում: Քանի որ ես չեմ ներկայացնում քաղաքական առօրյա գործառույթներ իրականացնող որևէ կառույց, ապա իմ մոտեցումը հիմնվում է ավելի շատ աշխարհաքաղաքական բնույթի իրողությունների վրա, այլ ոչ թե քաղաքական զարգացումների:

Սկսենք նրանից, որ ամենաբարդ, ամենածանր մարտահրավերը, որ կանգնած է մեր երկրի առջև, առաջին հերթին մեր աշխարհաքաղաքական դիրքն է: Հիշեցնեմ, որ մենք չունենք ելք դեպի ծով. մեր չորս սահմաններից երկուսը փակ են, չունենք էներգակիրների պաշարներ և այլն: Ավելացնեմ նաև, որ դասական աշխարհաքաղաքականության տեսակետից Հայաստանը գտնվում է աշխարհում, եթե միջինացնենք, մոտավորապես 130-րդ տեղում իր բնակչությամբ, իր տարածքով, իր ՀՆԱ-ով: Սրան ավելանում է այն հանգամանքը, որ մեր հարևաններից երկուսը, մասնավորապես Թուրքիան, շատ լավ հասկանալով Հայաստանի աշխարհաքաղաքական այս թուլությունը, փորձում է ճնշում գործադրել մեզ վրա՝ փակ պահելով սահմանը: Ադրբեջանը դիմում է ռազմական ճնշման միջոցների: Այսինքն՝ մեր վիճակն աշխարհաքաղաքական առումով դժվար է:

Սակայն ոչ այնքան հեռու անցյալի փաստերը հուշում են, որ անցած տասնամյակների ընթացքում Հայաստանը հաղթեց պատերազմում, Հայաստանը կարողացավ, ի տարբերություն

մեր հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի, ոչ միայն պահպանել իր տարածքային ամբողջականությունը, այլ նաև օգնել Արցախի ժողովրդին: Այսինքն՝ մենք կարողացանք հաջողությամբ դիմակայել աշխարհաքաղաքական մարտահրավերին:

Ի՞նչն է դրա պատճառը: Երկու աշխարհառազմավարական բնույթի հանգամանք ես ուզում եմ նշել: Առաջինը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ռազմավարությունն է, և երկրորդը՝ Սփյուռքի աշխարհաքաղաքական գործոնը:

Ռազմավարական տեսակետից անկախության տարիների մեր արտաքին քաղաքականությունը, կարծում եմ, կարող է համարվել ոչ միայն հաջողված, այլ նաև բացառիկ մի երևույթ համաշխարհային դիվանագիտության տեսադաշտում: Բացատրեմ միտքս: Մենք կարողացել ենք այս տասնամյակների ընթացքում պահպանել դաշնակցային հարաբերություններ Ռուսաստանի հետ, մաս կազմել նրա ղեկավարած ռազմաքաղաքական դաշինքի և միաժամանակ շատ լավ հարաբերություններ հաստատել Արևմուտքի հետ:

Ընդ որում, մեր հարաբերությունները և՛ Ռուսաստանի, և՛ Արևմուտքի հետ հիմնվում են, կարծում եմ, հետևյալ մի շատ կարևոր սկզբունքի վրա. մենք բոլոր այն պարտավորությունները, որ վերցնում ենք մեզ վրա այդ հարաբերությունների շրջանակներում, շատ հստակ կատարում ենք: Հետաքրքիր է նշել, որ այդօրինակ գնահատականներ տրվում են նաև մեր գործընկերների կողմից: Մասնավորապես կարող եմ փաստել, որ այդպիսի գնահատականներ տրվել են Բրյուսելում տեղակայված ՆԱՏՕ-ի գլխավոր ռազմակայանում՝ այնտեղ իմ ունեցած հանդիպումների ընթացքում:

Ինչ խոսք, ՀՀ-ի նման փոքր երկրին հեշտ չէ դիմակայել տարատեսակ ճնշումներին և վարել այդպիսի հստակ, նրբորեն հավասարակշռված և աշխարհի հզոր պետությունների համար հասկանալի և ընդունելի արտաքին քաղաքականություն: Սակայն, կրկնեմ, այդ մեզ մինչև հիմա հաջողվել է:

Մյուս կողմից, պետք է նշել, որ մենք կարողացել ենք մեր չորս հարևաններից երկուսի հետ հաստատել կայուն բարեկամական հարաբերություններ: Մասնավորապես Իրանի հետ

մեր հարաբերությունները, իմ գնահատմամբ, դուրս են եկել երկկողմանի հարաբերությունների մակարդակից և դարձել են ռազմավարական նշանակություն ունեցող հարաբերություններ՝ դառնալով տարածաշրջանում կայունացնող կարևոր գործոն: Այսինքն, այլ խոսքով ասած, Հայաստանի Հանրապետությունը կարողանում է որոշ դեպքերում իրականացնել նաև աշխարհաքաղաքական դերակատարում, իհարկե, միայն տարածաշրջանային ձևաչափով: Այս նույնպես հազվադեպ է տեղի ունենում փոքր երկրների պարագայում:

Անդրադառնամ Սփյուռքի գործոնին: Մենք սովորաբար Սփյուռքի հետ մեր հարաբերություններն ընկալում ենք երկկողմանի, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների հարթության վրա: Սակայն, իմ ընկալմամբ, Սփյուռքը ունի նաև մեկ այլ գործառույթ. դա աշխարհաքաղաքական դերակատարումն է, և պետք է ասել, որ անկախության տասնամյակների ընթացքում մի քանի դեպքում, իսկապես, Սփյուռքին հաջողվել է այս գործառույթն իրականացնել: Մասնավորապես դեռևս 1992 թ. ԱՄՆ-ի կողմից ընդունված «Ժողովրդավարության աջակցության ակտի» 907-րդ Ուղղումը, որն ընդունվեց Կոնգրեսի կողմից, Ամերիկայի հայկական կազմակերպությունների մեծագույն ջանքերի շնորհիվ հանգեցրեց նրան, որ ԱՄՆ-ը զենք չի վաճառում Ադրբեջանին: Սա կարևոր աշխարհաքաղաքական գործոն է, և մինչև այսօր, չնայած ամերիկյան տարբեր կառավարություններ փորձել են շրջանցել այս Ուղղումը, բայց դա նրանց չի հաջողվել: Այն կարևոր նշանակություն ունի Ադրբեջանի ագրեսիվ նկրտումները սահմանափակելու տեսակետից:

Մյուս հանգամանքը, նույնպես աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող, այն է, որ ԱՄՆ-ի հայկական կազմակերպությունների ջանքերի շնորհիվ հաջողվեց Կոնգրեսում անցկացնել որոշում, ըստ որի՝ որ ամերիկյան կազմակերպությունները ֆինանսական օգնություն ցույց չեն տալիս Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի կառուցման աշխատանքներին: Սա նույնպես աշխարհաքաղաքական գործոն է, քանի որ այս երկաթգծի հիմնական նպատակն է էլ ավելի դժվարացնել Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը, էլ ավելի մեկուսացնել Հայաստանը արտաքին աշխարհից:

Այսպիսով, այս երկու գործոնները՝ Հայաստանի նրբորեն հավասարակշռված արտաքին քաղաքականությունը և Սփյուռքի աշխարհաքաղաքական դերը, հնարավորություն տվեցին մեզ այս անբարենպաստ աշխարհաքաղաքական պայմաններում ոչ միայն դիմակայելու դրանց, այլ նաև ստանալու որոշակի առավելություններ մեր հարևանների նկատմամբ:

Մեզ համար շատ կարևոր է, որ տարածաշրջանը մտնի խաղաղության փուլ, ինտեգրման փուլ, քանի որ այս դեպքում մեր աշխարհաքաղաքական դիրքը, որը, ինչպես նշեցի, բացասական գործոն է, ձեռք կբերի որոշ դրական գծեր: Մասնավորապես այդ դեպքում կարելի կլինի հաշվի առնել այն հանգամանքը, որ Հայաստանը գտնվում է Հարավային Կովկասի կենտրոնում: Դա նշանակում է, որ ինտեգրման գործընթացների դեպքում Հայաստանի դերը տարածաշրջանում կմեծանա:

Անհրաժեշտ է ընդգծել, որ մենք առնչվում ենք աշխարհաքաղաքական նոր մարտահրավերներին, որոնք ի հայտ են եկել վերջերս: Ես նկատի ունեմ առաջին հերթին Ռուսաստանի և Արևմուտքի հարաբերությունների սրացումը: Դա իսկապես մարտահրավեր է աշխարհաքաղաքական առումով մեզ համար, քանի որ կարող է հանգեցնել այն հավասարակշռության խախտմանը, որը մենք կարողացել էինք ստեղծել՝ համագործակցելով Ռուսաստանի և Արևմուտքի հետ: Այս առումով, ես կարծում եմ, որ Հայաստանը չպետք է ենթարկվի աճող ճնշումներին և չգայթակղվի թվացյալ առավելություններով՝ շարունակելով իր արդեն տասնամյակների ընթացքում փորձարկված արտաքին քաղաքականության ռազմավարական գիծը և խուսափելով Հայաստանի և Արցախի անվտանգությանը սպառնացող զարգացումներից:

Հաջորդ նոր երևույթը, որը նույնպես կարող է մեզ համար վտանգ ներկայացնել, այն է, որ Մերձավոր Արևելքը, այսպես ասած, «ընդլայնվում է» և կարող է ներքաշել նաև Հարավային Կովկասը և մանավանդ Հայաստանը: Սա նույնպես լուրջ մարտահրավեր է, և այստեղ մենք նույնպես պետք է կարողանանք գտնել այն հավասարակշռությունը, ես կօգտագործեի ավելի շուտ *էկվիլիբրիում* եզրույթը, որը մեզ հնարավո-

րություն կտա բոլոր հնարավոր միջոցներով օգնելու մեր հայրենակիցներին Մերձավոր Արևելքում, մասնավորապես Սիրիայում, միևնույն ժամանակ հեռու մնալու մերձավորարևելյան այն բարդ և վտանգավոր զարգացումներից, որ ընթանում են մեր աչքերի առջև:

Մեկ հանգամանքի վրա ևս կանգ առնեմ և դրանով ավարտեմ: Մենք ապրում ենք մի աշխարհում, որը ենթարկվում է գլոբալիզացիայի՝ համաշխարհայնացման, որի հիմքում համացանցի լայն տարածումն է: Իհարկե, այս երևույթը պարունակում է բազմաթիվ վտանգներ՝ կապված մասնավորապես մեր ինքնության կորստի հետ: Բայց սա նաև մի նոր հնարավորություն է մեր ժողովրդի համար: Ես նկատի ունեմ այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը համամոլորակային առումով Հայաստան-Սփյուռք ցանցային կառույց է, որը գործում է աշխարհով մեկ, և համացանցի, վիրտուալ աշխարհի առաջացումը, նրա դերի մեծացումը մեզ հնարավորություն է տալիս որպես ցանցային կառույցներ ունեցող ժողովրդի՝ բարելավելու մեր դիրքն աշխարհում:

Վերջերս ես զեկուցումով հանդես եկա արտասահմանյան մի երկրում, որտեղ առաջարկեցի հետևյալ մոտեցումը, որ Հայաստանի նման փոքր երկրները կարող են փորձել մշակել նոր աշխարհաքաղաքականություն՝ վեր կանգնելով դասական աշխարհաքաղաքականությունից, որը մեզ համար, ինչպես նշեցի, հիմնականում անբարենպաստ է: Այս առումով վիրտուալ աշխարհը մեզ համար նոր հնարավորություններ է ստեղծում: Բերեմ միայն մեկ օրինակ. Վիքիպեդիայում հայերեն հոդվածների թվով մենք աշխարհում մոտավորապես 40-րդ տեղում ենք: Այսինքն՝ համեմատենք, 130-րդ տեղը դասական աշխարհաքաղաքականության տեսակետից և 40-րդ տեղը Վիքիպեդիայում, որը ժամանակակից համաշխարհայնացող աշխարհի կարևոր երևույթներից է:

Կարծում եմ, որ նոր համամոլորակային զարգացումները մեզ համար նոր հնարավորություններ են բացում: Եվ այս առումով մեր Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովն իր դրական դերը կարող է ունենալ և կդառնա ոչ միայն համաժողով, այլև խորհրդաժողով և բարենպաստ մթնոլորտ

կստեղծի՝ համայն հայության հոգևոր, ինտելեկտուալ հնարավորությունները մեկտեղելու և նոր մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելու համար:

«Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն», Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողով, Երևան, 2017 թ. սեպտեմբերի 18-20

ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԳԻՊՏՈՍԻ՝ 2011-2012ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. «ՄԵԿ ՄԱՐԴ, ՄԵԿ ՁԱՅՆ, ՄԵԿ ԱՆԳԱՄ» ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ «ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ» ՀԱՂԹԱՆԱԿԸ

Արաբական աշխարհում սկսված «արաբական գարունը» 2011 թ. ներթափանցեց նաև Եգիպտոս, որտեղ սկսված հասարակական-քաղաքական զարգացումները հանգեցրին պետության կարծրացած իշխանական համակարգի անկմանը: 2011թ. փետրվարի 11-ին «եգիպտական փողոցի» հուժկու բողոքների արդյունքում և գործող իշխանությանն արտաքին աջակցության դադարեցման պայմաններում[1] Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը հայտարարեց իր պաշտոնանկության մասին[2]: Փետրվարի 13-ին Եգիպտոսում իշխանությունն անցավ Զինված ուժերի բարձրագույն խորհրդին՝ գեներալ Հուսեյն Տանտաուիի գլխավորությամբ[3]: Զինված ուժերի բարձրագույն խորհուրդը ցրեց խորհրդարանը և առաջադրեց սահմանադրական փոփոխություններ անցկացնելու մասին պահանջը, որի հիման վրա պետք է ձևավորվեր նոր ժողովրդավարական իշխանական համակարգ, և անցկացվեին նոր խորհրդարանական ընտրություններ:

[1] ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման, անդրադառնալով Եգիպտոսում տիրող իրավիճակին, նշել էր, որ նախագահ Մուբարաքը պետք է ենթարկվի ժողովրդի կամքին, այսինքն՝ հրաժարական տա: Մուբարաքը Եգիպտոսի նախագահի պաշտոնը զբաղեցնում էր 1981թ.:

[2] Hosni Mubarak regins as president: Egyptian president stands down and hands over power to the Supreme Council for the Armed Forces, Al Jazira, 11.02.2011, http://www.aljazeera.com/news/middleeast/2011/02/201121125158705862.html

[3] Hussein Tantawi, head of Egypt's Higher Military Council, Al Arabia, 11.02.2011, https://www.alarabiya.net/articles/2011/02/11/137247.html, Հարկ է նշել, որ Տանտաուին առանձնապես մեծ ժողովրդականություն չէր վայելում Եգիպտոսում և ժողովրդի շրջանում ստացել է «Մուբարաքի պուդել» անունը: Shashak Joshi, Viewpoint: Too early to celebrate in Egypt?, BBC News, 12.02.2011, http://www.bbc.co.uk/news/world-middle-east-12438007

Եգիպտոսում սկսված հակամուբարաքյան հուժկու բողոքների գլխավոր դերակատարները եգիպտական հասարակության առավել կրթված շրջանակներն էին, եգիպտական մտավորականները՝ դասախոսներ, արվեստի ոլորտի ներկայացուցիչներ, ուսանողներ և այլն, որոնց ամփոփ կարող ենք անվանել ազատական-ժողովրդավարական ուժեր:

Արդարացի լինելու համար հարկավոր է փաստել, որ եգիպտական հասարակությունը դասական քաղաքագիտության տեսանկյունից, ի տարբերություն արաբական մի շարք այլ երկրների հասարակությունների, որոնցից շատերին բնորոշ է ցեղային կառուցվածքը, ավելի կազմակերպված էր և ուներ իշխանությունների դեմ պայքարի ինստիտուցիոնալ տեվական փորձ:

«Արաբական գարնան» «ֆենոմենը» հանրապետական Եգիպտոսի պատմության մեջ աննախադեպ էր. ժողովրդավարական արժեքների հիման վրա քաղաքացիական հասարակություն կառուցելուն միտված գործընթացը ձևավորում էր ուրույն քաղաքական դաշտ՝ ըստ էության հավասար իրավունքներ ստեղծելով երկրում քաղաքական բոլոր ուժերի համար[4]:

Սակայն հատկանշական է, որ ազատական-ժողովրդավարական շարժման ակտիվացմանը զուգընթաց, Եգիպտոսում «արաբական գարնան» «ֆենոմենի» բնորոշ կողմերից մեկը դարձավ իսլամական գործոնի և իսլամամետ կուսակցությունների ու շարժումների ակտիվացումը: Վերջիններիս գործունեությունը, այդ թվում՝ եգիպտական քաղաքական ընդհատակում տասնյակ տարիներ գործող «Մուսուլման եղբայրներ» ընդդիմադիր կրոնաքաղաքական շարժումը սկսեց նոր թափ ստանալ: Փաստենք, որ տևական ժամանակ արաբական մի շարք երկրներում, այդ թվում և Եգիպտոսում, կրոնաքաղաքական ուժերը եղել են աշխարհիկ վարչակարգերի հիմնական գործուն ընդդիմախոսները, իսկ քաղաքական իսլամը՝ այլախո-

[4] Համաձայն քաղաքական և քաղաքացիական ազատությունների հետազոտության <<ֆրիդոմ Հաուս>> կազմակերպության կողմից հրապարակված տվյալների՝ Եգիպտոսը 2002-2010 թթ. համարվում էր ոչ ազատ, քաղաքական իրավունքների և ազատությունների իսպառ բացակայությամբ երկիր, տե՛ս Egypt 2010, Freedom in the World, https://freedomhouse.org/report/freedom-world/2010/egypt

հության գաղափարական հիմնական աղբյուրներից մեկը: Որոշ երկրներում նրանք գործել են ընդհատակում և դաժանորեն հետապնդվել իշխանությունների կողմից:

Ամենևին էլ պատահական չէր, որ «արաբական գարնան» համատեքստում իսլամիստական գործոնը կարողացավ զբաղեցնել «արաբական ազգայնականության» ճգնաժամի արդյունքում առաջացած գաղափարական վակուումը[5]: Ավելին, Եգիպտոսի պարագայում վերը նշված ուժերն առաջ քաշեցին պետության կառավարման նոր մոդելի ընտրության հարցը[6]: «Մուսուլման եղբայրները»՝ որպես առավել կենսունակ քաղաքական ուժ, դուրս գալով օրինական, թափանցիկ դաշտ, եգիպտական հասարակությանը կանգնեցրեց աշխարհիկության և իսլամականության բևեռների միջև դժվարին ընտրություն կատարելու փաստի առջև[7]: Քաղաքական այս վայրիվերումների շրջանը երկրում առաջացրեց ներքաղաքական խոր ճգնաժամ:

Հետմուբարաքյան իշխանության ժառանգորդ Զինված ուժերի բարձրագույն խորհուրդը, տեղի տալով երկրում քաղաքական դաշտի արմատական բարեփոխումներ սկսելու «եգիպտական փողոցի» պահանջներին, միևնույն ժամանակ ձգտում էր պահպանել երկրի պետականության աշխարհիկ բնույթը, թեկուզև մեկ այլ բռնապետական վարչակարգի տեսքով: Այդ առումով հետմուբարաքյան Եգիպտոսում արդեն իսկ առկա

[5] Առհասարակ արաբական ազգայնականության ճգնաժամի մասին քննարկումներն ավելի վաղ են սկսվել, իսկ «արաբական գարունը» այն հստակեցրեց: Տե՛ս Dawisha A., Requiem for Arab Nationalism, Middle East Quarterly, http://www.meforum.org/518/requiem-for-arab-nationalism, Volume 10, N1, Winter, 2003, pp. 25-41.

[6] "День гнева" пять лет спустя: что изменилось в Египте, Русская служба BBC, 26.01.2016., http://www.bbc.com/russian/international/2016/01/160125_5floor_arab_revolutions_5_years
Ակտիվորեն սկսեց քննարկվել Եգիպտոսում կառավարման այսպես կոչված «թուրքական մոդելի» ներդրման հավանականությունը, ինչը կպայմանավորեր երկրում այսպես կոչված «չափավոր իսլամամետների» իշխանության գալու նոր հնարավորությունը:

[7] Over 37.500 Egyptians to Take Part on January 25th Uprising, տե՛ս The Muslim brotherhood's official English web site, Ikhwanweb,19.01.2011, http://www.ikhwanweb.com/article.php?id=27870

հասարակական երկփեղկվածությունը և քաղաքական դաշտի բյուրեղացումը կանխորոշեցին պետության կառավարման համակարգի որակական նոր փոփոխությունները, որոնք անմիջապես արտացոլվեցին 2011-2012 թթ. կայացած խորհրդարանական ընտրություններում[8]:

Խորհրդարանական ընտրությունների արդյունքներն ամփոփելուց առաջ հարկավոր է անդրադառնալ եգիպտական Խորհրդարանի կառուցվածքին: Այսպես, եգիպտական Խորհրդարանը բաղկացած էր երկու պալատից՝ ստորին՝ Ազգային ժողովը և վերին՝ Շուրայի խորհուրդը[9]: Խորհրդարանի երկու պալատներից միայն ստորինն էր, որ ուներ օրենսդրական լիազորություններ, և այդ առումով այս կամ այն ուժի մեծամասնական ներկայությունը վերջինիս համար ապահովում է բավական մեծ ազդեցություն: Եգիպտոսի Խորհրդարանի ստորին պալատը ներկայացնում էր 508 պատգամավոր, որոնք ընտրվում էին 5 տարի ժամկետով: Ընտրված 508-ից 498-ը ընտրվում էր մեծամասնական համակարգով, և ևս 10-ը նշանակվում էր պետության նախագահի կողմից: Ընդ որում 508 պատգամավորից 332-ը ընտրվում էր կուսակցական ցուցակներով, իսկ 166-ը՝ որպես անկախ թեկնածու[10]:

Ինչ վերաբերում է Խորհրդարանի վերին պալատին՝ Շուրայի խորհրդին, ապա այն ուներ միայն սահմանադրական փոփոխությունները քննարկելու, միջազգային համաձայնագրերի հետ կապված կարծիք հայտնելու հիմնական առաքելու-

[8] Կարևոր է նշել, որ Մուբարաքի պաշտոնանկությունից հետո երկրի ղեկավարման լծակները վերցրած Զինված ուժերի բարձրագույն խորհուրդը, նպատակ ունենալով հստակեցնել պետության կառավարման մոդելը, ինչպես նաև որոշ առումով տեղի տալով «եգիպտական փողոցի» ճնշումներին, նախաձեռնեց խորհրդարանական, իսկ հետո նաև նախագահական ընտրությունների կազմակերպման և կայացման գործընթացը:

[9] Համաձայն 2014 թ. կայացած սահմանադրական հանրաքվեի՝ եգիպտական խորհրդարանն ունի ընդամենը մեկ պալատ, որը բաղկացած է 596 պատգամավորից, որոնք ընտրվում են 5 տարի ժամկետով: 596 պատգամավորից 120-ը ընտրվում է համաձայն կուսակցական ցուցակների, 448-ն անկախ թեկնածուներ են, և ևս 28-ին նշանակում է պետության նախագահը:

[10] Сапронова М.А., Египет: 90 лет конституционных трансформаций (1923-2013гг.), М., 2014, с. 85.

թյուն[11]: Վերին պալատը կազմված էր 270 անդամից, որոնք ընտրվում էին 6 տարի ժամկետով[12]: Ներկայացուցիչների 2/3-ը ընտրվում էր ուղիղ և գաղտնի քվեարկության միջոցով, 1/3-ը նշանակվում էր պետության նախագահի կողմից, 180-ից 120-ն ընտրվում էր կուսակցական ցուցակներով, և ևս 60-ը՝ անհատական թեկնածուների համակարգի միջոցով[13]:

2011-2012թթ. նոյեմբերի 28-ից հունվարի 11-ը կայացած եգիպտական Խորհրդարանի ստորին պալատի ընտրություններն անցան երեք փուլով: Առաջին փուլը՝ նոյեմբերի 28-29-ից դեկտեմբերի 5-6-ը, երկրորդը՝ դեկտեմբերի 14-15-ից դեկտեմբերի 21-22-ը, երրորդը՝ հունվարի 3-4-ից հունվարի 10-11-ը: Ստորին պալատի ընտրություններին քվեարկողների ակտիվությունը կազմեց առաջին փուլում՝ 65%, երկրորդում՝ 43%, իսկ երրորդում՝ 62%[14]:

Նախընտրական պայքարում ներգրավված քաղաքական ուժերի սոցիալական կազմի ու գաղափարական հենքի առումով հարկ ենք համարում ներկայացնել առավել առանցքային քաղաքական ուժերին, ինչն ավելի ընկալելի է դարձնում երկրում ստեղծված քաղաքական բևեռացումները:

Ստորին պալատի նախընտրական պայքարում առանձնանում էին քաղաքական ուժերի 4 հիմնական դաշինքներ, որոնց շուրջ էլ ըստ էության վերադասավորվում էին քաղաքական մյուս ուժերի ռազմավարական միությունները[15]:

Եգիպտական ընտրազանգվածի ստվար հատվածի վրա թերևս առավել մեծ ազդեցություն ուներ «Դեմոկրատական միությունը», այն գլխավորում էր «Մուսուլման եղբայրների» քաղաքական թևը՝ «Ազատություն և արդարություն» կուսակցությունը: Այս կոալիցիան միավորել էր քաղաքական տարբեր ուղղությունների ուժերին և հանդես էր գալիս որպես համազգային միություն, որը հակված էր ժողովրդավարական սկզբունքներին: Օրինակ՝ այս կոալիցիայի մեջ ընդգրկվեցին այնպիսի քաղաքական ուժեր, ինչպես՝ «ալ-Ղադ» կուսակցությունը, ձախ «ալ-Քարամա» կուսակցությունը և այլն: Հարկ է նշել, որ «Մուսուլման եղբայրների» և նշված ազատական-ժողովրդավարական կուսակցությունների միջև համագործակցություն սկսվել էր «արաբական գարունից» շատ ավելի վաղ, որոնց միավորում էր Մուբարաքի հրաժարականի պահանջը[16]: Պետք է փաստել, որ Ստորին պալատի ընտրություններից հետո ազատական այս ուժերը տհաճ անակնկալի եկան, երբ պարզ դարձավ, որ «Ժողովրդավարական դաշինք» թեկնածուների 70%-ը «Ազատություն և արդարություն» կուսակցության անդամներից էին[17]: Եգիպտական հասարակության շարքերում բավականին մեծ հեղինակություն էր վայելում մեկ այլ իսլամիստական ուժ՝ «Իսլամական ալիանսը», որը գլխավորում էր սալաֆիական «ան-Նուր» կուսակցությունը:

Դաշինքի կազմում ընդգրկված էին ևս սալաֆիական գաղափարախոսությանը հետևող մի քանի ուժեր: «ան-Նուր» կուսակցության գլխավոր քարտուղարի պնդմամբ քաղաքական այդ ուժը ձգտում էր կառուցել ժամանակակից պետություն, որտեղ կպահպանվեին իսլամական ինքնաճանաչման սկզբունքները[18]: Խորհրդարանական ընտրարշավում մասամբ ազդեցիկ դիրքեր էին զբաղեցնում «Հեղափոխությունը շարունակվում» է կուսակցությունը, որը ստեղծել էին եգիպտացի երիտասարդ հեղափոխականները և «Եգիպտական բլոկը», որը կազմավորվել էր «Ազատ եգիպտացիներ» կուսակցության

[11] Նույն տեղում:

[12] Տե՛ս Final Report of the Carter Center Mission to Witness the 2011-2012 Parliamentary Elections in Egypt, https://www.cartercenter.org/resources/pdfs/news/peace_publications/election_reports/egypt-2011-2012-final-rpt.pdf

[13] Նույն տեղում:

[14] Մանրամասն տե՛ս Egyptian Elections: Preliminary Results, Jadaliyya,09.01.2012, http://www.jadaliyya.com/Details/24732/Egyptian-Elections-Preliminary-Results-%5BUPDATED%5D

[15] Տե՛ս Final Report of the Carter Center Mission to Witness the 2011-2012 Parliamentary Elections in Egypt, նշվ. աշխ.:

[16] Сапронова М. А., նշվ.աշխ., էջ 86: Հարկ է նշել, որ այդ ժամանակ «Մուսուլման եղբայրներին» միացել էին «ալ-Ղադ» կուսակցությունը, «Ապրիլի 6-ի» շարժումը և այլն:

[17] Տե՛ս Faris M.D., Constituting Institutions: The Electoral System in Egypt, Middle East Policy Council, Vol. XIX, N 1, Spring, 2012, http://www.mepc.org/constituting-institutions-electoral-system-egypt

[18] Տե՛ս Nafaa Hassan, Parliamentary elections and the future of the political system in Egypt, Contemporary Arab Affairs, Vol. 9, Issue 2, Taylors & Francis Online, 2016, http://www.tandfonline.com/doi/full/10.1080/17550912.2016.1157298?src=recsys

շուրջ[19]: Այն միավորում էր տարբեր կուսակցություններ և քաղաքական ուժեր՝ ծայրահեղ աջերից մինչև ձախ կենտրոնամետ, օրինակ՝ «ալ-Թագամմու» կուսակցությունը, Եգիպտոսի «Կոմունիստական» կուսակցությունը և այլն[20]:

Փաստենք, որ նախընտրական ողջ գործընթացում վերը նշված միությունների և դաշինքների կազմը պարբերաբար փոփոխվում էր, և այդ փոփոխությունը պայմանավորված էր ոչ թե գաղափարախոսության և կամ ծրագրերի ընդհանրություններով, այլ «ուժեղագույնի» հետ խորհրդարան անցնելու հանգամանքով:

Չնայած նրանց միավորող որոշ գործոններին՝ իրականում այդ կուսակցությունները ներկայացնում էին եգիպտական հասարակության տարբեր խմբեր և շահեր՝ հաճախ հանդես գալով իրենց սեփական հետաքրքրություններից ելնելով: Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ ձևավորվեց նաև սուֆիական «Հաղթանակի» կուսակցությունը[21]:

«Մեկ մարդ, մեկ ձայն, մեկ անգամ» համակարգը և «մեկանգամյա ժողովրդավարության» հաղթանակը

Արդի արևմտյան ժողովրդավարության առանցքային հենքային արժեքներից է ընտրական իրավունքներից հավասար օգտվելու սկզբունքը, այսպես կոչված «մեկ մարդ, մեկ ձայն» համակարգը, երբ բոլոր համապատասխան տարիքի գործունակ քաղաքացիները, անկախ իրենց սոցիալական կարգավիճակից, ստանում են ընտրական իրավունքներ[22]:

[19] Նույն տեղում:

[20] Տե՛ս Ranko A., Crossing the Ideological Divide? Egypt's Salafists and the Muslim Brotherhood after the Arab Spring, Studies in conflict & Terrorism Vol. 39, Issue 6, Taylors & Francis Online, 2016,http://www.tandfonline.com/doi/full/10.1080/1057610X.2015.1116274?src=recsys

[21] Царегородцева И.А., Мусульманские группы Египта и их политические партии накануне и после "революции 25 января", https://publications.hse.ru/preprints/114496156

[22] Ներկայումս բազմաթիվ քաղաքագետներ «մեկ մարդ, մեկ ձայն» համակարգը գնահատում են որպես անարդար և ոչ ադեկվատ /թե ոչ արդյունավետ/: Աջերը կարծում են, որ այն չափից ավելի իրավունքներ է տալիս պոպուլիստներին, ովքեր հենվում են բնակչության այն հատվածի վրա, որը շատ քիչ ներդրում է կատարում համընդհանուր տնտեսական բարիք ստեղծելու գործում: Ձախերն էլ համոզված են, որ այդ համակարգն ապահովում է «ծերերի» գերակայությունը, այսինքն՝ բնակչության առավել ապահովված շերտերի իրավունքները: Այս բանավեճը վկայում է, որ առաջիկայում «մեկ մարդ – մեկ ձայն» համակարգը կենթարկվի զգալի փոփոխությունների, քանի որ արդի ժողովրդավարությունը, ըստ տարբեր կարծիքների, քայքայման և կերպափոխման շրջան է թևակոխել:

Ընտրական այս համակարգի կիրարկման պարագայում գերնպատակ է այս կամ այն ընդդիմության կողմից տվյալ պետության ներկայացուցչական մարմիններում տեղերի մեծամասնություն զբաղեցնելը: Եգիպտոսում խորհրդարանական ընտրությունների ժամանակ իսլամիստներն օգտագործեցին արևմտյան ժողովրդավարության ընթացակարգային հենց այդ ընկալումը՝ «մեկ մարդ, մեկ ձայն», որին հետո միայն պետք է ավելանար նաև այսպես կոչված «մեկ անգամ» սկզբունքը, որը ենթադրում էր նրանց քաղաքական ընդդիմադիրների համար մրցակցության հնարավորությունների սահմանափակում: Այդպիսով, ստեղծվում էր մի համակարգ, երբ ժողովրդավարությունը տվյալ դեպքում դառնում էր մեկանգամյա՝ միայն հաղթողի համար, քանի որ հետո այն հենց հաղթողի կողմից պետք է խեղաթյուրվեր[23]: Պետք է նշել, որ արևմտյան քաղաքագիտական ընկալմամբ «մեկ մարդ, մեկ ձայն» հայեցակարգը ընտրական իրավունքների հավասարության և արդարության տարբեր մոդելների վերաբերյալ արևմտյան համափիլիսոփայական քննարկման մասնավոր դեպք էր[24]:

Օգտագործելով «մեկ մարդ, մեկ ձայն» համակարգը՝ իսլամականները հմտորեն խուսափեցին հակաարևմտյան հռետորաբանությունից՝ հռչակելով իրենց հանուն ժողովրդավարության պայքարողներ, մինչդեռ իրականում Եգիպտոսում փորձեցին հիմնել աստվածապետական կարգեր:

[23] «Մեկանգամյա ժողովրդավարության» ընկալման շրջանակներում տեղին է հիշատակել Վեյմարյան հանրապետության ժողովրդավարական համակարգը, որն ըստ էության օգնեց Ադոլֆ Հիտլերին գալ իշխանության:

[24] Մանրամասն տե՛ս Перспективы отмены равного избирательного права и системы «один человек, один голос», Экспертно- аналитическое исследование, Фонд национальной энергетической безопасности, М., октябрь, 2014, https://www.politanalitika.ru/upload/iblock/fee/feec98442553a6bf7b839bd242e35a37.pdf

Ազգային ժողովի ընտրությունների երեք փուլերից յուրաքանչյուրն անցավ տարբեր ընտրատարածքներում՝ խառը համաչափ քվեարկությամբ: Փորձագետների կարծիքով այս խորհրդարանական ընտրությունները հանրապետական Եգիպտոսում 1952 թ. ի վեր ժողովրդավարական ընտրությունների առաջին փորձն էին[25]: Հարկ է նշել, որ նախկինում, մասնավորապես 2010 թ., Եգիպտոսում անցկացված խորհրդարանական ընտրություններն ուղեկցվում էին բազմաթիվ ընտրախախտումներով և հասարակական կարգի ոտնահարմամբ[26]:

Փորձելով արտաքուստ ցուցադրել երկրում կտրուկ բարեփոխումներ իրականացնելու պատրաստակամություն՝ Հինված ուժերի բարձրագույն խորհուրդը 2011 թ. նոյեմբերի 21-ին ընդունեց քաղաքական մեկուսացման մասին օրենքը, որը միտված էր չթույլատրել նախկինում իշխող «Ազգային դեմոկրատական» կուսակցության անդամներին մասնակցելու ընտրություններին[27]:

Ստորև ներկայացված են ստորին պալատի ընտրությունների արդյունքները[28] (աղյուսակ 1):

Խորհրդարանի ստորին պալատի ընտրությունների երեք փուլերի արդյունքում առաջին տեղը զբաղեցրեց «Ազատություն և արդարություն» կուսակցությունը՝ հավաքելով ընտրածայների 37,5%-ը[29]՝ 498 տեղից զբաղեցնելով 235 տեղը, երկրորդը՝ սալաֆիական գաղափարախոսությամբ ան-Նուր[30] կուսակցու-

[25] Ranko A., Crossing the Ideological Divide?, նշվ.աշխ.:

[26] Տե՛ս Amr Hamzawy, Michele Dunne, Brotherhood Enters Election in a Weakened State, Carnegie endowment for international peace,15.11.2010, http://carnegieendowment.org/2010/11/15/brotherhood-enters-elections-in-weakened-state/42tv

[27] Elections in Egypt: Implications of Recent Court Decisions on the Electoral Framework, Middle East and North Africa International Foundation for Electoral Systems, 09.08.2012, http://www.ifes.org/sites/default/files/egypt_scc_decisions august9.pdf

[28] Տե՛ս Egyptian Elections: Preliminary Results, Jadaliyya, 09.01.2012, նշվ.աշխ.: http://www.jadaliyya.com/Details/24732/Egyptian-Elections-Preliminary-Results-%5BUPDATED%5D

[29] Egypt's Islamist parties win elections to parliament, BBC News, 21.01.2012, http://www.bbc.com/news/world-middle-east-16665748

[30] Ծայրահեղ-պահպանողական «ան-Նուր» կուսակցությունը գործունեության լիազորագիր ստացավ 2011 թ. հունիսի 13-ին, որն էլ ըստ էության համարվում

Աղյուսակ 1

2011-2012 թթ. խորհրդարանական ընտրությունները Եգիպտոսում (ստորին պալատ)				
Կուսակցություն	Գաղափարական հենք	2012 թ. արդյունքները տոկոսներով	Արդյունքները՝ ըստ ընտրածայների ցուցանիշների	Տեղերի քանակը 2012 թ.
1.«Ժողովրդավարական միություն հանուն Եգիպտոսի», որը գլխավորում էր «Ազատություն և արդարություն» կուսակցությունը	Իսլամիստական, «Մուսուլման եղբայրներ»	37,5%	10.138.134	235-ը՝ 498-ից «Ազատություն և արդարություն» կուսակցություն, «Արժանապատվության» կուսակցություն - 6 «Ղադ ալ-Սաուրա» կուսակցություն – 2, «Քաղաքակրթության» կուսակցություն – 2, «Իսլամական լեյբորիստական» կուսակցություն – 1, «Եգիպտական արաբական սոցիալիստական» կուսակցություն – 1, «Բարեփոխումների» եգիպտական կուսակցություն – 1, «Փոխկապակցված անկախ» կուսակցություն - 9
2.«Իսլամիստական բլոկ», որը գլխավորում էր «ան-Նուր» կուսակցությունը	Իսլամիստական, սալաֆիական	27,8%	7.534.266	120 տեղ «ան-Նուր» կուսակցություն – 107, «Կառուցման և զարգացման» կուսակցություն – 13, «Իրականության» կուսակցություն – 3

է կուսակցության ստեղծման տարեթիվը: Կուսակցությունը միավորեց Եգիպտական սալաֆիական շարժումները: Եգիպտոսում սալաֆիական շարժումը, որն ավելի շատ հայտնի է «ալ-Դաուա» անվամբ, սկսվել էր 1970-ականներին Ալեքսանդրիայի համալսարանում և արդեն 1980-ականներին ամրապնդել էր իր դիրքերը: Նախկինում սալաֆիականները չէին ցանկանում մասնակցել քաղաքական զարգացումներին և չմիացան «Մուսուլման եղբայրներին»: Նրանք չմասնակցեցին նաև հակահիշխանական բողոքներին, միայն Մուբարաքի պաշտոնանկությունից հետո հայտարարեցին, որ զբաղվելու են քաղաքականությամբ:

Ազգային ժողովի ընտրությունների երեք փուլերից յուրաքանչյուրն անցավ տարբեր ընտրատարածքներում՝ խառը համաչափ քվեարկությամբ: Փորձագետների կարծիքով այս խորհրդարանական ընտրությունները հանրապետական Եգիպտոսում 1952 թ. ի վեր ժողովրդավարական ընտրությունների առաջին փորձն էին[25]: Հարկ է նշել, որ նախկինում, մասնավորապես 2010 թ., Եգիպտոսում անցկացված խորհրդարանական ընտրություններն ուղեկցվում էին բազմաթիվ ընտրախախտումներով և հասարակական կարգի ոտնահարմամբ[26]:

Փորձելով արտաքուստ ցուցադրել երկրում կտրուկ բարեփոխումներ իրականացնելու պատրաստակամություն՝ Զինված ուժերի բարձրագույն խորհուրդը 2011 թ. նոյեմբերի 21-ին ընդունեց քաղաքական մեկուսացման մասին օրենքը, որը միտված էր չթույլատրել նախկինում իշխող «Ազգային դեմոկրատական» կուսակցության անդամներին մասնակցելու ընտրություններին[27]:

Ստորև ներկայացված են ստորին պալատի ընտրությունների արդյունքները[28] (աղյուսակ 1):

Խորհրդարանի ստորին պալատի ընտրությունների երեք փուլերի արդյունքում առաջին տեղը զբաղեցրեց «Ազատություն և արդարություն» կուսակցությունը՝ հավաքելով ընտրածայների 37,5%-ը[29]՝ 498 տեղից զբաղեցնելով 235 տեղը, երկրորդը՝ սալաֆիական գաղափարախոսությամբ ան-Նուր[30] կուսակցու-

[25] Ranko A., Crossing the Ideological Divide?, նշվ.աշխ.:

[26] Տե՛ս Amr Hamzawy, Michele Dunne, Brotherhood Enters Election in a Weakened State, Carnegie endowment for international peace,15.11.2010, http://carnegieendowment.org/2010/11/15/brotherhood-enters-elections-in-weakened-state/42tv

[27] Elections in Egypt: Implications of Recent Court Decisions on the Electoral Framework, Middle East and North Africa International Foundation for Electoral Systems, 09.08.2012, http://www.ifes.org/sites/default/files/egypt_scc_decisions august9.pdf

[28] Տե՛ս Egyptian Elections: Preliminary Results, Jadaliyya, 09.01.2012, նշվ.աշխ.: http://www.jadaliyya.com/Details/24732/Egyptian-Elections-Preliminary-Results-%5BUPDATED%5D

[29] Egypt's Islamist parties win elections to parliament, BBC News, 21.01.2012, http://www.bbc.com/news/world-middle-east-16665748

[30] Ծայրահեղ-պահպանողական «ան-Նուր» կուսակցությունը գործունեության լիազորագիր ստացավ 2011 թ. հունիսի 13-ին, որն էլ ըստ էության համարվում

Աղյուսակ 1

2011-2012 թթ. խորհրդարանական ընտրությունները Եգիպտոսում (ստորին պալատ)				
Կուսակցություն	Գաղափարական հենք	2012 թ. արդյունքները տոկոսներով	Արդյունքները՝ ըստ ընտրածայների ցուցանիշների	Տեղերի քանակը 2012 թ.
1.«Ժողովրդավարական միություն հանուն Եգիպտոսի», որը գլխավորում էր «Ազատություն և արդարություն» կուսակցությունը	Իսլամիստական, «Մուսուլման եղբայրներ»	37,5%	10.138.134	235-ը՝ 498-ից «Ազատություն և արդարություն» կուսակցություն, «Արժանապատվության» կուսակցություն - 6 «Ղադ ալ-Սաուրա» կուսակցություն – 2, «Քաղաքակրթության» կուսակցություն – 2, «Իսլամական լեյբորիստական» կուսակցություն – 1, «Եգիպտական արաբական սոցիալիստական» կուսակցություն – 1, «Բարեփոխումների» եգիպտական կուսակցություն – 1, «Փոխկապակցված անկախ» կուսակցություն - 9
2.«Իսլամիստական բլոկ», որը գլխավորում էր «ան-Նուր» կուսակցությունը	Իսլամիստական, սալաֆիական	27,8%	7.534.266	120 տեղ «ան-Նուր» կուսակցություն – 107, «Կառուցման և զարգացման» կուսակցություն – 13, «Իրականության» կուսակցություն – 3

է կուսակցության ստեղծման տարեթիվը: Կուսակցությունը միավորեց եգիպտական սալաֆիական շարժումները: Եգիպտոսում սալաֆիական շարժումը, որն ավելի շատ հայտնի է «ալ-Դաուա» անվամբ, սկսվել էր 1970-ականներին Ալեքսանդրիայի համալսարանում և արդեն 1980-ականներին ամրապնդել էր իր դիրքերը: Նախկինում սալաֆիականները չէին ցանկանում մասնակցել քաղաքական զարգացումներին և չմիացան «Մուսուլման եղբայրներին»: Նրանք չմասնակցեցին նաև հակաիշխանական բողոքներին, միայն Մուբարաքի պաշտոնանկությունից հետո հայտարարեցին, որ զբաղվելու են քաղաքականությամբ:

3.«Վաֆդ» նոր Կուսակցություն	Ազգային-ազատական	9.2%	2.480.391	38
4.«Եգիպտական բլոկ» միություն	Սոցիալ-ազատական	8.9%	2.402.238	34
5.«ալ-Վասաթ» միություն	Ժամանակակից իսլամիստական հայացքներ	3.7%	989.003	10
Բարեփոխումների և զարգացման» կուսակցություն	Ազատական	2.2%	604.415	9
6.«Հեղափոխությունը շարունակվում է» միություն	Ձախակողմյան	2.8%	745.863	7
7.«Եգիպտոսի ազգային» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1.6%	425.025	5
8.«Ազատության» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1.9%	514.029	4
9.«Քաղաքացիների եգիպտական» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն	0.9%	235.395	4
	(Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)			

10.«Միութենական» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	0.5%	141.382	2
11.«Պահպանողական» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1.0%	272.910	1
12.«Աշխարհի դեմոկրատական» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	0.9%	248.281	1
13.«Արդարություն» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	0.7%	184.553	1
14.«Միասնության արաբական եգիպտական» կուսակցություն	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	0.6%	149.253	1
Անկախ թեկնածուներ	Առաջադրված էին տարբեր քաղաքական ընդդիմադիր ուժերի կողմից			21

կուսակցությունն էր, որը, հավաքելով ընտրաձայների 27,8%-ը, ստորին պալատում ապահովեց 120 տեղ[31]: Այդպիսով, ստորին պալատի ընտրություններում իսլամական բոլոր ուժերը գրանցեցին բացահայտ հաղթանակ՝ ամբողջացնելով և հաստատելով իրենց ազդեցիկ հասարակական և քաղաքական դերակատարությունը[32]:

Ինչ վերաբերում է ընտրապայքարում ներգրավված ազատական-ժողովրդավարական և աշխարհիկ կողմնորոշմամբ ուժերին, ապա վերջիններս զբաղեցրին չափազանց թույլ դիրքեր. մասնավորապես ազգային-ազատական «Նոր վաֆդ» կուսակցությունը զբաղեցրեց երրորդ տեղը՝ ստորին պալատում հավաքելով ընտրաձայների ընդամենը 9,2%-ը[33]:

Ըստ էության, քաղաքական առումով խորհրդարանական ընտրությունները Եգիպտոսում կարևոր գործոն դարձան քաղաքական որակապես նոր իրադրության ձևավորման համար: Սա հանրապետական Եգիպտոսի քաղաքական պատմության մեջ դեռ նախադեպը չունեցող մի իրավիճակ էր, երբ իսլամականները թափանցիկ ընտրությունների միջոցով կարողացան ստանձնել պետության կառավարման լծակները: Հետխորհրդարանական զարգացումները Եգիպտոսում բյուրեղացրին նաև «մեկանգամյա ժողովրդավարության» գործոնը: Իսլամականները, իշխանական լծակներ ձեռք բերելով, հավասար ընտրական իրավունքների միջոցով նախաձեռնեցին այդ նույն հավասար ընտրական իրավունքների խեղաթյուրման գործընթացը: Իշխանության գալով՝ իսլամականները նպատակադրված էին հետագա ընտրություններում չեղարկելու մնացած բոլոր քաղաքական ուժերի հաղթանակի փորձերը: Տվյալ հանգամանքը Եգիպտոսում առավել ցայտուն դրսևորվեց նախագահական ընտրություններից հետո, երբ «Մուսուլման եղբայրների» կողմից առաջադրված և ընտրված Մուհամմեդ Մուրսին սկսեց երկրի աստվածապետականացման գործընթացը: ԱՄՆ-ը դրական գնահատեց ընտրական գործընթացներն ու ընտրությունների արդյունքները, քանի որ իսլամիստների հաղթանակը մեծ հաշվով համապատասխանում էր Վաշինգտոնի կողմից արաբական աշխարհի որակական նոր փոփոխությունների ընկալմանը:

Իրականում «եգիպտական հեղափոխության» ակունքներում կանգնած ազատական ուժերը, ինչու ոչ, նաև աշխարհիկ հայացքներ ունեցող Զինվորականների բարձրագույն խորհուրդը ամերիկյան վարչակազմից չէր սպասում նման արձագանքի: Վերոնշյալ ուժերը կարծում էին, որ Վաշինգտոնին մեծ հաշվով ձեռնտու էր երկրում նոր հետադիմական քաղաքական համակարգի հաստատումը:

Խորհրդարանի վերին պալատի՝ Շուրայի խորհրդի ընտրությունները կայացան երկու փուլով՝ 2012թ. հունվարի 29-30-ը և փետրվարի 21-22-ը[34]: Ստորև ներկայացվող աղյուսակում զետեղված են Եգիպտոսում Խորհրդարանի վերին պալատի ընտրությունների արդյունքները[35] (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Եգիպտոսի Խորհրդարանի վերին պալատի ընտրությունների արդյունքները (2012 թ. հունվար-փետրվար)				
Կուսակցություն	Գաղափարական հենք	Արդյունքները տոկոսներով	Բացարձակ ցուցանիշների արդյունքները	Ընդամենը տեղեր
1.«Դեմոկրատական դաշինք հանուն Եգիպտոսի» («Ազատության կուսակցություն» գլխավորությամբ)	Իսլամիստական «Մուսուլման եղբայրներ»	45,04%	2 894 922	105

[31] Հետաքրքրական է, որ դեռ 2005 թ. «Մուսուլման եղբայրների» ներկայացուցիչներն Ազգային ժողովի ընտրություններում, հանդես գալով որպես անկախ թեկնածուներ, կարողացան հավաքել ընտրողների ձայների 20%-ը՝ ձևավորելով Եգիպտական Ազգային ժողովի ամենախոշոր խմբակցություններից մեկը:

[32] Տե՛ս Carnegie endowment for international peace, 22.01.2015, http://carnegieendowment.org/2015/01/22/2012-egyptian-parliamentary-elections-pub-58800

[33] Տե՛ս Muslim Brotherhood tops Egyptian poll result, Al Jazira, 22.01.2012, http://www.aljazeera.com/news/middleeast/2012/01/201212112595858026 4.html

[34] Տե՛ս Final Report of the Carter Center, նշվ. աշխ.:

[35] Նույն տեղում:

2.«Իսլամիստական բլոկ»՝ «ան-Նուր» կուսակցության գլխավորությամբ	Իսլամիստական-սալաֆիական	28,63%	1 840 014	45
3.«Նոր Վաֆդ»	Ազգային-ազատական	8,45%	543 417	14
4.«Եգիպտական բլոկ»	Սոցիալ-ազատական	5,43%	348 957	8
5.«Ազատության կուսակցություն»	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1,32%	84 936	3
6.«Աշխարհի ժողովրդավարական կուսակցություն»	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1,48%	95 273	1
Անկախ թեկնածուներ	Առաջադրված ընդդիմադիր ուժերի կողմից			90

Փաստորեն Վերին պալատի ընտրություններում ևս իսլամական ուժերը համոզիչ հաղթանակ տարան՝ մեծամասնություն կազմելով Շուրայի խորհրդում[36]: Եգիպտոսում իսլամականներն առաջին անգամ ժողովրդավարական ընտրությունների արդյունքում կարողացան զբաղեցնել պատգամավորական տեղերի մեծամասնությունը Խորհրդարանի թե՛ ստորին և թե՛ վերին պալատներում: Սակայն դեպքերի զարգացման հետագա ընթացքը ցույց տվեց, որ իշխանության լծակների մոտ գտնվող զինվորականությունն ամենևին էլ չէր ցանկանում իր դիրքերը զիջել իսլամականներին: Հենց այդ պատճառով էլ 2012 թ. հունիսի 14-ին Եգիպտոսի Գերագույն սահմանադրա-

[36] Исламисты выиграли выборы в верхнюю палату Египта, 26.02.2018, https://news.tut.by/world/276124.html

[illegible] դատարանը որոշեց, որ Խորհրդարանի վերին պալատի [illegible] անցել են սահմանադրության խախտմամբ, և [illegible] մեկ երրորդն անօրինական էր ընտրված: Մասնավորապես հանրային դժգոհություն չառաջացնելու նպատակով դատարանն իր որոշումը փորձեց հիմնավորել պատճառաբանությամբ, որ ընտրությունների ընթացակարգը չի համապատասխանել եգիպտական ընտրական համակարգի սկզբունքներին[37]: Այսպիսով, օրենքի ոչ կատարյալ լինելու արդյունքում անկախ թեկնածուները չկարողացան զբաղեցնել համապատասխան քանակությամբ աթոռներ Խորհրդարանում:

Հետաքրքրական է, որ Վերին պալատի ընտրություններից [illegible] դատարանի որոշմամբ չեղարկվեց ընտրություններին Մուբարաքի ղեկավարած «Ազգային դեմոկրատական» կուսակցության մասնակցության նախկինում ընդունված արգելքը, ինչի արդյունքում մուբարաքյան իշխանության հետ կապ ունեցող քաղաքական որոշ խմբավորումների հնարավորություն տրվեց մասնակցելու ընտրություններին: Որպես հիմնավորում նշվում էր այն փաստարկը, որ տվյալ արգելքը սահմանափակում էր քաղաքացիների ազատ ընտրության իրավունքը և խախտում էր ժողովրդավարական երկրում հավասար քաղաքական մասնակցություն ունենալու սկզբունքը:

Փորձագետների մի մասի գնահատմամբ ընտրությունների արդյունքների չեղարկումն անվստահության միջավայր ձևավորեց արդեն իսկ խարխլված եգիպտական ընտրական [illegible]ի նկատմամբ:

Վերին պալատի ընտրությունների արդյունքների չեղարկման անվստահության մթնոլորտ ձևավորեց եգիպտական հասարակության մեջ, որը, համընկնելով նախագահական ընտրության ակտիվ շրջանի հետ, բացասական ազդեցություն [illegible] նվազեցնելով նախագահական ընտրություններում քաղաքացիների մասնակցային ակտիվությունը[38]: Պետք է փաստել, որ խորհրդարանական ընտրությունները Եգիպտոսում

[37] Brotherhood's Fahmy named Egypt Shura Council speaker, Ahramonline, [illegible] 2012, http://english.ahram.org.eg/NewsContent/1/64/35602/Egypt/Politics-Brotherhoods-Fahmy-named-Egypt-Shura-Council-speak.aspx

[38] Игнорируйте фальсификацию выборов в Египте, 24.01.2012, http://ru.danielpipes.org/10571/ne-ignorirujte-falsifikatsiyu-vyborov-v-egipte

2.«Իսլամիստական բլոկ»՝ «ան-Նուր» կուսակցության գլխավորությամբ	Իսլամիստական-սալաֆիական	28,63%	1 840 014	45
3.«Նոր Վաֆդ»	Ազգային-ազատական	8,45%	543 417	14
4.«Եգիպտական բլոկ»	Սոցիալ-ազատական	5,43%	348 957	8
5.«Ազատության կուսակցություն»	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1,32%	84 936	3
6.«Աշխարհի ժողովրդավարական կուսակցություն»	Կենտրոնամետ ավտորիտար կուսակցություն (Ազգային դեմոկրատական կուսակցության ճյուղավորում)	1,48%	95 273	1
Անկախ թեկնածուներ	Առաջադրված ընդդիմադիր ուժերի կողմից			90

Փաստորեն Վերին պալատի ընտրություններում ևս իսլամական ուժերը համոզիչ հաղթանակ տարան՝ մեծամասնություն կազմելով Շուրայի խորհրդում[36]: Եգիպտոսում իսլամականներն առաջին անգամ ժողովրդավարական ընտրությունների արդյունքում կարողացան զբաղեցնել պատգամավորական տեղերի մեծամասնությունը Խորհրդարանի թե՛ ստորին և թե՛ վերին պալատներում: Սակայն դեպքերի զարգացման հետագա ընթացքը ցույց տվեց, որ իշխանության լծակների մոտ գտնվող զինվորականությունն ամենևին էլ չէր ցանկանում իր դիրքերը զիջել իսլամականներին: Հենց այդ պատճառով էլ 2012 թ. հունիսի 14-ին Եգիպտոսի Գերագույն սահմանադրա-

[36] Исламисты выиграли выборы в верхнюю палату Египта, 26.02.2018, https://news.tut.by/world/276124.html

կան դատարանը որոշեց, որ Խորհրդարանի վերին պալատի ընտրություններն անցել են սահմանադրության խախտմամբ, և հաղթողների մեկ երրորդն անօրինական էր ընտրված: Մասնավորապես հանրային դժգոհություն չառաջացնելու նպատակով դատարանն իր որոշումը փորձեց հիմնավորել պատճառաբանությամբ, որ ընտրությունների ընթացակարգը չի համապատասխանել եգիպտական ընտրական համակարգի սկզբունքներին[37]: Այսպիսով, օրենքի ոչ կատարյալ լինելու արդյունքում անկախ թեկնածուները չկարողացան զբաղեցնել համապատասխան քանակությամբ աթոռներ Խորհրդարանում:

Հատկանշական է, որ Վերին պալատի ընտրություններից առաջ դատարանի որոշմամբ չեղարկվեց ընտրություններին Մուբարաքի ղեկավարած «Ազգային դեմոկրատական» կուսակցության մասնակցության նախկինում ընդունված արգելքը, ինչի արդյունքում մուբարաքյան իշխանության հետ կապ ունեցող քաղաքական որոշ խմբավորումների հնարավորություն տրվեց մասնակցելու ընտրություններին: Որպես հիմնավորում նշվում էր այն փաստարկը, որ տվյալ արգելքը սահմանափակում էր քաղաքացիների ազատ ընտրության իրավունքը և խախտում էր ժողովրդավարական երկրում հավասար քաղաքական մասնակցություն ունենալու սկզբունքը:

Փորձագետների մի մասի գնահատմամբ ընտրությունների արդյունքների չեղարկումն անվստահության միջավայր ձեվավորեց արդեն իսկ խարխլված եգիպտական ընտրական ինստիտուտի նկատմամբ:

Վերին պալատի ընտրությունների արդյունքների չեղարկումն անվստահության մթնոլորտ ձևավորեց եգիպտական հասարակության մեջ, որը, համընկնելով նախագահական ընտրարշավի ակտիվ շրջանի հետ, բացասական ազդեցություն ունեցավ՝ նվազեցնելով նախագահական ընտրություններում բնակչության մասնակցային ակտիվությունը[38]: Պետք է փաստել, որ խորհրդարանական ընտրությունները Եգիպտոսում

[37] Brotherhood's Fahmy named Egypt Shura Council speaker, Ahramonline, 28,02,2018, http://english.ahram.org.eg/NewsContent/1/64/35602/Egypt/Politics-/Brotherhoods-Fahmy-named-Egypt-Shura-Council-speak.aspx

[38] Տե՛ս Не игнорируйте фальсификацию выборов в Египте, 24.01.2012, http://ru.danielpipes.org/10571/ne-ignorirujte-falsifikatsiyu-vyborov-v-egipte

ընդգծեցին երկակի միտումները: Մի կողմից՝ ընտրությունները հաստատեցին իսլամական շարժումների և «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության բարձր վարկանիշն ու հեղինակությունը բնակչության մեծամասնության շրջանում, մյուս կողմից՝ ժամանակի հեռանկարում հասկանալի դարձավ, որ ազատական ժողովրդավարական գաղափարները որպես հենքային արժեք դեռևս ընկալելի չեն եգիպտական հասարակության լայն զանգվածների համար: Միևնույն ժամանակ իսլամիստների հաղթարշավը խորհրդարանական ընտրություններում, իսկ հետո նաև «Մուսուլման եղբայրներ»-ի թեկնածու Մուհամմեդ Մուրսիի՝ Եգիպտոսի նախագահ ընտրվելը՝ պայմանավորեցին երկրի սրընթացը դեպի աստվածապետական կարգերի հաստատում:

Սա այն առանցքային պատճառն էր, որ խորհրդարանական ընտրություններին հաջորդած նախագահական ընտրություններից հետո «եգիպտական հեղափոխական ուժերը» երկրի պետական կառավարման մոդելի հարցում դարձյալ նախընտրեցին զինվորական վերնախավի վարչակարգը, որի վառ ապացույցն էր Աբդել Ֆաթահ աս-Սիսիի կողմից իրականացված 2013 թ. հուլիսի 3-ի ռազմական հեղաշրջումը:

Եզրակացություն

Վերլուծելով և ի մի բերելով Եգիպտոսում 2011-2012 թթ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները՝ կարելի է արձանագրել, որ երկրում ազգայնական գաղափարների ճգնաժամը ստեղծեց ազատ, այլընտրանքային ընտրություն կատարելու բացառիկ հնարավորություն՝ հոգուտ իսլամական շարժումների: Օրինակ, երբեմնի գաղափարական շարժիչ ուժ հանդիսացող «նասերականությունը» արդեն տևական ժամանակ էր, ինչ կորցրել էր իր արդյունավետությունը, իսկ նրա վերապրուկները չէին կարող այլևս իշխանության և ժողովրդի միջև համախմբման գործոն լինել:

Չափազանց հետաքրքրական է այն հանգամանքը, որ չնայած հակամուբարաքյան ցույցերի առաջատարն ազատական-ժողովրդավարական ուժերն էին, այդուամենայնիվ «եգիպտական փողոցը» և մասնավորապես գյուղաբնակ զանգվածը նախընտրեցին իշխանության լծակների մոտ տեսնել իսլամականներին, ի դեմս՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության, որը հաղթանակ տարավ թե՛ խորհրդարանական և թե՛ դրանց հաջորդած նախագահական ընտրություններում:

Արդարացի լինելու համար պետք է փաստել, որ իսլամականների հաղթանակին մեծապես նպաստեց ընդհանուր բնակչության գյուղաբնակ ընտրազանգվածի թվաքանակի գերակայությունը՝ ի հակակշիռ եգիպտական հասարակության սակավաթիվ կրթված հատվածի: Վերջինս հստակ գիտակցում էր, որ ընտրությունների արդյունքում իշխանության եկած իսլամական ուժերը տանելու էին պետական համակարգի իսլամականացմանը, ինչն ըստ էության կհանգեցներ Եգիպտոսում «արաբական գարնան» հիմնական հաղթանակների կորստին, որոնք ձեռք էին բերվել եգիպտական հասարակության առավել կրթված և ազատական գաղափարներով տոգորված հատվածի կողմից:

Խորհրդարանական և նրանց հաջորդած նախագահական ընտրությունները Եգիպտոսում ի ցույց դրեցին այն իրողությունը, որ երկրում առկա են իրարամերժ երկու հիմնական բևեռներ՝ ազգայնական գաղափարներով առաջնորդվող զինվորականները և աստվածապետություն կառուցելու ջատագովները՝ իսլամականները: Լիբերալ-ժողովրդավարական հայացքներ ունեցող ուժերը թեպետև կանգնած էին եգիպտական հեղափոխության ակունքներում, այդուամենայնիվ հետհեղափոխական երկու հիմնական իրադարձություններում՝ խորհրդարանական և նախագահական ընտրություններում, պարտվեցին:

Փաստորեն «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը XX դարի սկզբից ծավալած իր ընդդիմադիր գործունեությամբ և աշխարհընկալմամբ կարողացավ ոչ միայն զբաղեցնել պետությունում առկա գաղափարական վակուումը, այլև յուրովի հասունացրեց եգիպտական հասարակությունը «ցասման» օրվան, իսկ որոշ առումով նաև «քաղաքացիական զարթոնքի» միտման գործոն դարձավ:

Այսպիսով, «արաբական գարնան» արդյունքում սկսվեց աշխարհիկ բռնապետական վարչակարգի փոխարինումը կրո-

նական՝ աստվածապետական բռնապետական կարգերով: 2012 թ. «քաղաքագիտական մանրադիտակը» հստակ ցույց էր տալիս, որ «Մուսուլման եղբայրների» հաղթանակը և նրանց կողմից օրենսդիր և գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն սահմանելը մոտ ապագայում կարող էին հանգեցնել Եգիպտոսի քաղաքական համակարգի իսլամականացմանը, ինչը չէր կարող հանդուրժել ազգայնական-զինվորական վերնախավը: Արդեն այսօր այլևս իրականություն է Եգիպտոսում ազգայնական զինվորականների՝ իշխանության ղեկի մոտ գտնվելու հանգամանքը:

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ՎԱՀԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՍԱՈՒԴԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱԴԻՆԱՅԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Ներածություն

1960-ականներից Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության իսլամական ուղղության ակտիվացումը, որն արտահայտվեց վահաբականության արտահանմամբ, իր ազդեցությունն ունեցավ Մերձավոր Արևելքում և դրա սահմաններից դուրս, այդ թվում՝ Արևմուտքում, մուսուլմանական հանրույթներում ընթացող հասարակական և քաղաքական գործընթացների ձևավորման վրա: Սալաֆիական-վահաբական ուղղությունների տարածման հետևանքով իսլամական շրջանակներում ընդլայնվեցին կրոնասիրության ու կրոնական պահպանողականության ծավալները, ակտիվացան քաղաքական իսլամի շրջանակներում գործող կրոնաքաղաքական վերածննդի շարժումները, իսկ հասարակական գիտակցությանը շատ դեպքերում բնորոշ դարձավ կրոնականությունը: Թագավորության իշխող վերնախավը, որն էապես կարևորում է վահաբականության նշանակությունը պետության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ, մինչ օրս հարազատ է մնում քաղաքական այն պայմանավորվածությանը, որը ձեռք բերվեց դեռևս XVIII դարում:

Սաուդյան Արաբիան՝ կրոնապետություն. վահաբականության նշանակությունը

1744 թ. սաուդյան դինաստիայի հիմնադիր Մուհամմադ իբն Սաուդի (1710-1765 թթ.) դաշինքը վահաբականության հիմնադիր, կրոնական քարոզիչ Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահհաբի (1703-1792 թթ.) հետ հիմք դարձավ առաջին սաուդա-վա-

հաբական պետության՝ Դիրիայի Էմիրության (1744-1818 թթ.)[1], իսկ հետագայում ավելի ուշ՝ 1932 թ., Սաուդյան Արաբիայի Թագավորության (ՍԱԹ) ստեղծման համար[2]:

Սաուդյան Արաբիայի պետական գաղափարախոսության հիմքում ընկած է սուննի իսլամի պահպանողական ուղղություն համարվող վահաբականությունը[3]: Այն շատ դեպքերում նույնական է սալաֆիականության հետ[4]:

Գաղափարական առումով թե՛ սալաֆիականությունը, թե՛ վահաբականությունը կոչ են անում վերադարձ դեպի վաղ իսլամի ակունքները՝ իսլամի պատմության ոսկեդարը համարվող Մադինայի շրջանը (622-632 թթ.): Հենց այս փուլում ձևավորվեց Մուհամմադ մարգարեի կողմից ղեկավարվող առաջին մուսուլմանական համայնքը՝ Ումման: Իսլամի պատմության գրեթե բոլոր ժամանակներում, այդ թվում՝ սալաֆիականության շրջանակներում, ի հայտ են եկել իսլամական կրոնական և կրոնաքաղաքական բազմաթիվ շարժումներ, որոնք կոչ են արել վերադառնալ վաղ իսլամի ակունքներին: Դրանցից էր նաև վահաբականությունը, որը, սկիզբ առնելով որպես իսլամական վերածննդի շարժում, ըստ էության, սալաֆիականության սաուդական մեկնաբանությունն է: Անհանդուրժող լինելով ամեն տեսակ նորարարության հարցում՝ վահաբականությունը հակված է շարիաթի նորմերի ճշգրիտ կատարմանը: Այս

[1] Հարկ է նշել, որ Մուհամմադ իբն Սաուդի որդու և Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահհաբի դստեր ամուսնությունն ավելի ամրապնդեց նշված քաղաքական դաշինքը, որն ուժի մեջ է մինչ օրս:

[2] Մանրամասն տե՛ս Rasheed Madawi, History of Saudi Arabia, Cambridge University Press, 2010.

[3] Williams R., Salafism, Wahhabism, and the Definition of Sunni Islam, Augustan College, Rock Island Illinois, http://digitalcommons.augustana.edu.

[4] Իսլամում սալաֆիաններ ասելով նկատի են առնվում այն հավատացյալները կամ ճշմարիտ միաստվածականները («ահլ ալ-թաուհիդ», «մուվահիդուն» և այլն), ովքեր հետևում են «բարեպաշտ նախնիների» («աս-սալաֆ աս-սալիհ») օրինակելի վարքին: Սալաֆիականությունը մերժում է վտանգավոր և անընդունելի ամեն տեսակի նորարարություն («բիդա»), ինչը համարվում է անհավատություն («քուֆր») կամ բազմաստվածություն («շիրք»), իսկ այն իրացնողները ենթակա են միանշանակ մերժման և օտարման, նույնիսկ մահապատժի: Տե՛ս Joas Wagemakers, Salafism, Oxford Research Encyclopedia, http://religion.oxfordre.com.

տեսանկյունից հիմք են ընդունվում առաջին հերթին Ղուրանը և մարգարեի սուննան, իսկ սուննի իսլամի կրոնահիրավական դպրոցները (մազհաբներ), մասնավորապես հանբալիականությունը, դիտարկվում են կարևոր, բայց ոչ առաջնահերթ[5]:

Վահաբականությունը շատ դեպքերում համարվում է աղանդ, քանի որ անհանդուրժող է այն մուսուլմանների նկատմամբ, ովքեր վահաբականության տեսանկյունից խախտում են իսլամի սկզբունքները: Փաստ է, որ Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահհաբը փաստորեն հանդես եկավ սուննի իսլամի տիրապետող՝ ուղղափառ ձևաչափի դեմ՝ կոչ անելով «մաքրազտել» այն[6]:

Սաուդական պետության ստեղծումից հետո վահաբականությունը վճռորոշ դեր խաղաց թագավորության թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության ձևավորման հարցում: Իշխող ընտրանին[7] երկիրը կառավարում է Աբդ Ալ-Վահհաբի հետնորդների՝ վահաբական ուլամայի իշխող թևի հետ՝ դաշնակցելով Ալ Աշ-Շեյխ ընտանիքի հետ, որը մասնակցում է քաղաքական որոշումների ընդունմանը[8]: Բացի կրոնական ոլորտից, Ալ Աշ-Շեյխ ընտանիքը վերահսկում է մի շարք ոլորտներ՝ կապված արդարադատության, կրթության, սպորտի, մարդու իրավունքների, գենդերային խնդիրների հետ և այլն: Հասարակության բարոյական նորմերի վերահսկողության գործընթացը նույնպես գտնվում է վահաբականության ուշադրության կենտ-

[5] Zargar C., The Hanbali and Wahhabi Schools of Thoughts as Observed Through the Case of Ziyarah, https://etd.ohiolink.edu

[6] Васильев А., Пуритане ислама. Ваххабизм и первое государство Саудидов в Аравии (1744-1745-1818), М., 1967, стр. 105.

[7] ՍԱԹ-ում իշխանությունն ամբողջովին կենտրոնացած է Ալ-Սաուդ թագավորական ընտանիքի ձեռքում: Իշխանական համակարգի կենտրոնական դեմքը թագավորն է, որը ղեկավարում է դատական, գործադիր և օրենսդիր ոլորտները, նաև զինված ուժերի գլխավոր հրամանատարն է: Երկրի սահմանադրության մեջ, որը հռչակվեց 1992 թ., ամրագրված է, որ պետությունը պետք է կառավարեն հիմնադրի՝ Աբդ Ալ-Ազիզ բին Սաուդի որդիները և որդիների որդիները: Տե՛ս Saudi Arabia's Constitution of 1992 with amendments through 2005, Article 5/b, https://www.constituteproject.org /constitution/Saudi_Arabia_2005.pdf.

[8] Obaid N., The Power of Saudi Arabia's Islamic Leaders, Middle East Quarterly, September, 1999, vol. 6, no. 3, p. 51.

րոնում: Սաուդյան Արաբիայի Թագավորությունն ըստ էության կրոնապետություն է: Քաղաքական և կրոնական ինստիտուտները փաստորեն սերտաճած են: Ղուրանը և մարգարեի Սունան ծառայում են որպես սահմանադրություն[9]:

Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության իսլամական ուղղության ձևավորումը

1960-1970-ականներին նավթային եկամուտներից ստացված ֆինանսական արագընթաց և աննախադեպ հաջողությունները նպաստեցին, որ Սաուդյան Արաբիայի Թագավորությունը սառը պատերազմի տարիներին և դրանից հետո էլ իրականացնի վահաբականության արտահանումն արտաքին աշխարհ (որպես soft power)՝ նպատակ ունենալով իսլամի այդ ուղղությունը դարձնել առաջատար ուժ թե՛ իսլամական աշխարհում, թե՛ դրա սահմաններից դուրս: Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքական ձգտումներին էականորեն նպաստեց մասնավորապես ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի աջակցությունը: Նավթային հսկայական պաշարների շնորհիվ թագավորությունը հայտնվեց Վաշինգտոնի հետաքրքրությունների և քաղաքական գործընկերության ոլորտում: Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիայի հետ հարաբերությունների սերտացմանը, այն շոշափելի էր արդեն թագավորության հիմնադրման շրջանում վերջինիս ցուցաբերած աջակցության շնորհիվ[10]:

Երկրորդ աշխարհամարտից հետո միջազգային հարաբերություններում շարունակվում էր պահպանվել լարվածությունը աշխարհաքաղաքական երկու հիմնական դաշինքների միջև: Արդեն 1950-ականների վերջերին դեպի ԽՍՀՄ կողմնորոշված արաբական երկրների քաղաքական դիրքորոշումը փոխելու և առհասարակ Մերձավոր Արևելքում իր ազդեցությունն ամրապնդելու նպատակով ԱՄՆ-ը առաջ քաշեց «Էյզենհաուերի

[9] Այս իրողությունն ամրագրված է 1992 թ. սահմանադրության մեջ: Տե՛ս Saudi Arabia's Constitution of 1992 with amendments through 2005, Article 1, https://www.constituteproject.org/constitution/Saudi_Arabia_2005.pdf.

[10] Մանրամասն տե՛ս Jeffrey R. Macris, The Politics and Security of the Gulf. Anglo-American hegemony and the shaping of region, Routledge, 2010.

հայեցակարգը»[11]: Ըստ այդմ, Մերձավոր Արևելքի այն պետությունները, որոնք կցանկանային պաշտպանել իրենց «կոմունիզմի ծավալապաշտությունից»[12], կստանային ամերիկյան կառավարության քաղաքական ու տնտեսական աջակցությունը[13]:

Դեպի ԽՍՀՄ-ը կողմնորոշված պետություններից ամենահանգուցայինը Եգիպտոսն էր, որի նախագահ Գամալ Աբդել Նասերի (1954-1970) արաբական աշխարհիկ քաղաքական տեսությունները, այդ թվում՝ արաբական ազգայնականության, միասնության ու համերաշխության գաղափարները, արդեն 1950-ականներին, աստիճանաբար, զգալի տարածում ստացան Մերձավոր Արևելքում: Այս համատեքստում իսլամի հայրենիք համարվող Սաուդյան Արաբիային, ի դեմս Սաուդ թագավորի (1953-1964), մտահոգում էր տարածաշրջանում Էռ-Ռիյադի ոչ այդքան առաջնային դիրքը: Պատահական չէ, որ ՍԱԹ-ի և Եգիպտոսի միջև ձևավորվեց սուր մրցակցություն տարածաշրջանում ազդեցության լծակների համար: Սաուդական իշխող ընտանիքն ամերիկյան և բրիտանական կառավարությունների աջակցությամբ համարաբականությանը որպես այլընտրանք առաջ քաշեց միջազգային իսլամական միասնության և համերաշխության գաղափարները[14]:

Սաուդյան Արաբիան սկսեց հանդես գալ նաև իսլամական արժեքների պահպանման, իսլամական աստվածաբանության տեսական հարցերը ժամանակակից աշխարհում հիմնավորելու և իսլամական աշխարհին հուզող խնդիրները համակարգելու հավակնությամբ: Աստիճանաբար բյուրեղացավ նաև վահաբական քարոզչության (դաուվա) օրակարգը, որի դրսևորումներից դարձան սաուդական ֆինանսավորմամբ ստեղծված

[11] The Eisenhower Doctrine, 1957, https://www.eisenhower.archives.gov/education/bsa/citizenship_merit_badge/speeches_national_historical_importance/eisenhower_doctrine.pdf.

[12] Soviet Threat in Middle East, Documents from CQ Research Archives, http://library.cqpress.com.

[13] Հարությունյան Լ., Լիբանանը 1958-1975 թվականներին, Եր., 2007, էջ 78, 79:

[14] Vassiliev A., King Faisal of Saudi Arabia: Personality, Faith and Times, Saqi Books, 2012, pp. 333-334.

կրթական հաստատություններում երիտասարդ մուսուլմանների ուսումնառության կազմակերպումը, աշխարհի տարբեր անկյուններում մզկիթների շինարարությունը, ինչպես նաև իսլամական կենտրոնների ստեղծումը՝ վահաբական իմամների և քարոզիչների ներգրավմամբ: Բացի դրանից, Սաուդյան Արաբիայի Թագավորությունը լուրջ դերակատարություն ունեցավ վահաբականության-սալաֆիականության քողի տակ հանդես եկող միջազգային մի շարք բարեգործական և քարոզչական կազմակերպությունների ստեղծման և ֆինանսավորման հարցում: Դրանցից են Միջազգային իսլամական բարեգործական կազմակերպությունը (Ջիդդա), Մուսուլման երիտասարդների միջազգային ասամբլեան (Էռ-Ռիյադ), Իսլամական աշխարհի լիգան (Մեքքա) այլն[15]:

Սաուդյան Արաբիայի ջանքերով հիմնվեց նաև իսլամական աշխարհի կրոնաքաղաքական ամենամեծ կառույցը՝ Իսլամական համագործակցություն կազմակերպությունը (Ջիդդա):

Մադինայի իսլամական համալսարանը, վահաբականության կրթական հարթակ

Սաուդական հովանավորությամբ գործող քարոզչական և կրթական կազմակերպությունների մեջ առանձնահատուկ տեղ ունի Մադինայի իսլամական համալսարանը (ՄԻՀ), որտեղ ուսանողների կրթությունը և կեցությունը լիովին հովանավորում է Սաուդյան Արաբիայի կառավարությունը: Համալսարանը ստեղծվեց Սաուդ թագավորի հրամանագրով 1961 թ., երբ պետության համար բավական բարդ ժամանակաշրջան էր. թագավորությունն առճակատման մեջ էր Եգիպտոսի հետ: Ըստ էության Մադինայի իսլամական համալսարանը ստեղծվեց Կահիրեում գործող Ալ-Ազհարին որպես մրցակից կրթա-

[15] 2001 թ. Նյու Յորքի ահաբեկչությունից հետո պարզ դարձավ, որ սաուդական հովանավորություն ունեցող միջազգային մի շարք կազմակերպություններ տարիներ շարունակ համագործակցել են ահաբեկչության մեջ մեղադրվող կառույցների հետ՝ շատ դեպքերում հովանավորելով և ֆինանսավորելով դրանց: Տե՛ս Saudi Arabia: Terrorist Financing Issues, CRS Report for Congress, https://fas.org/sgp/crs/terror/RL32499.pdf.

կան հաստատություն: Սաուդյան Արաբիան օգտվեց նաև այն հանգամանքից, որ այդ շրջանում Գամալ Աբդել Նասերի քաղաքականությունն Ալ-Ազհարի հարցում խիստ քննադատության առիթ էր դարձել: Խնդիրն այն է, որ նախագահ Նասերը կարգադրել էր Ալ-Ազհարի կառավարումը, այդ թվում՝ բյուջեի տնօրինումը, փոխանցել պետության վերահսկողությանը, ինչը լուրջ դժգոհություն էր առաջացրել առաջին հերթին Ալ-Ազհարում[16]:

Հատկանշական է, որ ՄԻՀ-ի կանոնադրության մեջ համալսարանի նպատակները նույնպես ձևակերպված էին կրոնական տրամաբանությամբ: Նշվում էր, որ համալսարանի շրջանավարտները պետք է լինեն «...կրոնի քարոզիչներ և ճշմարտության հետևորդներ, դասախոսություններ կարդան և գրավոր հակադարձեն աթեիստներին և պաշտպանեն կրոնի տարածքը և կարգավորեն այն խնդիրները, որոնց բախվում են մուսուլմաններն իրենց կրոնական և երկրային գործերում»[17]:

Համալսարանի հիմքում փաստացի ընկած է քարոզչության գաղափարը: Այսինքն՝ շրջանավարտները պետք է անպայման զբաղվեն դաուվայով: Պատահական չէ, որ համալսարանը մեծ տեղ է տալիս օտար լեզուների, մասնավորապես անգլերենի դասավանդմանը: ՄԻՀ-ի կանոնադրության մեջ նշված է, որ եվրոպական լեզուների ուսուցումն արդարացված է իսլամական դաուվայի իրականացման անհրաժեշտությամբ[18]: Այս խնդիրը նույնիսկ քննարկվել է տեղական մամուլում: «Ալ-Մադինա ալ-մունավարա» թերթը 1961 թ. համարներից մեկում գրում է, որ ուսանողները պետք է սովորեն օտար լեզուներ, որպեսզի կարողանան թե՛ քարոզչությամբ զբաղվել և թե՛ բանավիճել քրիստոնյա միսիոներների հետ[19]:

[16] Nathan Brown, Mariam Ghanem, The Battle over Al-Azhar, May 31, 2017, http://carnegie-mec.org/diwan/70103.

[17] Մադինայի իսլամական համալսարանի կանոնադրություն, հոդված 1, ըստ՝ M. Farquhar, Expanding the Wahhabi Mission: Saudi Arabia, the Islamic University of Medina and the Transnational Religious Economy, the London School of Economics and Political Science, 2013, p. 192.

[18] Նույն տեղում, էջ 191:

[19] Mana Isma'il, Al-Lughat al-Ajnabiyya fi Jami'at al-Madina al-Munawwara al-Islamiyya, al-Madina al-Munawwara, 07.07. 1961 (Մանա Իսմայիլ, Օտար

Մադինայի իսլամական համալսարանը ստեղծվել էր՝ աջակցելու իսլամի վահաբական-սալաֆիական մեկնաբանությանը: 1971 թ. ՄԻՀ-ի առաջին ռեկտոր, խիստ պահպանողական հայացքներով հայտնի մուսուլման աստվածաբան Մուհամմադ Իբն Բազը, խոսելով համալսարանի նպատակների մասին, նշում էր, որ համալսարանը պետք է աջակցի իսլամի ճշմարիտ, համապարփակ ընկալմանը, այնպես, ինչպես հասկացվել է «սալահ ալ-սալիհի»՝ առաջին մուսուլմանների կողմից, ինչպես նաև ձգտի ձերբազատել իսլամը սնահավատություններից, աղճատումներից, ստից, նորարարություններից, որոնք, ինչպես նշվում էր, իսլամ են ներթափանցել կրոնին անգիտակ մարդկանց և իսլամի թշնամիների կողմից[20]:

Այս տեսանկյունից համալսարանի դերը մուսուլման ուսանողների համար պետք է լիներ լուսավորչականությունը և իսլամի նկատմամբ նոր մոտեցումների որդեգրումը, այսինքն՝ նորադարձությունը դեպի սալաֆիականություն-վահաբականություն:

1970-ականների վերջերին ՄԻՀ-ի նախագահ Աբդալլահ Ալ-Զեյիդը համալսարանի ամսագրում, վերստին անդրադառնալով ՄԻՀ-ի ստեղծման նպատակներին, նշում է, թե այն խնդիր ունի արտադրել հոգևորականություն (ուլամա), որը կհետևի իր բարեպաշտ նախնիների բացած արահետին և հեռու կմնա սխալվելուց: Ըստ այդմ, ՄԻՀ-ը վերադարձնում է շրջանավարտներին իրենց երկրներ, որպեսզի այնտեղ նրանք օգնեն մուսուլմաններին, որոնցից շատերը «մոլորության մեջ են հայտնվել»[21]:

Ակնհայտ է, որ Մադինայի իսլամական համալսարանն ի սկզբանե ստեղծվել էր որպես միսիոներական կառույց, որտեղ հղկվում ու մշակվում էր ուսանողների վահաբական ինքնությունը, հիմնավորվում էր սալաֆիական-վահաբական խոսույթը:

ՄԻՀ-ը նախատեսված է սաուդցի և ոչ սաուդցի ուսանողների համար[22]: Ուսումնական ծրագրի հիմքում ընկած է սունիի իսլամի ուսումնասիրությունը, ինչպես արդեն նշեցինք՝ սալաֆիական-վահաբական շեշտադրմամբ: Նշվում է, որ համալսարանը հավատարիմ է իր գլոբալ դերին՝ անժամկետ տարածելու «իսլամի ուղերձը»: Հատկանշական է, որ, բացի ուսումնառությունից, Սաուդյան Արաբիայում որոշակի կրոնամշակութային կենսատարածքում ապրելու ընթացքում ՄԻՀ-ում ուսանած երիտասարդները ձեռք են բերում սալաֆիական-վահաբական կողմնորոշում: Համալսարանում խորությամբ դասավանդվում են Ղուրան, ղուրանագիտություն, հադիսներ, հադիսագիտություն, ֆիկհ, ֆիկհի հիմունքներ, շարիաթ, իսլամագիտություն, արաբերենի քերականություն, հռետորություն, գրականություն, ճարտասանություն (բալաղա), գրչագրություն, արաբա-մուսուլմանական երկրների ու իսլամի պատմություն և այլն[23]:

Գործող ֆակուլտետներից են՝ Շարիաթի, Դաուվայի և աստվածաբանության, Ղուրանի և իսլամագիտության, Արաբերենի ուսումնասիրության, Հադիսների և իսլամագիտության, Ոչ լեզվակիրների արաբերենի ուսուցման ինստիտուտ: Վերջին շրջանում ստեղծվել են նաև գիտության, ինժեներիայի, տեղեկատվական համակարգերի, բժշկության և դեղագործության ֆակուլտետներ[24]:

Մինչև 1990-ականների սկիզբը Մադինայի իսլամական համալսարանի աշխատակազմի հիմնական մասը, այդ թվում՝ դասախոսական, ոչ սաուդցիներ էին, սակայն 1990-ականներից հետո սկսվեց սաուդականացման գործընթաց: Համալսա-

---

լեզուները Մադինայի իսլամական համալսարանում, ալ-Մադինա ալ-մունավարա, հուլիսի 7, 1961 թ., արաբերեն):

[20] Dalil al-Jami'a al-Islamiyya fi al-Madina al-Munawwara, Medina, 1971, էջ 9-11 (Մադինայի իսլամական համալսարանի ուղեցույց, արաբերեն):

[21] Majallat al-Jami'a al-Islamiyya bi-l-Madina al-Munawwara, No. 45, էջ 139 (արաբերեն):

[22] 2014 թ. համալսարանում սովորողների մոտ 48 տոկոսը սաուդցիներ էին, 52-ը՝ ոչ սաուդցիներ: Այս համամասնությունը որոշ փոփոխություններով պահպանվում է մինչ օրս: Տե՛ս Quality Assurance System Manual of the Islamic University of Madinah, 2014, http://iu.edu.sa/uploads/files/Quality Assurance_System_Manual_of_the_Islamic_University_of_Madinah_(1).pdf, p. 4.

[23] Farquhar M., նշվ. աշխ., էջ 191:

[24] Quality Assurance System Manual of the Islamic University of Madinah, նշվ. աշխ., էջ 16-23:

րանի ղեկավարությունը կադրային արմատական փոփոխություններ իրականացրեց: Արդեն 1990-ականների սկզբներին համալսարանի դասախոսական անձնակազմի 385-ից 336-ը սաուդցիներ էին: 1990-ականների վերջին համամասնությունը շեշտակի փոխվեց հօգուտ սաուդցիների. 369-ից 360-ը տեղացիներ էին: Այս իրողությունը կապված էր թագավորության տնտեսությունը «սաուդականացնելու», այդ թվում՝ երիտասարդ և կրթված սաուդցիներին, ովքեր ՄԻՀ-ի, Էռ-Ռիյադի, Ջիդդայի ու Մեքքայի համալսարանների շրջանավարտներ էին, առաջ քաշելու և աշխատանքի տեղավորելու պետական քաղաքականության հետ: Բացի այդ, ՄԻՀ-ում կադրային փոփոխությունները նաև քաղաքական շարժառիթներ ունեին և նպատակ էին հետապնդում համալսարանների աշխատակազմերը զերծ պահելու արտաքին միջամտությունից, մասնավորապես «Մուսուլման եղբայրների» անդամներից ու համախոհներից, ինչպես նաև քաղաքականապես ակտիվ տարրերից[25]:

Վահաբական գաղափարախոսության տարածման և ներդրման համար Սաուդյան Արաբիան կարողացավ ստեղծել միջազգային վահաբական միսիոներների, մասնավորապես աստվածաբան-ալիմների, կրոնական քարոզիչների ու սպասավորների, ինչպես նաև գիտնականների ռեսուրսը, որի մի մասը փաստորեն ուսում ստացավ Մադինայի իսլամական համալսարանում: Հենց ՄԻՀ-ի շրջանավարտներից շատերն աշխարհի տարբեր հատվածներում վահաբական դաուվայի շրջանակներում ձեռնամուխ եղան վահաբական միսիոներության իրականացմանը:

Վահաբականության արտահանումն արտաքին աշխարհ. քարոզչության ռազմավարությունն ու թիրախները

Հարկ է նշել, որ Սաուդյան Արաբիայի Թագավորությունը տասնամյակներ շարունակ քարոզչություն է իրականացրել նաև իր երկրում գտնվող աշխատանքային ներգաղթյալների և ուխտագնացների շրջանում: 1970-ականներից Սաուդյան Արա-

[25] Farquhar M., նշվ. աշխ., էջ 160:

բիայում նկատվեց իսլամական տարբեր երկրներից օտարերկրյա աշխատողների զգալի հոսք, որոնց թիվը 1985 թ. թագավորությունում հասավ 5,15 միլիոնի[26]: Բնականաբար, արտագնա աշխատողները նույնպես հայտնվեցին վահաբականության կենսատարածքում՝ ազդվելով վահաբական քարոզչությունից:

Բացի այդ, Սաուդյան Արաբիայի թագավորությունը փորձեց վահաբական քարոզչությունն օգտագործել նաև Հիջազի սրբավայրեր ամենամյա ուխտագնացության ժամանակ: Ուխտագնացության ընթացքում, որպես կանոն, իրականացվել է վահաբական ուղղվածությամբ քարոզչություն: Անվճար բաժանվել են Ղուրան, սուննիական կրոնական գրականություն և այլն[27]:

Տասնամյակներ շարունակ սաուդական սալաֆիական-վահաբական քարոզչությունն իր համար պարարտ հող գտավ աշխարհի տարբեր մասերում՝ թե՛ մուսուլմանական մեծամասնություն ունեցող և թե՛ մուսուլմանական համայնքներ ունեցող երկրներում, այդ թվում՝ Արևմտյան Եվրոպայում[28]: Վահաբական դաուվայի արդյունքում աշխարհի տարբեր հատվածներում սալաֆիական պլատֆորմի վրա ձևավորվեցին իսլամական ինքնություն ունեցող հանրույթներ, որոնք, ըստ իսլամի գլոբալ ռազմավարության, համաշխարհային ումմայի մի մասն են:

Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքական ձգտումներին, որի կարևոր բաղկացուցիչներից էր վահաբականության արտահանումը, մեծապես նպաստեց 1970-ականների սկզբին նավթային գների աճը, որը հանգեցրեց համաշխարհային շուկայում նավթարդյունահանող երկրների կապիտալի մեծացմանը: Ֆինանսական աննախադեպ հաջողությունների շնորհիվ, գործնականում իրականացնելով վահաբականության արտահանումը, Սաուդյան Արաբիայի խնդիրը դարձավ աշխարհի

[26] Kepel G., Jihad: The Trail of Political Islam, Harvard University Press, 2002, pp. 70–71.

[27] Նույն տեղում, էջ 72:

[28] Madawi Al-Rasheed, The Local and the Global in Saudi Salafi Discourse, Global Salafism. Islam's New Religious Movement by Meijer Royel, editor, pp. 301-321.

տարբեր մասերում իսլամը տեղական, ազգային ավանդույթային տարրերից մաքրելու ձգտումը: Վահաբական քարոզչության սահմաններից ընդհանուր առմամբ դուրս մնացին և թիրախավորվեցին շիայական, սուֆիական և սալաֆիականության համար անընդունելի՝ իսլամի հիմքում ձևավորված մի շարք կրոնական ուղղություններ:

Հարկ է նշել, որ վահաբականությունը մերժողական դիրքորոշում ուներ և մի ծայրով ուղղված էր շիա իսլամի դեմ, ինչը նոր լիցքեր ստացավ 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունից և Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) ստեղծումից հետո: Այս շրջանում շիայական համայնքներ ունեցող Սաուդյան Արաբիային, Պարսից ծոցի մի շարք այլ երկրների և Իրաքին մտահոգում էր իրանական հեղափոխության արտահանման վտանգը: Բացի միջդավանական առճակատումից, ԻԻՀ-ն շուտով դարձավ ՍԱԹ-ի քաղաքական մրցակիցն ու հակառակորդը Մերձավոր Արևելքում:

Այս երկու պետությունները ձգտում էին ազդեցության լուրջ լծակներ ունենալ տարածաշրջանում՝ ներկայանալով որպես իսլամական աշխարհի, մասնավորապես պաղեստինցիների շահերի ու իրավունքների պաշտպաններ: Հատկանշական է, որ Իրանի հետ առճակատմանը զուգահեռ Սաուդյան Արաբիան ուժեղացնում է ճնշումները երկրի արևելյան մասում ապրող շիայադավան բնակչության նկատմամբ:

Մյուս ծայրով վահաբականությունն ուղղված էր արևմուտյան արժեքների ներթափանցման դեմ, ինչը համարվում էր քաղաքակրթական պայքար: Նման նպատակ ունեին նաև ՍԱԹ-ի կողմից հովանավորվող «Մուսուլման եղբայրները»[29]:

Հարկ է նշել, որ աշխարհով մեկ վահաբականության արտահանումը դարձավ ամենամեծ գաղափարախոսական քարոզարշավներից մեկը՝ գերազանցելով նույնիսկ խորհրդային քարոզարշավին, որն արդյունավետ վարեց Սաուդյան Արաբիայի Թագավարությունը: Միայն Ֆահդ թագավորի կառավարման տարիներին (1982-2005թթ.) Սաուդյան Արաբիայի Թագավորությունն ավելի քան 75 մլրդ դոլար է ծախսել

[29] Commins D., The Wahhabi Mission and Saudi Arabia, London, Tauris, 2006, p. 142.

վահաբականության տարածման համար: Այդ գումարի շրջանակներում ամբողջ աշխարհում կառուցվել է վահաբական ուղղվածությամբ 202 իսլամական քոլեջ, 210 իսլամական կենտրոն, 1359 մզկիթ, 2000 իսլամական դպրոց, ինչպես նաև իրականացվել են քարոզչական տարաբնույթ աշխատանքներ[30]:

1984 թ. Ֆահդ թագավորի կողմից Մադինայում հիմնվեց Ղուրանի տպագրատուն[31], որտեղ ամեն տարի հրատարակել են Ղուրանի միլիոնավոր օրինակներ, նաև վահաբական ուղղվածությամբ գրականություն՝ աշխարհով մեկ անվճար բաժանելու նպատակով[32]:

Հատկանշական է, որ թագավորության դեսպանատներում աշխատել են նաև կրոնական գործերով կցորդներ, որոնք գործունեություն են ծավալել վահաբական քարոզչության ուղղությամբ[33]: Բացի վահաբականության արտահանումից, Սաուդյան Արաբիան ֆինանսավորել և աջակցել է աշխարհի տարբեր անկյուններում իսլամի պահպանողական մեկնաբանություններով հանդես եկող քաղաքական շրջանակներին՝ նոր լիցքեր հաղորդելով իսլամական վերածննդի շրջանակներում շարիաթի ներդրման համար պայքարող շրջանակներին:

Թե՛ Մերձավոր Արևելքի տարբեր երկրներում և թե՛ տարածաշրջանից դուրս Սաուդյան Արաբիան զգալիորեն աջակցել ու ֆինանսավորել է «Մուսուլման եղբայրներին»[34] ու դրան հա-

[30] S. Shane, Saudis and Extremism: Both the Arsonists and the Fire-fighters, New-York Times, Aug 25, 2016.

[31] Տպագրատունն ամենամեծն է իսլամական աշխարհում և հնարավորություն ունի տարեկան տպագրելու Ղուրանի մոտ երեսուն միլիոն օրինակ: Մանրամասն տե՛ս King Fahd Glorious Quran Printing Complex, http://www.qurancomplex.org.

[32] G. Kepel, Jihad: The Trail of Political Islam, 2006, I.B. Tauris, p. 72.

[33] Lacey R., Inside the Kingdom: Kings, Clerics, Modernists, Terrorists, and the Struggle for Saudi Arabia, 2009, Penguin Group, p. 95.

[34] «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական շարժումը հիմնադրվել է 1928 թ. Եգիպտոսում Հասան Ալ-Բաննայի կողմից, որից հետո շարժման գաղափարախոսությունը տարածում է գտել թե՛ արաբական և թե՛ իսլամական աշխարհում՝ նպաստելով իսլամիզմի տարբեր հոսանքների ու ուղղությունների ձևավորմանը:

րող կառույցներին[35]: Շարժումն, ի դեպ, տարածում է գտել նաև Սաուդյան Արաբիայում, չնայած թագավորությունը սեփական երկրում միշտ էլ զգուշավոր մոտեցում է որդեգրել «Մուսուլման եղբայրների» նկատմամբ[36]: Սաուդյան Արաբիայի Թագավորությունը վահաբականության արտահանման շրջանակներում ընդհանրապես աջակցել է XX դարում և XXI դարի սկզբներին իսլամիզմի տարբեր ձևաչափերի, այդ թվում՝ մարտնչող, ձևավորմանը և հետագա զարգացմանը:

Փաստորեն 1970-ականներից համաշխարհային ամենամեծ նավթարդյունահանող պետություններից մեկի՝ Սաուդյան Արաբիայի աջակցությամբ սուննի իսլամի պահպանողական հոսանքները, առաջին հերթին՝ վահաբականությունը, ինչպես նաև սուննի իսլամի վերածննդի պահպանողական շարժումները, որոնք զարգանում էին սալաֆիականության պլատֆորմի վրա, սկսեցին լայն թափով ֆինանսավորվել և ուղղորդվել Սաուդյան Արաբիայից: Սաուդյան Արաբիան նպատակադրվեց վահաբականության տարածման միջոցով հիմնավորել իսլամական աշխարհում իր առաջնահերթությունը: Տասնամյակներ շարունակ վահաբականության արտահանման հետևանքով մեծ հարված հասցվեց տեղերում «ազգային» և «ժողովրդական» իսլամներին:

Հարկ է նշել, որ վահաբական գաղափարախոսությունը, որի ամենակարևոր բաղկացուցիչներից մեկը ջիհադի արդի մեկնաբանությունն է, շոշափելի դերակատարություն ունեցավ մարտնչող իսլամիզմի ժամանակակից հայեցակարգի ձևավորման և ներդրման հարցում: Ասվածի ապացույցը խորհրդա-աֆղանական պատերազմն (1979-1989 թթ.) է, որտեղ վահաբականությունը հակախորհրդային պայքարի գաղափարական հարթակն էր: Բացի աֆղանական պատերազմից, ռուս-չեչենական պատերազմներում (1994-1996 թթ., 1999-2009 թթ.) ևս

[35] Roy O., The Failure of Political Islam, 1994, Harvard University Press, p. 117.

[36] Lacroix S., Awakening Islam: The Politics of Religious Dissent in Contemporary Saudi Arabia, trans. by George Holoch, Cambridge: Harvard University Press, 2011, pp. 38-46.

վահաբականությունն օգտագործվեց որպես հակառուսական պայքարի կարևորագույն բաղկացուցիչ:

2003 թ. Սադդամ Հուսեյնի իշխանությունից հեռացվելուց հետո Իրաքում սկիզբ առած միջդավանական և միջէթնիկ հակամարտության ընթացքում սուննիական ջիհադական կառույցների, առաջին հերթին Ալ-Կաիդայի իրաքյան մասնաճյուղի գործունեությունը հիմնված էր վահաբականության վրա: Մասնավորապես «արաբական գարնան» դեպքերից հետո վահաբականությունը տարածվեց Եգիպտոսում, Լիբիայում, Թունիսում և Մերձավոր Արևելքի այլ երկրամասերում: Այս ուղղությունը դարձավ XXI դարի ամենաբարդ ու խրթին պատերազմներից մեկի՝ սիրիական ճգնաժամի մեջ ներգրավված հակասադական ուղղվածությամբ ջիհադական խմբավորումների, այդ թվում՝ «Իսլամական պետության» գաղափարական հենքը:

Եզրակացություն

Այսպիսով, 1960-ականներից Սաուդյան Արաբիայի Թագավորության արտաքին քաղաքականության մեջ մեծացավ իսլամական ուղղության նշանակությունը: Թագավորությունը մեծ տեղ տվեց իր հովանու ներքո միջազգային իսլամական կրոնական և կրոնաքաղաքական կազմակերպությունների, բարեգործական կառույցների և իսլամական կրթական հաստատությունների ստեղծմանը: Սաուդյան Արաբիան թե՛ Մերձավոր Արևելքում և թե՛ միջազգային ասպարեզում իր դիրքերն ամրապնդելու համար, որպես soft power, ձեռնամուխ եղավ սուննի իսլամի ամենապահպանողական ուղղություններից մեկի՝ վահաբականության արտահանմանը: Թագավորությունը մեծապես կարևորեց միջազգային վահաբական քարոզչության՝ դաուվայի նշանակությունը: Այդ նպատակով 1961 թ. Սաուդյան Արաբիայի Թագավորությունը ստեղծեց Մադինայի իսլամական համալսարանը սաուդցի և ոչ սաուդցի ուսանողների համար: Տարիների ընթացքում Մադինայի իսլամական համալսարանը դարձավ այն հարթակը, որտեղ ձևավորվեցին ու թրծվեցին վահաբական քարոզչության միսիոներները, որոնք ժամանակի ընթացքում աշխարհի տարբեր մասերում ձեռնամուխ եղան վահաբականության տարածմանն ու հիմնավորմանը:

Ունենալով որոշակի անհանդուրժողական մոտեցում ոչ սալաֆիական-վահաբական ուղղությունների նկատմամբ և իսլամի տեսանկյունից վիճարկելով դրանց օրինակարգությունը՝ վահաբականությունը մարտահրավեր դարձավ ուղղափառ և «ազգային» իսլամների գոյությանը: Վահաբականության տևական և շարունակական արտահանման հետևանքով թե՛ Մերձավոր Արևելքում, թե՛ դրա սահմաններից դուրս ընդլայնվեցին կրոնական պահպանողականության, ինչպես նաև ծայրահեղականության և մոլեկրոնության շրջանակները: Նշված իրողությունները շատ դեպքերում նպաստեցին կրոնական հիմք ունեցող ահաբեկչությունների իրականացմանը՝ սպառնալիք դառնալով միջազգային անվտանգությանն ու կրոնական տարբեր ուղղություններ դավանող հանրույթների խաղաղ գոյակցությանը: Թե՛ սառը պատերազմի տարիներին և թե՛ դրա ավարտից հետո վահաբականությունը դարձավ միջազգային մի շարք հակամարտությունների գաղափարական հենքը՝ վերակենդանացնելով շարիաթական պետության (խալիֆայության), մարտնչող իսլամիզմի և ջիհադիզմի հայեցակարգերը: Վահաբականության միջազգային քարոզչությունը, որին բնորոշ էին տարբեր մոտեցումներն ու շեշտադրումները, ուղղորդվեցին թե՛ պաշտոնական Էռ-Ռիյադի և թե՛ սաուդական ոչ պաշտոնական շրջանակների կողմից: Մյուս կողմից, Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության մեջ իսլամի նշանակության կարևորությունը հանգեցրեց սալաֆիական պլատֆորմ ունեցող կրոնաքաղաքական կառույցների ֆինանսավորմանն ու հովանավորությանը՝ նպաստելով իսլամական վերածննդի շարժումների զարթոնքին: Արդյունքում Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության իսլամական ուղղության ամրապնդման շնորհիվ Մերձավոր Արևելքում և առհասարակ միջազգային հարաբերություններում մեծացավ իսլամական գործոնի նշանակությունը քաղաքական և հասարակական գործընթացներում: Մյուս կողմից, վահաբականության արտահանման հետևանքով ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Արևմուտքում, մուսուլմանական համայնքների շրջանակներում սկիզբ առան իսլամական ինքնության զարթոնքին նպաստող գործընթացներ:

ՆԱՀԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՂԱԶՎԻՆ-ՌԱՇԹ-ԱՍԹԱՐԱ ԵՐԿԱԹԳԻԾՆ ԻՐԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏԱՐԱՆՑԻԿ ՄԻՋԱՆՑՔԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Ներածություն

Աշխարհագրական բարենպաստ դիրքի շնորհիվ իրանական տարանցիկ միջանցքի դերը եվրասիական միջազգային տրանսպորտային ծրագրերում առանցքային է: Իրանը թե՛ երկրի ներսում, թե՛ հարակից երկրների հետ ունի բավականին զարգացած ավտոմոբիլային ճանապարհների ցանց, խոշոր նավահանգիստներ Պարսից ծոցում և Կասպից ծովում, հատուկ տնտեսական գոտիներ և որպես Ասիան Եվրոպային և տարածաշրջանային երկրները բաց ծովերին կապող կարևոր կամուրջ՝ համարվում է նաև եվրասիական երկաթուղային ամենաէժան, անվտանգ տարանցիկ միջանցքը: Եթե պատժամիջոցների պայմաններում միջազգային տրանսպորտային միջանցքներին Իրանի մասնակցության հնարավորությունները սահմանափակ էին, ապա 2015 թ. միջուկային պայմանագրից հետո տարածաշրջանային խոշոր տարանցիկ նախագծերում իրանական միջանցքի դերը կրկին սկսեց կարևորվել: Ընդսմին, Իրանի միջուկային խնդրի կարգավորումից և պատժամիջոցների չեղարկումից հետո նախագահ Հասան Ռոհանիի կառավարության տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից մեկը նաև երկրի երկաթուղային ոլորտի ընդլայնումն էր և, Իրանի հարավային նավահանգիստներից ցամաքային ելքի ապահովմամբ, դեպի Չինաստան, Ռուսաստան, ԵՄ իրանական երկաթուղային տարանցիկ միջանցքի զարգացումը: Այս համատեքստում նկատելիորեն ընդլայնվեց նաև Իրան-Ադրբեջան երկխոսության ձևաչափը, որի առանցքում Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի մաս կազմող Ղազվին-Ռաշթ-Ասթարա երկաթգծի կառուցման խնդիրն է: Սակայն Ռաշթ-Ասթարա երկաթուղու կառուցման հետպատժամիջոցային դինամիկան թույլ է տալիս եզրակացնել, որ

ԻԻՀ-ի կողմից երկաթգծի հարցը դիտվում է ոչ միայն տարածաշրջանում սեփական հաղորդակցական հզորությունները մեծացնելու, այլ նաև աշխարհաքաղաքական իրողությունների՝ Ադրբեջանի ռազմաքաղաքական և տնտեսական աճի զսպման քաղաքականության շրջանակներում:

Իրանի ինտեգրումը միջազգային տրանսպորտային միջանցքներին. քաղաքական փոխակերպումներ

Իրանի մասնակցությամբ տարածաշրջանային երկաթուղային հաղորդակցության կարևոր նախագծերից է Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքը (այսուհետև Հ-Հ ՄՏՄ)[1], որով իրանական, հարավկովկասյան, կենտրոնասիական և ռուսական ցանցերը երկաթուղային հաղորդակցությամբ Պարսից ծոցը կապելու են պանեվրոպական (Հելսինկի) միջանցքին[2]: Հյուսիս-Հարավ ՄՏՄ-ի լիարժեք գոր-

[1] Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի մասին համաձայնագիրը ՌԴ-ի, Իրանի և Հնդկաստանի միջև ստորագրվել է 2000 թ. սեպտեմբերին Սանկտ-Պետերբուրգում և վավերացվել է 2002 թ., որին հետագա չորս տարիների ընթացքում միացել են այլ երկրներ (Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Ուկրաինան, Օմանը, Սիրիան, Թուրքիան): Նախատեսվում է, որ 7200 կմ երկարությամբ Հյուսիս-Հարավ միջազգային անդրմայրցամաքային միջանցքը ավանդական Սուեզի և միջերկրածովյան ջրային ճանապարհների համեմատությամբ կրճատելու է բեռնափոխադրումների ժամկետներն ու արժեքը (մատակարարման ժամանակը՝ 20-30 %-ով, տրանսպորտային ծախսերը՝ 15-20-ով %): Ծրագրվում էր, որ Հ-Հ ՄՏՄ-ը ապահովելու է Ռուսաստանի արտաքին առևտրական գործընկերներ Իրանի և Հնդկաստանի, ինչպես նաև Պակիստանի, Կենտրոնական և Հարավարևելյան Ասիայի երկրների միջև առևտրաշրջանառությունը: Межправительственное Соглашение между правительствами Российской Федерации, Республики Индия, Исламской Республики Иран и Султаната Оман «О международном транспортном коридоре «Север – Юг» от 12.09.2000, http://www.chemico-group.com/ru/images/stories/itc_lrg/agreement_itc.pdf

Մանրամասն տե՛ս Полищук А., Российско-иранское сотрудничество по реализации Международного транспортного коридора (МТК) «Север—Юг», Роль и место Ирана в регионе, ИВ РАН, Коллективная монография, М., 2007, стр. 161-167:

[2] Элахи Э., Транспортные коридоры Ирана как фактор экономической интеграции региона, Транспортные коридоры Евразии: новые пути сотрудничества, Международная конференция г. Астана, 20 апрель, 2015 г., http://kisi.kz/uploads/33/files/KuXXVFLd.pdf

ծարկմամբ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրները պետք է ինտեգրվեին մեկ միասնական հաղորդակցական համակարգի մեջ՝ ի հակակշիռ ՌԴ-ն շրջանցող ԵՄ-ի տարածաշրջանային ՏՐԱՍԵԿԱ (*Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցք*) ծրագրի[3]: Սակայն Իրանական երկաթուղային տարանցիկ միջանցքի կիրառմամբ Հյուսիս-Հարավ ՄՏՄ-ի չորս հիմնական ուղղություններից այսօր գործում են միայն Կասպից ծովի արևելյան ափեզրով անցնող երկու երկաթգծերը[4]: Արևմտյան ուղղություններից՝ Ղազվին-Ռաշթ-Ասթարա երկաթգիծը[5], որն Ադրբեջանի տարածքով պետք է միավորի Իրանի և Ռուսաստանի երկաթուղային համակարգերը, դեռևս շահագործման չի հանձնվել, իսկ Իրան-Հայաստան երկաթուղու նախագիծը սառեցված է[6]:

[3] Саруханян С., Международный транспортный коридор "Север-Юг" и российско-иранские отношения в транспортной сфере, «21-й Век», N 2(4), 2004 г, http://www.noravank.am/upload/pdf/224_ru.pdf

[4] Ուզբեկստան-Թուրքմենստան-Իրանի (Թեջեն-Սերախս) 1996 թ.-ից գործող 320 կմ երկարությամբ երկաթգիծը և 2014 թ. շահագործման հանձնված Ղազախստան-Թուրքմենստան-Իրան (Բերեկետ-Աթրեկ-Գորգան) 670 կիլոմետրանոց երկաթգիծը: Ապահովում են Կենտրոնական Ասիայի երկրներով Չինաստանի և Պարսից ծոցի միջև երկաթուղային հաղորդակցությունը: Տե՛ս Ордабаев А., Геополитика транспортных коридоров в Центральной Азии, Астана – Алматы, 2015, http://iwep.kz/files/attachments/article/ 2015-05-12/geopolitika_tk.pdf

[5] Ղազվին -Ռաշթ- Ասթարա երկաթգիծը (375 կմ) կառուցման ընթացքում է: Ուղիղ հաղորդակցությամբ միավորելու է Ռուսաստանի, Ադրբեջանի և Իրանի երկաթուղային ցանցերը: Գնահատվում է, որ այն բեռնափոխադրումների ժամանակացույցը կկրճատի 50%-ով, իսկ արժեքը՝ 30%-ով: Էնզելի նավահանգստում գործում է հատուկ տնտեսական գոտի: Բեռնափոխադրումային նախնական անցանելիությունը նախատեսվում է տարեկան 5 մլն տոննա, հեռանկարայինը՝ 15-20 մլն տոննա: Տե՛ս Ордабаев А., Транспортные коридоры Южной Азии и Кавказа, доклад, Астана–Алматы, 2016 г., стр. 28-30, http://iwep.kz/files/attachments/article/2016-09-23/doklad_-_transportnye_koridory_kavkaza_i_yuzhnoy_azii.pdf

[6] Իրան-Հայաստան երկաթգծի՝ որպես միջազգային միջանցքի, արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ է համարվում աբխազական երկաթգծի հետ հաղորդակցության ապահովումը, ինչը ռուս-վրացական հարաբերությունների առկա բարդ դինամիկայի պայմաններում նվազ հավա-

Հ-Հ ՄՄՄ-ի բաղկացուցիչ ուղղություն համարվող Ղազվին-Ռաշթ-Ասթարա երկաթգծի մասին համաձայնագիրը Ռուսաստանի, Իրանի և Ադրբեջանի միջև ստորագրվել է 2005թ.[7], սակայն երկաթգծի կառուցման աշխատանքները հետաձգվեցին մինչև 2008 թ., երբ կողմերը պայմանավորվեցին նախագծի տեխնիկական և տնտեսական բազայի ապահովման շուրջ: Սրան հաջորդեցին հայտարարություններն առ այն, որ երկաթգծի կառուցման աշխատանքները կմեկնարկեն 2009թ. և կավարտվեն 2012 թ.: Սակայն, չնայած մասնակից բոլոր պետությունների արտաքուստ ցուցադրվող փոխհամաձայնությանը, տևական ժամանակ երկաթուղու ուղղությամբ աշխատանքները ձգձգվում էին. թե՛ իրանական, թե՛ ադրբեջանական և թե՛ ռուսական մամուլն ու պետական գործիչները երկաթգծի շահագործման հանձնելու ժամկետների հետ կապված, բավականին հակասական տեղեկություններ էին հաղորդում:

Ղազվին-Ռաշթ-Ասթարա երկաթուղային միջանցքի լիարժեք գործարկման համար կարևոր պայման էին տարանցիկ երկրների երկաթուղային ցանցերի կառուցման և արդիականացման ֆինանսական, տեխնիկական ապահովման, սահմանային ենթակառուցվածքների, ազգային մաքսային համակարգերի ներդաշնակեցման խնդիրները, ինչպես նաև մասնակից պետությունների միջև իրավական, քաղաքական խոչընդոտների հաղթահարումը, որոնց շուրջ նախագիծ ներգրավված երկրներին տևական ժամանակ չէր հաջողվում միասնական և

նական է գնահատվում: Երկաթգծի կառուցման համար խնդրահարույց են նաև ներդրումների ներգրավման հարցերը, ինչպես նաև Իրանի և Հայաստանի միջև բեռնափոխադրման ցածր ծավալները: Zabanova Y., Connecting Iran and the South Caucasus: Competing Visions of the North–South Corridor, Iran and the South Caucasus after the Nuclear Deal, Caucasus analytical digest, N. 92, 25.02.2017, Berlin, http://www.laender-analysen.de/cad/pdf/CaucasusAnalyticalDigest92.pdf

[7] В Тегеране подписано Соглашение о создании Международного консорциума по строительству железнодорожной линии Казвин-Решт–Астара, 03.05.2005, http://press.rzd.ru/news/public/ru?STRUCTURE_ID=654&layer_id=4069&id=27700

համապարփակ մոտեցումներ մշակել[8]: Սրան գումարվեց Իրանի նկատմամբ պատժամիջոցային ռեժիմի խստացումը, որի պայմաններում երկրի ներդրումային ակտիվությունը տնտեսության համար կենսական և առաջնային նշանակություն չունեցող ծրագրերում սահմանափակվեց[9]: Արդյունքում Հ-Հ ՄՄՄ-ի շրջանակներում իրանական երկաթուղային տարանցիկի կառուցման տեմպերն էապես նվազեցին:

Այսպիսով, չնայած նրան, որ Իրանի և Ռուսաստանի միջև բեռնափոխադրումների կազմակերպման տեսանկյունից ի սկզբանե կարևորվեց երկաթուղային հաղորդակցության կի-

[8] Կազմակերպչական առումով միջանցքի քաղաքականությունն իրականացվում է Համակարգող խորհրդի կողմից անդամ-երկրների փոխնախարարների մակարդակով, որոնք հանդիպում են տարին մեկ անգամ: Հ-Հ ՄՄՄ-ի քարտուղարությունը տեղակայված է Թեհրանում: 2001-2015 թթ. քարտուղարությունը գտնվում էր Իրանի ճանապարհների պահպանության և տրանսպորտի կազմակերպության պատասխանատվության ներքո: 2016 թ.-ից այն անցավ Ճանապարհաշինության և քաղաքաշինության նախարարության պատասխանատվության տակ: Սակայն Հ-Հ ՄՄՄ-ի քարտուղարության գործառույթները նույն TRACECA-ի համեմատությամբ բավականին սահմանափակ են, և չնայած նրան, որ Հ-Հ ՄՄՄ-ի անդամ-պետությունների տրանսպորտային քաղաքականության ներդաշնակեցման և զարգացման հարցերում քարտուղարությանն առանցքային դերակատարում է հատկացված, նրա ամենախոցելի կողմերից է համարվում անդամ-պետությունների կողմից ֆինանսավորման բացակայությունը՝ ֆիքսված անդամավճարների ձևաչափով: Մանրամասն տե՛ս Improving Transnational Transport Corridors, In the OIC Member Countries: Concepts and Cases, COMCEC Coordination Office, September 2017, pp. 154-155.

[9] Պատժամիջոցներն առավել մեծ հարված հասցրին տրանսպորտային ոլորտի օդային և երկաթուղային ենթակառույցներին: Եթե օդային տրանսպորտի ժամանակակից պահանջներից հետ մնալու հիմնական պատճառը ավիատեխնիկայի և Իրանին անհրաժեշտ ծառայություններ վաճառելու միջազգային ընկերությունների նկատմամբ արգելքներն էին, ապա երկաթուղային ոլորտում իրավիճակը սրվեց նաև նրանով, որ արդիականացումը պահանջում էր ֆինանսական նշանակալի հատկացումներ՝ երկարաժամկետ հատուցմամբ, ինչպես նաև նոր երկաթուղային ուղղությունների, լոգիստիկ ենթակառուցվածքների ծավալուն շինարարական աշխատանքներ: Դրան գումարվեց միջազգային բանկային SWIFT համակարգից Իրանի անջատումը, որը կաթվածահար արեց նախկինում օտարերկրյա ընկերությունների հետ կնքված պայմանագրերը և ոլորտի արդիականացման համար անհրաժեշտ ապրանքների ներմուծման հնարավորությունները:

րառումը, այդ երկրները տևական ժամանակ նախապատվությունը տվեցին ջրային ճանապարհով հաղորդակցության տարբերակին: Այն է՝ Կասպից ծովով ռուսական Աստրախան, Օլյա, Մախաչկալա նավահանգիստներից դեպի իրանական Էնզելի, Ամիրաբադ նավահանգիստներ և Կասպյան մյուս երկրների նավահանգիստների միջև ջրային հաղորդակցությանը: Թեև ուղղության ուժեղ կողմերից են համեմատաբար էժան փոխադրումները, սակայն նավահանգիստների զարգացածության ցածր մակարդակը մասնավորապես ռուսական հատվածում, վարչակազմակերպչական խնդիրներն էապես սահմանափակում են ջրային միջանցքի լայնածավալ գործարկման հնարավորությունները: Ջրային երթուղու ընտրությունը հիմնավորվում էր նրանով, որ այն զերծ է հարավկովկասյան հակամարտությունների օջախներից և թույլ է տալիս երրորդ երկրների սահմանները չհատելով՝ կրճատել լրացուցիչ մաքսային միջոցառումները:

Սակայն Ղազվին-Ռաշթ-Ասթարա երկաթգծի կառուցումն առավելապես խոչընդոտել են ոչ միայն տեխնիկական և ֆինանսական գործոնները, այլև մասնակից պետությունների քաղաքական հակասությունները: Չնայած նրան, որ երկաթուղին Հ-Հ ՄՏՄ-ի ծրագիր ներգրավված բոլոր կողմերի գնահատմամբ տնտեսապես շահեկան նախագիծ է համարվում, տևական ժամանակ խնդրի աշխարհաքաղաքական բաղադրիչը գերակայել է տնտեսականի նկատմամբ: Ակնհայտ էր, որ իրանական կողմն անիրատեսական էր համարում ռազմավարական նշանակության նման ճանապարհի կառուցումը և մեծ հաշվով խնդիրը դիտում էր անվտանգային հարթությունում: Թեհրանին անհրաժեշտ էին լրացուցիչ երաշխիքներ, երբ ադրբեջանական տարածքը ԱՄՆ-ի կողմից դիտարկվում էր որպես հնարավոր հենակետ Իրանի նկատմամբ ռազմական գործողությունների դեպքում, իսկ Իսրայելի հետ ռազմատեխնիկական ոլորտում Բաքվի համագործակցությունը հետզհետե աճում էր: Սրան գումարվում էր իրանական ուղեծրում Բաքվի անբարենպաստ քաղաքականությունը՝ միտված Ադրբեջանում շիայական գործոնի ակտիվացումը զսպելուն, Իրանական Ատրպատականում անջատողականությունը խթանելուն և

Թուրքիայի հետ համագործակցությունն ուժեղացնելուն: Նման սպառնալիքների պայմաններում կողմերից յուրաքանչյուրը շահարկումների գնալով կարող էր արգելափակել երկաթգիծը՝ կաթվածահար անելով բեռնափոխադրումների գործընթացը:

Երկաթուղու շինարարությանը չէր նպաստում նաև իրանա-ռուսական քաղաքական և տնտեսական հարաբերությունների մակարդակը: Իրանի միջազգային մեկուսացվածության պայմաններում Մոսկվան խուսափում էր Թեհրանի հետ համագործակցությունը սերտացնելուց, որը կարող էր խոչընդոտել Իրանի ընդդիմախոսների՝ ԱՄՆ, ԵՄ, Իսրայելի և Թուրքիայի հետ նրա հարաբերություններին[10]: Փորձելով հակազդել նաև Իրանի ներգրավվածությանն ու ակտիվության աճին հարավկովկասյան և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում՝ Մոսկվան առանձնակի ջանքեր չէր գործադրում ռուսական և իրանական երկաթուղային ցանցերի միավորման համար: Վերոնշյալ գործոնների հաշվառմամբ կարելի է փաստել, որ իրանական միջանցքը, այս տարիների ընթացքում չվերածվելով եվրասիական լիարժեք տարանցիկի, միայն մուլտիմոդալ ձևաչափով (ավտոմոբիլային, ջրային) հիմնականում ապահովել է ցածր առևտրաշրջանառության ծավալներ Հնդկաստանի, Իրանի, Ռուսաստանի և մերձկասպյան մյուս երկրների միջև:

Հատկանշական է, որ Ռուսաստանի՝ որպես Հ-Հ ՄՏՄ-ի նախաձեռնող կողմի, նվազ ակտիվություն ցուցաբերելուն հակադարձ, տարածաշրջանային մյուս պետություններն այս ընթացքում արդյունավետորեն զարգացրել են սեփական հաղորդակցական հզորությունները, ինչի արդյունքում տարածաշրջանի հաղորդակցական ցանցի վրա ռուսական ազդեցությունը զգալիորեն թուլացավ, մինչդեռ կասպիական այլ երկրների մրցակցային հնարավորություններն աճեցին: Օրինակ, այսօր ղազախական Ակտաու նավահանգիստը, իր տեխնիկական և ինովացիոն հագեցվածության շնորհիվ, մասնավորապես Չինաստանից Եվրոպա բեռնափոխադրումների պարագայում լուրջ մրցակից է ռուսական նավահանգիստների

[10] Мамедова Н., Взаимные интересы России и Ирана: Историческая эволюция и нынешний этап // Россия и исламский мир: Историческая ретроспектива и современные тенденции, М., 2010, с. 36.

համար[11]: Կիրառելով բարենպաստ մաքսային ռեժիմ՝ Ղազախստանն էական ներդրումներ է կատարում՝ երկրի հանգուցային հատվածներում տրանսպորտային-լոգիստիկ կենտրոններ (ՏԼԿ) հիմնելու համար[12]: Ղազախական Շիմքետի ՏԼԿ-ն աշխատում է Ուզբեկստանի և Ղրղզստանի ուղղությամբ, իսկ Ակտաուի ՏԼԿ-ն Ադրբեջանի, Վրաստանի և Իրանի ուղղությամբ: Հարկ է նկատել, որ այս համատեքստում Ռուսաստանի և Ղազախստանի միջև որոշակի մրցակցություն է նկատվում հենց իրանական ուղղության համար, մասնավորապես իրանական շուկա ցորենի արտահանման հարցում[13]:

Ադրբեջանը նույնպես զարգացրել է իր ենթակառուցվածքները: Բաքուն ընդլայնելով և արդիականացնելով է իր տրանսպորտային և լոգիստիկ հզորությունները՝ հավակնում է վերածվելու Եվրոպան Կենտրոնական Ասիային և Մերձավոր Արևելքին կապող տրանսպորտային հանգույցի: Նավթի միջազգային գների անկման ֆոնին, Ադրբեջանի էներգետիկ և աշխարհաքաղաքական դերի նվազմանը զուգընթաց, ադրբեջանական վարչակարգի համար աստիճանաբար ավելի կարևորվեց միջազգային տրանսպորտային միջանցքներին լիարժեքորեն ինտեգրվելու խնդիրը՝ որպես հումքային տնտեսության բազմազանեցման (դիվերսիֆիկացիան) նախապայման: Ադրբեջանը մասնակցում է տարածաշրջանում մեծածավալ տրանսպորտային հիմնական՝ TRACECA, Հ-Հ ՄՏՄ և Մետաք-

[11] Sheprd W., A look Inside Aktau, Kazakhstan's other Hub on the 'New Silk Road', 15.04.2017 , https://www.forbes.com/sites/wadeshepard/2017/04/15/a-look-inside-aktau-kazakhstans-other-hub-on-the-new-silk-road/#1f4371b07e1c

[12] Մանրամասն տե՛ս Урынбасаров Б., Шелковый путь: новые возможности сотрудничества, транспортные коридоры Евразии: новые пути сотрудничества, Международная конференция г. Астана, 20 апреля, 2015 года, http://kisikz/uploads/33/files/KuXXVFLd.pdf

[13] Минкавказа разработало стратегию развития портов Дагестана и Астрахани за счет Ирана и Индии, 22.02.2017, https://www.kommersant.ru/doc/3226435?query=%D0%B6%D0%B5%D0%BB%D0%B5%D0%B7%D0%BD%D0%B0%D1%8F%20%D0%B4%D0%BE%D1%80%D0%BE%D0%B3%D0%B0%20%D0%98%D1%80%D0%B0%D0%BD

սի ճանապարհի տնտեսական գոտու նախագծերին[14] և Ռաշթ-Ասթարա և Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղիների համադրմամբ հավակնում է վերածվելու եվրասիական առանցքային տրանսպորտային խաչմերուկի[15]:

Իրանական միջանցքի դերը տարածաշրջանային խոշոր տարանցիկ նախագծերում, մասնավորապես չինական «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտի» (այսուհետև՝ ՄՃՏԳ) ծրագրում ևս առանցքային է: ՄՃՏԳ-ում Իրանը հանդես է գալիս որպես ցամաքային և էներգետիկ կարևոր միջանցք, որի ապացույցն է 2015 թ. Իրանի միջուկային պայմանագրից հետո Իրան-Չինաստան տնտեսական պայմանավորվածությունների լայն ընդգրկումը, այդ թվում՝ իրանական ներքին երկաթուղային ցանցի արդիականացման չինական ներդրումների աճը[16]: ՄՃՏԳ-ի շրջանակում Չինաստանը մեծ կարևորություն է տալիս կենտրոնական՝ իրանական և հարավային՝ պակիստանյան ուղղություններին՝ ի հակակշիռ հյուսիսային՝ ռուսական ուղղության: Պեկինը մեծապես շահագրգռված է իրանական տարանցիկով ապրանքների՝ դեպի մերձավորարևելյան և եվրոպական շուկաների արտահանման հարցում՝ կենտրոնասիական տարանցիկով երկաթուղային հաղորդակցության ընդլայնմամբ[17], որն արդյունավետորեն կարող է մրցակցել Չինաստանից Եվրոպա տարածաշրջանային մյուս ուղղությունների

[14] Valiyev A., North-South Transportation Corridor: Can It Become Alternative to OBOR?, 12.06.2017, Caspian policy Center, http://www.caspianpolicy.org/news/north-south-transportation-corridor-can-it-become-alternative-to-obor/

[15] تلاش جمهوری آذربایجان برای استفاده از ظرفیت های ترانزیتی در همکاری با کشورهای منطقه

(Տարածաշրջանային երկրների հետ համագործակցության միջոցով տարանցիկ հաղորդակցությունն ընդլայնելու Ադրբեջանի փորձը), (պարսկ.), 09.02.2017, http://www.irna.ir/fa/News/82509098

[16] China in the Middle East, the Wary Dragon, Andrew Scobell, Alireza Nader, Rand corporation, 2016, http://www.rand.org/pubs/research_reports/RR1229.html

[17] Иран и Китай хотят перекроить геополитическую карту Центральной Азии, 25.01.2017, http://eurasianews.info/politika/iran-i-kitaj-xotyat-perekroit-geopoliticheskuyu-kartu-centralnoj-azii.html

հետ, մասնավորապես Ուրումչի- Ակտաու-Բաքու-Փոթի մուլտիմոդալ ուղղության[18]:

Սակայն Ռուսաստանի համար կարևոր է Չինաստանից Եվրոպա և հակառակ բեռնափոխադրումների հոսքերի զգալի մասը շրջել դեպի Անդրսիբիրյան և Բայկալ-Ամուրյան ուղղություններ՝ նվազեցնելով ՄՃՏԳ-ի կենտրոնական և հարավային ուղղությունների նշանակությունը[19] և բնական է, որ տրանսպորտային հաղորդակցության ոլորտում տարածաշրջանային երկրների՝ Չինաստանի հետ համագործակցության ուժեղացումն աստիճանաբար ևս կբերի է տարածաշրջանում Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դերակատարման նվազմանը: Այդ նպատակով Մոսկվան իրականացնում է Կենտրոնական Ասիայի երկաթգծերի ռուսական տրամաչափի պահպանման քաղաքականություն: Խնդիրն այն է, որ Չինաստանի և Իրանի միջև կենտրոնասիական տարածաշրջանով ուղիղ երկաթուղային հաղորդակցությունը որոշակի բարդություններ ունի: Տարածաշրջանում գործում է 1520 մմ լայնությամբ երկաթուղային գծի ռուսական տրամաչափը /ստանդարտը/, մինչդեռ Իրանում և Չինաստանում գործում են եվրոպական՝ 1435 մմ լայնությամբ երկաթուղային գծերը, և համապատասխան բեռնաքարշ կոնտեյներային վագոնների փոխանակումը լրացուցիչ ծախսի և ժամանակի վատնում է: Ճիշտ է, Չինաստանի և Իրանի կողմից պարբերաբար փորձեր են ձեռնարկվում իրենց տրամաչափին համապատասխան ուղիղ երկաթուղային հաղորդակցության հաստատման համար, սակայն պետք է նշել, որ Թեհրանի և Պեկինի կողմից քննարկվող երկաթուղային ուղղություններին լուրջ խոչընդոտ են ոչ միայն Ռուսաստանի դիրքորոշումը, այլ նաև Աֆղանստանի հյուսիսային և կենտրոնական շրջանների անկայունությունը և լեռնային տեղանքի տեխնիկական բարդություններն ու ֆինան-

[18] Фаляхов Р. , Россия–Китай: шелковая удавка вместо «Шелкового пути, 07.11.2017, https://www.gazeta.ru/business/2017/11/03/10969928.shtml?updated

[19] Лузянин С., Поглощение, сопряжение или конфликт? ШОС, китайский проект «Шелкового Пути и ЕАЭС: варианты взаимодействия в Евразии, http://www.ifes-ras.ru/images/stories/2017/project_rfbr_2016-2018_luzyanin-1.pdf

սավորման խնդիրները, որի հետևանքով մի քանի միլիարդ դոլարների արժողությամբ նոր երկաթգծերի կառուցման նախագծերը պարբերաբար սառեցվում են[20]: Նման պայմաններում Իրանի ու Չինաստանի միջև ցամաքային բեռնափոխադրումների հիմնական բաժինն ընկնում է 2014 թ.-ից գործող Ղազախստան-Թուրքմենստան-Իրան երկաթգծին՝ չինական և իրանական սահմաններին բեռնաքարշերի փոխարինմամբ[21]: Փաստացի Ղազախստան-Թուրքմենստան-Իրան երկաթգիծը Չինաստանի համար մնում է դեպի Պարսից ծոց ամենակարճ ցամաքային ելքը[22]:

Վերոնշյալ իրողությունները ստիպում են Ռուսաստանին հնարավորինս մեծ ակտիվություն դրսևորել Իրանի հետ

[20] Ինչպես օրինակ, Աֆղանստան-Ղրղզստան-Չինաստան կամ Ղրղզստան-Տաջիկստան-Աֆղանստան-Իրան ուղղություններով երկաթգծերի կառուցման տարբերակները: Եվրոպական երկաթուղային գծի տրամաչափով Չինաստան-Ղրղզստան-Տաջիկստան-Աֆղանստան-Իրան երկաթգծի ծրագիրն այդ երկրների տրանսպորտային գերատեսչությունների ղեկավարների կողմից համաձայնեցվել է դեռևս 2010 թ.: Սակայն 2012 թ. հունիսին Ղրղզստանը հայտարարեց նախագծից դուրս գալու մասին, որով երկաթգծի կառուցման ծրագիրը սառեցվեց: 2015 թ. անդամակցելով ԵԱՏՄ-ին՝ Ղրղզստանը պարտավորվեց նաև հետևել միության սահմանած տրանսպորտային հաղորդակցության միասնական ստանդարտների սկզբունքին, այդ թվում՝ երկաթուղային գծի լայնության ստանդարտին առնչվող: Ордабаев А., Геополитика транспортных коридоров в Центральной Азии, նշվ. աշխ., էջ 11:

[21] Ճանապարհի ղազախական հատվածը կառուցված է բարձր ինովացիոն-տեխնոլոգիական հագեցվածությամբ, նախատեսվում է, որ բեռնափոխադրումների ծավալը կազմելու է տարեկան 8-10 մլն տոննա: Ներիրանական Ինչե-Բարուն-Գորգան հատվածի վերանորոգումից հետո բեռնափոխադրումների հեռանկարային ծավալները գնահատվում են տարեկան 35-40 մլն տոննա: Иран, Туркменистан и Казахстан развивают транзитные железнодорожные перевозки, 10.10.2015, -http://review.uz/index.php/novosti-main/item/4920-iran-turkmenistan-i-kazakhstan-razvivayut-tranzitnye-zheleznodorozhnye-perevozki

[22] Sb'u Country Report of the I.R.Iran in the Framework of the Second Meeting of the Regional Network of Legal &Technical Experts on Transport Facilitation of the UNESCAP, Islamic Republic of Iran Ministry of Roads & Urban Development, http://www.unescap.org/sites/default/files/4%20-%20Overview%20of%20bilateral%20agreements%20on%20international%20road%20transport%20-%20Islamic%20Republic%20of%20Iran.pdf

տրանսպորտային ոլորտում համագործակցության սերտացման հարցում՝ տարածաշրջանում տրանսպորտային միջանցքների նկատմամբ ազդեցության պահպանման նպատակով: Դրան է նպաստում նաև Արևմուտքի հետ հակազդեցության խորացման համատեքստում իրանական ուղեծրում Մոսկվայի արտաքին քաղաքական առաջնահերթությունների փոփոխման դրական դինամիկան: ՌԴ-ԻԻՀ հարաբերությունները նոր լիցք ստացան սիրիական հակամարտության համատեքստում, իսկ Իրանի միջուկային թղթապանակի փակումից հետո միտվեցին ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ և տրանսպորտային ոլորտներում փոխգործակցության խորացմանը[23]: 2016թ. նոյեմբերի 23-ի՝ ՌԴ նախագահի այցն Իրան ուղղված էր ռուս-իրանական հարաբերությունների ամենախոցելի՝ տնտեսական ոլորտում համագործակցության ընդլայնմանը[24]: Պատահական չէ, որ նախագահի այցի ընթացքում Իրանին 5 մլրդ դոլարի վարկի տրամադրման և տնտեսական առաջնային 35 ոլորտում համատեղ համագործակցություն ծավալելու շրջանակներում կարևորվեց Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի մաս կազմող իրանական Գամսար-Ինչե-Բարուն երկաթգծի էլեկտրաֆիկացման ծրագրին ռուսական մասնակցությունը: Ռուսաստանի կողմից այս նախագծին 1,2 մլրդ դոլար վարկի տրամադրումը կարող է գնահատվել ինչպես Իրանում ռուսական կապիտալի ներկայությունն ապահովելու, այնպես էլ տարածաշրջանային կոմունիկացիոն ծրագրերից դուրս չմնալու քայլ[25]: Այս ճանապարհը կարևոր ռազմավարական նշանակություն ունի: Այն միավորում է միջազգային երկու մի-

[23] Տե՛ս Kozhanov N., Understanding the Revitalization of Russian-Iranian Relations, Carnegie Endowment for International Peace, 2015, http://carnegieendowment.org/files/CP_Kozhanov_web_Eng.pdf

[24] Российско-иранские переговоры, http://kremlin.ru/events/president/transcripts/50770, President of Russian Railways meets Iran's Minister of Roads and Urban Construction, 27.10.2017, Rassian railways, http://eng.rzd.ru/newse/public/en?STRUCTURE_ID=15&layer_id=4839&refererLayerId=4537&refererPageId=704&id=107166

[25] کاهش 400 کیلومتری مسیر شمال - جنوب با افتتاح خط آهن اینچه برون, (Ինչե-Բարուն երկաթուղու գործարկմամբ՝ Հյուսիս-Հարավ ճանապարհը կկրճատվի 400 կմ-ով), (պարսկ.), 24.11.2015,http://www.irna.ir/fa/News/81386468/

ջանցքները՝ Հյուսիս-Հարավը ու ՄՃՏԳ-ն, որի միջոցով Ռուսաստանը կարող է իրանական տարածքով միանալ Մետաքսի ճանապարհի հարավային գոտուն[26]: 2016 թ. դեկտեմբերի 11-13-ը Թեհրանում կայացած ռուս-իրանական առևտրատնտեսական համագործակցության մշտական միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստի շրջանակներում կողմերը ստորագրեցին առևտրատնտեսական փոխըմբռնման նոր հուշագրերի փաթեթ: Ստորագրվեց նաև առևտրի և արդյունաբերության ոլորտներում ռուս-իրանական նախագծերի իրականացման 2016-2020 թթ. «Ճանապարհային քարտեզը», որի շրջանակներում համաձայնեցվել է ավելի քան 70 համատեղ նախագիծ[27]: Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ Ռուսաստանն Իրանին մատակարարելու է նաև իրանական երկաթուղաշինության զարգացման համար անհրաժեշտ պարագաներ՝ ռելսեր, վագոններ և այլն[28]:

Հ-Հ ՄՏՄ-ն կենսական նշանակություն ունի նաև Չինաստանի աշխարհաքաղաքական մրցակից Հնդկաստանի համար: Իրանական նավահանգիստների և ցամաքային տարանցիկի միջոցով Հնդկաստանը հնարավորություն ունի կայուն կապ ապահովելու ինչպես Կենտրոնական Ասիայի, այնպես էլ Հարավային Կովկասի, ապա նաև ռուսական և եվրոպական լայնածավալ շուկաների հետ: Փորձելով հակազդել Չինաստանին, որն իր նախաձեռնած եվրասիական տրանսպորտային նախագծերում շեշտը դնում է Պակիստանի հետ համագործակցության վրա, Հնդկաստանը կտրուկ ավելացրել է իր ներդրումներն Իրանի տրանսպորտային ոլորտում: Խոսքը մասնավորապես Պարսից ծոցում Չաբահար նոր նավահանգստի և

[26] Восточный обход Каспия в рамках международного транспортного коридора Север-Юг, https://www.unece.org/fileadmin/DAM/trans/doc/2015/wp5-eatl/3_WP5_GE2_12th_session_Mr_Timochkin_Russian_Federation.pdf

[27] Россия и Иран подписали меморандум о торгово-экономическом сотрудничестве, 13.12.2016, https://ria.ru/economy/20161213/1483472187.html

[28] Jalili S., Iran All Set for Ambitious Railroad Development, https://financialtribune.com/articles/economy-domestic-economy/64283/iran-all-set-for-ambitious-railroad-development

ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող, դեպի աֆղանական սահման Չաբահար-Զահեդան երկաթգծի կառուցման մասին է[29]:

Տարածաշրջանի տրանսպորտային հանգույցների նկատմամբ վերահսկողություն սահմանելու տարբեր ուժային կենտրոնների միջև ձևավորված մրցակցությունը լայն հնարավորություններ է ստեղծում իրանական հաղորդակցական հզորությունների զարգացման համար ու բնականոն կերպով խթանում է նաև եվրասիական տրանսպորտային համակարգին լիարժեքորեն ինտեգրվելու Իրանի շահագրգռվածությունը: Միջուկային պայմանագրից հետո երկրի երկաթուղային ցանցի ընդլայնումը դարձել է իրանական կառավարության օրակարգի հարց: Խնդիր է դրվել երկաթուղային ներքին համակարգի զարգացմամբ բարձրացնելու նաև Իրանի տարածաշրջանային տարանցիկ հզորությունները[30]: 2017-2022 թթ. Զարգացման յոթնամյա պլանի համաձայն՝ Իրանում ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալները մինչև 2021 թ. պետք է համապատասխանաբար աճեն 30 և 20 տոկոսով[31]: Պլանային-բյուջետային կազմակերպության ղեկավարի՝ Մ. Նոբհաթի՝ 2017-2018 թթ. (իրանական տարին սկսվում է մարտի 21-ից) Մեջլիսի հաստատմանը ներկայացված բյուջեով՝

[29] Watson S., Does India's Chabahar Deal Make Sense?, The Diplomat, https://thediplomat.com/2017/05/does-indias-chabahar-deal-make-sense/

[30] Երկաթուղային հաղորդակցության զարգացումը նախանշված է Իրանի բարձրաստիճան ղեկավարության ընդունած 2005-2025 թթ. զարգացման տեսլականի փաստաթղթում, որի համաձայն՝ նախատեսվում է կառուցել 20 հազար կմ երկարությամբ երկաթգծեր, 5800 կմ կրկնակի գծերով ճանապարհներ, էլեկտրաֆիկացված ճանապարհների երկարությունը հասցնել 2000 կմ-ի, արագընթաց ճանապարհներինը՝ 1000 կմ-ի: 2015 թ. տվյալներով Իրանի երկաթգծերի երկարությունը կազմում էր 13600 կմ, կրկնակի գծերով ճանապարհներինը՝ 1900 կմ, արագընթաց ճանապարհներինը՝ 0 կմ, էլեկտրաֆիկացված երկաթգծերինը՝ 150 կմ: Iran's railway in 2025, Investment Opportunities in Transportation & Urban Development, Ministry of Roads & Urban Development, Deputyship of Transportation Planning & Economics, http://investment.mrud.ir/en/content/iran-railways-2025

[31] Jalili S., Iran All Set for Ambitious Railroad Development, https://financialtribune.com/articles/ economy-domestic-economy/64283/iran-all-set-for-ambitious-railroad-development

երկաթուղային շինարարությանը հատկացվելու է մոտավորապես 1 մլրդ դոլար, ինչը 40 %-ով գերազանցում է նախորդ տարվա երկաթուղային ոլորտի հատկացումները[32]: Մեջլիսի որոշմամբ Յոթնամյա պլանի շրջանակներում երկաթգծերի զարգացմանը տրամադրվելու է նաև նավթից ստացվող տարեկան եկամուտների 1 %-ը[33]: Այս համատեքստում մեծանում է ժամանակակից էլեկտրաֆիկացված երկաթգծերի կառուցման անհրաժեշտությունը, որը պայմանավորված է նաև ներքին շուկայի ընդլայնման հրամայականով:

Երկաթուղային տարանցիկ միջանցքի զարգացման հարցում իրանական իշխանությունների ռազմավարությունը բավականին ուշագրավ է: Իրանի երկաթուղային հաղորդակցությունը Եվրոպայի հետ ներկայումս իրականացվում է միայն Թուրքիայով: Սակայն Թեհրանի համար երկաթուղային ցանցի ընդլայնման հեռահար նախագծերից է համարվում Իրաքով դեպի սիրիական միջերկրածովյան նավահանգիստներ ելքով, Թուրքիայի շրջանցմամբ այլընտրանքային երկաթուղային հաղորդակցության հաստատումը[34]: 2017-2018 թթ. իրանական ճանապարհաշինության բյուջեի միջոցների մեծ մասը հատկացվելու է երկրի հենց արևմտյան շրջանների «Ղարբ» (Արևմուտք) կոչվող երկաթուղային ցանցի կառուցման ծրագրերին: Այն ներառում է Ղազվին-Ռաշթ (388 կմ), Թեհրան-Սպահան արագընթաց գիծը (410 կմ), Միյանե-Թավրիզ (200 կմ), Թեհրան-Համադան-Սանանդաջ (430 կմ), Շիրազ-Բուշեր (250 կմ), Գորգան-Բոջնուրդ-Մաշհադ (570 կմ), Միյանե-Արդաբիլ (175 կմ) ուղղությունները: Այսպիսով, «Ղարբ» երկաթուղային ցանցն ընդգրկում է երկու ուղղություն, որոնք Մարքազի կենտրոնական նահանգում գտնվող Արաք քաղաքը միացնելու են

[32] Iran's Next Budget Focuses on Railroad, Environment, Water, February 11, 2017, https://financialtribune.com/articles/domestic-economy/59310/irans-next-budget-focuses-on-railroad-environment-water

[33] Նույն տեղում:

[34] Milburn F., Iran's Land Bridge to the Mediterranean: Possible Routes and Ensuing Challenges, http://www.inss.org.il/wp-content/uploads/2017/10/irans-land-bridge.pdf

Իրաքին սահմանակցող Քերմանշահ նահանգի հետ[35]: Ըստ լրատվամիջոցների՝ ցանցի առաջին հատվածը 95 %-ով պատրաստ է[36]: Դեռևս 2015 թ. ավարտվել է կենտրոնական Քերմանշահ նահանգից դեպի իրանա-իրաքյան սահման (Շալամչեհ) երկաթգծի կառուցումը: Նախատեսվում է երկաթգիծը շարունակել իրանական սահմանից դեպի իրաքյան Բասրա նավահանգիստ (35 կմ): Երկաթգիծն ապահովելու է ոչ միայն դեպի Իրաքի շիայական սրբավայրեր հավատացյալների ուղևորափոխադրումները, այլև հեռանկարում իրաքյան երկաթուղային ցանցով կապվելու սիրիական երկաթուղային ցանցին[37]:

Իրանական ղեկավարությունը փորձում է ակտիվորեն առաջ մղել նաև Պարսից ծոց-Սև ծով միջանցքի նախագիծը, որի միջոցով Իրանը նպատակ է հետապնդում վրացական նավահանգիստներով, հիմնականում մուլտիմոդալ ձևաչափով այլընտրանքային կապ հաստատել Եվրոպայի հետ[38]:

Այսուհանդերձ, տրանսպորտային ոլորտի նախանշված ծրագրերը և մասնավորապես երկաթուղային ցանցի հեռանկարները շարունակում են խիստ կաշկանդված մնալ ֆինանսական ապահովման խնդիրներով, որի կենսագործման նպատակով իրանական տնտեսությունը ներդրումների ներգրավման գործընթացում է[39]: Իրանի տրանսպորտի նախարարի խոսքերով ոլորտի զարգացումը միայն երկրի ներքին աղբյուրների և պետական բյուջեի հաշվին հնարավոր չէ և պահանջում է առնվազն 28 մլրդ դոլարի ներդրում[40]:

Ինչ վերաբերում է Հյուսիս-Հարավ ուղղության Ռաշթ-Ասթարա երկաթգծի հարցին, ապա հետապատժամիջոցային շրջանում, բացի առկա ֆինանսական խոչընդոտներից, այն ձեռք բերեց աշխարհաքաղաքական նոր երանգավորում, հատկապես, երբ ակնհայտ և տեսանելի դարձան 2017 թ. Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծը շահագործման հանձնելու ժամկետները:

Ղազվին-Ռաշթ-Ասթարան ԻԻՀ-ՌԴ փոխգործակցության առանցքում

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին թեև լայնորեն քարոզվում է որպես Հայաստանի մեկուսացումը խորացնող նախագիծ, պարզ է, որ այն աշխարհաքաղաքական ավելի լայն բովանդակություն ունի և ուղղակիորեն առնչվում է տարածաշրջանում ռուսական և իրանական շահերին: Ակնհայտ է, որ Վրաստանի տարանցիկով թուրքական և ադրբեջանական երկաթուղային ցանցերի միավորումը և հեռանկարում ԲԹԿ-ի չինական ՄՃՏԳ-ում ինտեգրումը միտված են տարածաշրջանում Ադրբեջանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական դերակատարման աճին: Սակայն տարածաշրջանում կոմունիկացիոն հանգույցների նկատմամբ թուրքական

[35] 2017 թ. հուլիսի 11-ին Իրանի և իտալական երկաթուղային ընկերությունների միջև կնքվել է Ղոմ-Արաք և Թեհրան-Համադան արագընթաց երկաթուղիների կառուցման մասին համաձայնագիրը: Italy-Iran: FS Italians signs agreements for development of Iran's rail network, 18 July 2017 https://www.uic.org/com/uic-e-news/557/article/ italy-iran-fs-italiane-signs-agreements-for-development-of-iran-s-rail-network?page=thickbox_enews

[36] $12.5b in Rail Investment under Rouhani Administration, June 29, 2017, https://financialtribune.com/articles/economy-domestic-economy/67268/125b-in-rail-investment-under-rouhani-administration?utm_campaign=more-like-this

[37] Iraq Mulls Rail Link up with Iran, December 29, 2016, https://financialtribune.com/articles/economy-domestic-economy/56412/iraq-mulls-rail-linkup-with-iran

[38] Մանրամասն տե՛ս Maysam Bizaer, Can Iran go around Turkey to reach Europe?, http://www.al-monitor.com/pulse/ru/originals/2016/08/iran-persian-gulf-black-sea-corridor-azerbaijan-georgia.html#ixzz56jw3148I

[39] مسهم شبکه ریلی بار تا 30 درصد افزایش می یابد, (Երկաթուղային ցանցի մասնաբաժինն ավելանում է 30% -ով), 11.01.2017 թ., http://urmia.iribnews.ir/fa/news/1460261/%D8%B3%D9%87%D9%85-%D8%B4%D8%A8%DA%A9%D9%87-%D8%B1%DB%8C%D9%84%DB%8C-%D8%A8%D8%A7%D8%B1-%D8%AA%D8%A7-30-%D8%AF%D8%B1%D8%B5%D8%AF-%D8%A7%D9%81%D8%B2%D8%A7%DB%8C%D8%B4-%D9%85%DB%8C-%DB%8C%D8%A7%D8%A8%D8%AF

[40] Iranian railway development needs $28b investment: transport min., 25.11.2017, TehranTimes, http://www.tehrantimes.com/news/418795/Iranian-railway-development-needs-28b-investment-transport

գործոնի ազդեցության աճը չի բխում Մոսկվայի և Իրանի շահերից է: Ուստի տարածաշրջանային հաղորդակցության ոլորտում Իրանի հետ գործակցության ակտիվացմամբ Ռուսաստանը փորձում է ընդլայնել ինչպես ադրբեջանական, այնպես էլ ղազախական երկաթուղային ցանցերի նկատմամբ իր ազդեցությունը՝ վերահսկողության տակ պահելով նաև Չինաստան-Եվրոպա երկաթուղային հաղորդակցության կենտրոնասիական և հարավկովկասյան տարանցիկները:

Իրադրությունը հակակշռելու, տարածաշրջանում երրորդ դերակատարների, մասնավորապես Թուրքիայի, ազդեցությունը սահմանափակելու, Ռուսաստան-Իրան առանցքում Ադրբեջանի ներգրավվածության մակարդակը բարձրացնելու նպատակով Թեհրանն ու Մոսկվան փափուկ ուժի կիրառմամբ ակտիվացրել են շփումներն Ադրբեջանի հետ: Այս համատեքստում կողմերը փորձում են հետին պլան մղել քաղաքական սուր տարաձայնությունները՝ կենտրոնանալով և առաջնահերթություն տալով տնտեսական փոխգործակցության հարցերին: Թեհրանի և Մոսկվայի միջև քննարկվող նախաձեռնություններն առաջին հերթին ուղղվեցին անավարտ նախագծերի առաջմղմանը, և նման ծրագրերից էր դիտվում Ռաշթ-Ասթարա երկաթգիծը, որի շուրջ էլ ծավալվեց եռակողմ երկխոսության նոր մեկնարկը: Երկաթուղու խնդիրը հայտնվեց երկրների երկկողմ և եռակողմ գրեթե բոլոր պաշտոնական հանդիպումների օրակարգում:

Հարկ է նկատել, որ Իրանի միջուկային պայմանգրի կնքումից հետո երկաթգիծն արագ շահագործման հանձնելու Բաքվի շահագրգռվածությունը զգալիորեն աճել է: Ռաշթ-Ասթարայի կառուցման էր միտված ադրբեջանական հատվածի աշխատանքները խթանելու մասին համապատասխան գերատեսչությունների ղեկավարներին Ի. Ալիևի՝ 2016 թ. դեկտեմբերի 7-ի հրամանագիրը[41]: 2016 թ. փետրվարի 23-ին Ի. Ալիևի՝ Իրան այցի ընթացքում ստորագրվեց 11 փաստաթուղթ տնտեսական, մաքսային, առողջապահության ոլորտներում իրանա-ադրբեջանական փոխգործակցությունն ակտիվացնելու վերաբերյալ: Պայմանագրերից երկուսը վերաբերում էին Ռաշթ-Ասթարայի երկաթգծին, որոնցից առաջինը Իրանի և Ադրբեջանի երկաթուղային ցանցերի միացման մասին շրջանակային փաստաթուղթն էր, երկրորդը՝ «Ադրբեջանական երկաթուղիներ» ընկերության և «ԻԻՀ երկաթուղային ընկերության» միջև կնքված համաձայնագիրը՝ մինչև 2016 թ. վերջ իրանա-ադրբեջանական սահմանում Ասթարաչայ կամրջի համատեղ ֆինանսավորմամբ կառուցման վերաբերյալ[42]: Բաքվի կողմից ծրագրեր են մշակվում նաև իրանական տարածքով ուղիղ երկաթուղային կապով Նախիջևանին Բաքուն կապելու ուղղությամբ[43]:

Ադրբեջանը կառուցել է մինչև իրանական սահման երկաթգծի 8 կիլոմետրանոց իր հատվածը: Երկաթգծի Ղազվին-Ռաշթ հատվածը, որը մտնում է ներիրանական երկաթուղային ցանցի մեջ, նույնպես գրեթե ավարտին է հասցված, սակայն և՛ Իրանի, և՛ Ադրբեջանի երկաթուղային ցանցերի միավորման համար անհրաժեշտ Ռաշթ-Ասթարա 175 կմ-անոց հատվածը մնում է անավարտ. կառուցման համար 2015 թ.-ից հայտարարվում է, որ մասնակից պետությունները ծրագրում են ներգրավել վարկային միջոցներ: Արդյունքում տևական ժամանակ երկաթգծի շահագործման հանձնելու ժամկետները հետաձգվում և պայմանական էին դառնում, չնայած երկու կողմերն էլ երկաթգծի շահագործման հանձնելու վերջնաժամկետ էին նշում 2016 թվականը[44]: 2017թ.-ից նշվում էր, որ Բաքվի և Թեհրանի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ շինարարության արժեքի 500 մլն դոլար վարկավորելու է ադրբեջանական միջազգային բանկը, և վարկը մարվելու է հետա-

[41] Ильхам Алиев поручил ускорить строительство коридора "Север-Юг", 7.12.2015, http://haqqin.az/news/58672

[42] Iran, Azerbaijan Sign 11 MoUs in Tehran, February, 23, 2016, https://www.tasnimnews.com/en/news/2016/02/23/1009372/iran-azerbaijan-sign-11-mous-in-tehran

[43] قطارهای باکو – نخجوان در انتظار احداث خط آهن استارا - رشت
Բաքու-Նախիջևանը սպասում է Ասթարա-Ռաշթ երկաթգծի կառուցմանը (պարսկ.), 05/15/1396, http://www.irna.ir/fa/News/82627068

[44] Тегеран и Баку подписали меморандум о строительстве железной дороги, 12.10.2015, http://www.rzd-partner.ru/news/zheleznodorozhnaia-infrastruktura/tegeran-i-baku-podpisali-memorandum-o-stroitelstve-zheleznoi-dorogi/

գայում երկաթուղու գործարկման եկամուտներից[45]: Ադրբեջանական կողմը նաև 60 մլն վարկ է տրամադրել՝ իրանական Ասթարայում անհրաժեշտ ենթակառուցվածքների, այդ թվում՝ վառելիքի լիցքավորման, հիմնական բեռների, ցորենի և կոնտեյներների տերմինալների շինարարության համար[46]: 2017թ. սեպտեմբերին՝ Մումբայիում Հ-Հ ՄՏՄ-ի զարգացման խնդիրներին նվիրված համաժողովի ժամանակ, «Իրանի երկաթգծերի ընկերության» տնօրեն Աբբաս Նազարին նշել էր, որ Բաքվի տրամադրած միջոցներով կառուցվել է նաև Ասթարաչայ գետով երկու Ասթարաները կապող կամուրջը, և կառուցվում է չորս տերմինալ՝ կոնտեյներային, նավթային, ցորենի և հիմնական բեռների համար[47]: Ասթարաչայ երկաթուղային կամրջի հիմնարկեքի արարողությունը 2016 թ. ապրիլին էր: 2016 թ. փորձարկման ռեժիմում իրականացվեց նաև Հնդկաստանից Իրանով դեպի Ռուսաստան առաջին բեռնափոխադրումը, իսկ 2017 թ. մայիսին փորձնական ռեժիմում առաջին գնացքը հատեց ադրբեջանա-իրանական սահմանը[48]: Թեև 2017 թ. մարտին Ադրբեջանի նախագահի՝ Իրան հաջորդ այցելության ընթացքում տեղի ունեցավ երկաթգծի Ասթարա-Ասթարա 10 կմ երկարությամբ հատվածի տեխնիկական փորձարկումը, որից 8 կմ է գտնվում ադրբեջանական տարածքում, 2 կմ՝ իրանական[49], այնուհարդերձ Ռաշթ-Ասթարա գիծը մինչ օրս շարունակում է մնալ Իրանը Ռուսաստանին կապող երկաթգծի բաց օղակը:

Իրանի, Ռուսաստանի և Ադրբեջանի միջև միջպետական տարբեր ոլորտներում գործակցության ծավալմանն ուղղված փորձ էր երեք պետությունների նախագահների եռակողմ հանդիպումը, որոնց առանցքային հարցը կրկին Ռաշթ-Ասթարայի կառուցման և երկաթգիծը շահագործման հանձնելու վերջնաժամկետների վերաբերյալ շահարկումներն էին: 2016 թ. Օգոստոսի 8-ին Բաքվում կայացած եռակողմ գագաթնաժողովին ստորագրված եռակողմ հռչակագրով կողմերն արձանագրել էին, որ երկաթգծի կառուցումը գրեթե ավարտին է հասցվում, և պարտավորվել մինչև 2017 թ. վերջ շահագործման հանձնել այն[50]: 2017 թ. հոկտեմբերի 30-ին՝ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու բացման արարողությունից մեկ օր անց, Իրանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների՝ Թեհրանում կայացած եռակողմ երկրորդ գագաթնաժողովին պաշտոնապես հայտարարվեց, որ Ադրբեջանն Իրանին վերջապես տրամադրելու է 500 մլն ԱՄՆ դոլարի վարկը, իսկ երկաթուղու կառուցումն ավարտին կհասցվի միայն 2019 թ.[51]: Հարց է առաջանում՝ ինչպես էր Բաքվի գագաթնաժողովի ժամանակ հայտարարվում, որ երկաթգիծը հանձնվելու է շահագործման 2017 թ. վերջին, եթե հստակ չէր երկաթգծի կառուցման ֆինանսական հատկացումների հարցը:

Երկաթգծի ընդհանուր արժեքը գնահատվում է 1,1 մլրդ դոլար և եթե Թեհրանի գագաթնաժողովին հայտարարվեց

[45] Azerbaijan to Finance Half of Iran's Rasht-Astara Rail Project, September 27, 2017, https://financialtribune.com/articles/economy-domestic-economy/72856/azerbaijan-to-finance-half-of-iran-s-rasht-astara-rail

[46] Նույն տեղում:

[47] Iran cuts rail fright tariffs to benefit India-Russia route, 17.09.2017, https://en.mehrnews.com/news/127877/Iran-cuts-rail-fright-tariffs-to-benefit-India-Russia-route

[48] Մինչև Ռաշթ-Ասթարա հատվածի շահագործման հանձնելը 2016 թ.-ից կողմերը պայմանավորվել են Պարսից ծոց-Ղազվին-Ռաշթ հատվածի բեռնափոխադրումների ժամանակավոր երթուղու շուրջ, որով Բանդար-Աբբասից բեռները երկաթգծով հասնում են Ռաշթ, այնուհետև ավտոմոբիլային ճանապարհով՝ Ադրբեջան: Իրան-Ադրբեջան երկաթգծի լիարժեք գործարկմամբ ակնկալվում է երկրների միջև բեռնափոխադրումների ծավալները տարեկան 600 000 տոննայից հասցնել 5 մլն տոննայի: North-South Corridor to Become Operational by March 2018, November 12, 2017, https://financialtribune.com/articles/economy-business-and-markets/75966/north-south-corridor-to-become-operational-by-march-2018

[49] Astara-Astara Railway begins trial operation, 05.03.2017, https://en.mehrnews.com/news/124012/Astara-Astara-Railway-begins-trial-operation

[50] Sb'u Kozhanov N., Summit Signals Russia's New Strategy Towards Iran, 02 September 2016, https://www.chathamhouse.org/expert/comment/summit-signals-russia-s-new-strategy-towards-iran#sthash.LZg2ZkLY.swAgK4pL.dpuf; Rouhani Pushes INSTC in Baku, August 08, 2016, Financial Tribune, https://financialtribune.com/articles/national/47109/rouhani-pushes-instc-in-baku

[51] Заявления для прессы по итогам встречи Владимира Путина, Президента Ирана Хасана Рухани и Президента Азербайджана Ильхама Алиева, 1 ноября 2017 года, http://kremlin.ru/events/president/transcripts/55984

Բաքվի կողմից մի մասի վարկավորման մասին, ապա հարկ է նկատել, որ իրանական կողմը չի ճշգրտում մյուս մասի ֆինանսավորման աղբյուրը[52]:

Գնահատելով Ղազվին-Ռաշթ-Ասթարա երկաթգծի կառուցման հետպատժամիջոցային դինամիկան՝ կարելի է փաստել, որ Իրանը ֆինանսական առկա բոլոր հատկացումները փորձում է կենտրոնացնել երկրի ներքին երկաթուղային ցանցի այլ ուղղությունների վրա և չի շտապում ավարտին հասցնել դեպի ադրբեջանական սահման երկաթգծի կառուցումը: Այդ իսկ պատճառով Թեհրանը պարբերաբար շեշտադրում է, որ ճանապարհի կառուցումը հնարավոր է ադրբեջանական ֆինանսավորմամբ[53]: Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ Թեհրանի նման մարտավարությունը հակված է շարունակելու իրանա-ադրբեջանական երկաթուղային ցանցերի միավորման ձգձգման քաղաքականությունը և շինարարության մեջ ադրբեջանական կապիտալի ներգրավմամբ մտադիր է ստիպել Բաքվին ավելի շրջահայաց մոտեցում դրսևորել իրանական ուղեծրում:

Այսպիսով, չնայած միջուկային պայմանագրի կնքումից հետո ՌԴ-ի Իրանի և Ադրբեջանի միջև եռակողմ հարաբերությունների կարգավորման միտումներին՝ համատեղ ծրագրերը կյանքի կոչելու համար կողմերին դեռևս անհրաժեշտ է հաղթահարել մի շարք քաղաքական խնդիրներ և տարաձայնություններ:

2013 թ. Ռոհանիի իշխանության գալուց հետո թեպետ Իրանի և Ադրբեջանի միջև շիայական գործոնի շահարկումներն արտաքուստ թուլացել են, այնուհանդերձ միմյանց նկատմամբ քողարկված քարոզչությունը շարունակվում է[54]: Բաքուն շարունակում է կիրառել Իրանի հետ հարաբերությունները սեր-

[52] Иран и Азербайджан договорились по кредиту на строительство железной дороги, 11.06.2016, https://ria.ru/economy/20160611/1445787868.html

[53] Railroad Connecting Iran, Azerbaijan Comes into Operation, Iran Business News, 6 March 2017, http://www.iran-bn.com/2017/03/06/railroad-connecting-iran-azerbaijan-comes-into-operationConnecOperati

[54] Sti'u Valiyev Anar, Iranian soft power in Azerbaijan Does religion matter?, Religion and Soft Power in South Caucasus, Ed. By Ansgar Judikcke, New York, Routledge, 2017, pp. 81-104.

տացնելու ուղղությամբ իր խուսանավման ավանդական ուղեգիծը և միաժամանակ քայլեր է ձեռնարկում՝ կանխելու Իրանի շիայական ազդեցության ուժեղացումը երկրում: Իրանը ևս շարունակում է անվստահությամբ ընկալել Բաքվի քաղաքական քայլերը մասնավորապես Իսրայելի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների սերտացման համատեքստում[55]:

Ադրբեջանը ներգրավված է ռուսական գերակայությունը խոչընդոտող տարածաշրջանային մի շարք էներգետիկ և ենթակառուցվածքային նախագծերում, ինչպիսիք են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, Տրանսանատոլիական գազամուղը և Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծը[56] և Բաքուն առանձնակի հետաքրքրություն չի դրսևորում ո՛չ ԵԱՏՄ-ին ինտեգրվելու, ո՛չ ՀԱՊԿ-ի անդամակցության հարցերում, ինչը հստակորեն խոչընդոտում է տարածաշրջանային ռուսական ինտեգրացիոն ծրագրերը: Մյուս կարևոր հանգամանքը Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան առանցքում ծավալվող ռազմավարական համագործակցությունն է[57], ինչպես նաև աբխազական երկաթուղու վերագործարկման հարցում վրացական իշխանությունների բացասական դիրքորոշումը: Երեք երկրների լիարժեք երկխոսության ձևավորման համար կարևոր խոչընդոտ է նաև Կասպից ծովի իրավական կարգավիճակի չլուծված խնդիրը[58]:

[55] Rahimov R., Armenia-Iran Versus Azerbaijan-Israel: Where Is Russia?,The Jamestown foundation, 30.01.2017, https://jamestown.org/program/armenia-iran-versus-azerbaijan-israel-russia/

[56] Azerbaijan Courts Russia and Iran, Stratfor, august 19, 2016, https://www.stratfor.com/analysis/azerbaijan-courts-russia-and-iran

[57] Will Iran play peacemaker between Russia, Turkey?, http://www.al-monitor.com/pulse/originals/2015/12/iran-mediate-russia-turkey-shoot-plane.html

[58] Թեհրանը չի ճանաչում Կասպից ծովի պաշարների բաժանման շուրջ Ռուսաստանի, Ադրբեջանի և Ղազախստանի երկկողմ (Ռուսաստան-Ղազախստան, 1998 թ., Ռուսաստան-Ադրբեջան, 2001 թ., Ադրբեջան-Ղազախստան, 2001 թ.) և այդ երկրների միջև եռակողմ (2003 թ.) պայմանագրերի օրինականությունը, որի համաձայն՝ Ռուսաստանին բաժին է ընկնում ծովի 19 %-ը, Ադրբեջանին՝ 18 %, Ղազախստանին՝ 27 %, իսկ Իրանի և Թուրքմենստանի միջև հարավային հատվածի 36 %-ից Իրանի մասնաբաժինը կազմում է մոտավորապես 14 %: Պաշտոնական Թեհրանը գտնում է, որ ծովի պաշարները պետք է բաժանվեն հինգ հավասար մասերի՝ 20% մասնաբաժնով:

Հաշվի առնելով այդ իրողությունները՝ Ռուսաստանը հստակ քայլեր է ձեռնարկում, Կասպից ծովում իր հանգույցի մրցունակությունը բարձրացնելու ուղղությամբ, Պարսից ծոցի հետ իրանական տարանցիկով կայուն կապ ապահովելու համար, ինչը թույլ կտա նվազեցնելու ադրբեջանական և ղազախական ցամաքային հաղորդակցությունից կախվածությունը: Այդ կապակցությամբ 2017 թ. նոյեմբերին ՌԴ կառավարությունն ընդունեց Կասպից ծովի ավազանում Ռուսաստանի աշխարհաքաղաքական և տնտեսական դիրքերի ամրապնդման նոր ռազմավարությունը, որով ծրագրվում է մինչև 2030 թ. զարգացման նոր մակարդակի հասցնել ռուսական նավահանգիստները և դրանց միացող երկաթուղային և մայրուղային ճանապարհները[59]: Այն միտված է Կասպիցի ռուսական տրանսպորտային հանգույցի կիրառմամբ և լոգիստիկ միջանցքի ստեղծմամբ, վարչական ընթացակարգերի պարզեցմամբ, փոխադրման սակագների իջեցմամբ ընդլայնել ռուսական և իրանական նավահանգիստների միջև հաղորդակցությունը և մեծացնել առևտրաշրջանառության ծավալները Պարսից ծոցի երկրների ու Հնդկաստանի հետ:

Գաղտնիք չէ նաև, որ Հայաստանի տրանսպորտային մեկուսացումը հռչակելով իր արտաքին քաղաքականության գերակա խնդիր՝ Ադրբեջանը Ռաշթ-Ասթարա երկաթուղու կառուցումը դիտում է որպես Իրան-Հայաստան երկաթգծի կենսագործման խոչընդոտ և ՀՀ-ի՝ տարածաշրջանային տրանսպորտային նախագծերին մասնակցությունը սահմանափակելու գործուն միջոց, իսկ ավելի նեղ իմաստով շահարկում է ղարաբաղյան հակամարտության լուծման իր գործիքակազմում: Հստակ գիտակցելով ադրբեջանական քաղաքականության տրամաբանությունը՝ Թեհրանն ու Մոսկվան հազիվ թե պատրաստ լինեն սպասարկելու Բաքվի նկրտումները նաև այս համատեքստում:

Այսպիսով, տրանսպորտային ծրագրերը թեպետ Իրան-Ռուսաստան-Ադրբեջան նոր մեկնարկած երկխոսությունում

[59] Об утверждении Стратегии развития российских морских портов в Каспийском бассейне, Распоряжение от 8 ноября 2017 года № 2469-р, 11.11.2017, Правительство России, http://government.ru/docs/30086/

կենտրոնական տեղ են զբաղեցնում, այնուամենայնիվ դրանց հեռանկարները բավականին մշուշոտ են: Երկաթգծի ապագան շարունակում է մեծապես կախված մնալ երկրների քաղաքական հարաբերություններից և աշխարհաքաղաքական շահերից:

Եզրակացություն

Միջուկային խնդրի կարգավորումից հետո միջազգային տրանսպորտային ծրագրերում Հնդկաստանի, Չինաստանի, Պարսից ծոցի երկրների, ինչպես նաև Ռուսաստանի և ԵՄ-ի լայնածավալ շուկաների միջև իրանական տարանցիկ միջանցքի կիրառմամբ ուղիղ երկաթուղային կապ հաստատելու հնարավորություններն աճել են: Այս համատեքստում Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի մաս կազմող Ղազվին-Ռաշթ-Ասթարա երկաթգծի կառուցման խնդիրն աշխարհաքաղաքական նոր երանգավորում է ձեռք բերել: Շեշտադրվում է, որ վերոնշյալ երկաթգծի կենսագործումը և դրա համադրումը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի հետ էապես ամրապնդելու են Ադրբեջանի՝ որպես տարածաշրջանային տարանցիկ պետության, դիրքերը: Սակայն գնահատելով երկաթգծի շինարարության հետպատժամիջոցային դինամիկան՝ կարելի է փաստել, որ Բաքվի հետ առկա մի շարք չլուծված տարածայնությունների հաշվառմամբ Թեհրանը շարունակում է ճկունություն դրսևորել և կիրառելով երկաթուղու կառուցման ձգձգման մարտավարությունը՝ փորձում է ստիպել Բաքվին հաշվի նստել իր շահերի հետ:

Մոսկվա-Թեհրան-Բաքու առանցքում նոր լիցք ստացած իրանա-ադրբեջանական երկաթուղու շինարարության հարցը ևս բավականին ժամանակ և երկխոսության բարդ ու բազմաշերտ գործընթաց կպահանջի, որի վկայությունն ինչպես Իրանի և Ադրբեջանի, այնպես էլ Ռուսաստանի և Ադրբեջանի միջև պարբերական սառեցման և ջերմացման ձևաչափով զարգացող հարաբերություններն են: Նման պայմաններում իրանա-ադրբեջանական հարաբերությունների լարվածության նոր ալիքն իր անուղղակի անդրադարձը կարող է ունենալ եր-

կաթգծի կենսագործման վրա, և այս համատեքստում չի բացառվում, որ իրանական կողմը անգամ դրա կառուցման պարագայում հետագայում կիրառի երկաթգծի շահագործման կասեցման մարտավարություն:

Իրանն ինքն է հավակնում վերածվելու եվրասիական տրանսպորտային առանցքային խաչմերուկի: Տրանսպորտային երթուղիների դիվերսիֆիկացմամբ, երկաթուղային ներքին ուղղությունների արդիականացմամբ եվրասիական տարանցիկ միջանցքներում մեծացնելով իր ներգրավվածությունը՝ Իրանն դեպի իր տարանցիկ է ձգտում ներգրավել Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք ուղղություններով բեռնափոխադրումային լրացուցիչ հոսքեր և ծավալներ: Իրանական կառավարության առաջնային խնդիրներից է Թուրքիայի շրջանցմամբ դեպի Եվրոպա, Միջերկրական և Սև ծովերով, այլընտրանքային ելքերի ապահովումը, որի նպատակներից է Բաքվի աշխարհաքաղաքական և աշխարահատնտեսական նկրտումների զսպումը, տարածաշրջանում թուրքական գործոնի հակակշռումն ու ազդեցության նվազեցումը:

ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ներածություն

Հակամարտությունները, չնայած նմանություններին և ընդհանուր տրամաբանության հատումներին, տարբերվում են միմյանցից թե՛ ներքին գործոններով՝ կողմերի առանձնահատկություններ, նրանց հարաբերություններ, պատմություն, թե՛ դրանց վրա տարածաշրջանային և միջազգային աշխարհաքաղաքական գործընթացների, երրորդ երկրների շահերի ազդեցությամբ:

Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս դուրս բերելու տարբեր հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա ազդող գործոնները, կարգավորման համար անհրաժեշտ պայմանները և բախումնային առանձին դրույթների հաղթահարման ուղիները: Հակամարտությունների համեմատական վերլուծությունը, որն իրականացվում է սահմանափակ թվով հակամարտությունների խորքային և համատեքստային վերլուծության միջոցով, հնարավորություն է տալիս կատարելու մի կողմից առավել արդյունավետ համատեքստային վերլուծություն, մյուս կողմից առավել համակարգված չափումներ և հիպոթեզերի փորձարկում[1]:

Ստորև առանձնացված են միջազգային փորձի այն հիմնական դրույթները, որոնք կարող են նշանակություն ունենալ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի

[1] Collier D., The Comparative Method, Political Science: The State of the Discipline II, Washington, D.C.: American Political Science Association, 1993, pp. 105-119.

համատեքստում. անցկացված է համադրական վերլուծություն բախումնային դրույթների հաղթահարման ղարաբաղյան հակամարտության փորձի հետ, մատնանշված են հիմնական նմանություններն ու տարբերությունները:

Դիտարկման համար ընտրվել են Կիպրոսի հակամարտությունը՝ որպես ղարաբաղյան հակամարտությանը մոդելային տեսակետից առավել մոտ հակամարտություն, Կոսովոյի հակամարտությունը՝ որպես մոդելային նմանություն ունեցող և միջազգային ճանաչում ստացած ինքնորոշման օրինակ, Հյուսիսային Իռլանդիայի օրինակը՝ որպես ռազմական փուլից հետո բանակցային կարգավորման օրինակ՝ ինքնավարության տրամադրման մոդելով, և Շոտլանդիայի օրինակը՝ որպես հանրաքվեի միջոցով կարգավիճակի որոշման ոչ հօգուտ անկախացման, ինչպես նաև Արևելյան Թիմորի օրինակը՝ որպես ֆիզիկական գոյության պահպանման համար անկախացման օրինակ:

Կիպրոսի հակամարտության պարագայում կարգավիճակի հարցի զուգահեռումը ղարաբաղյան հակամարտության հետ նպատակահարմար չէ՝ ելնելով այն հանգամանքից, որ կիպրական կարգավորման հիմքում դրվում է կիպրական կղզու վերամիավորման հարցը, ինչն ընդունելի է երկու կողմերի համար էլ որպես բանակցությունների հիմք: Կիպրական հակամարտության ներքո հիմնական բախումնային դրույթը կղզու կառավարման կարգն է՝ միավորված պետության ներքո կղզու երկու հատվածների լիազորությունների բաշխումը: Մինչդեռ ղարաբաղյան հակամարտության դեպքում ֆեդերացիայի ձևավորումը՝ որպես կարգավորման հնարավոր տարբերակ, այլևս արդիական չէ, քանի որ 1998թ. Ադրբեջանի կողմից մերժվել է, երբ պաշտոնական Բաքուն մերժել է «Ընդհանուր պետություն» փաթեթը: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի դինամիկան հանգեցրել է նրան, որ կարգավիճակի հարցը բացառապես պայմանավորվում է ժողովրդի կամարտահայտմամբ:

Կիպրոսի հակամարտության կարգավորման գործընթացում տարածքների վերադարձը դիտարկվում է որպես անհրաժեշտ քայլ, բայց միայն բոլոր մյուս բախումնային դրույթներ

ների հաղթահարումից հետո: Բացի այդ, կարգավորման տարբեր փուլերում տարածքների վերադարձի դիմաց ենթադրվել է թուրք-կիպրոսցիներին տրամադրել փոխհատուցում, ֆինանսական աջակցություն, ինչպես նաև տարածքների վերադարձի հարցը կախվածության մեջ է դրվել անվտանգության երաշխիքներից[2]:

Փախստականների վերադարձի հարցը դիտարկվում է մի քանի այլ դրույթների հետ նույն փաթեթի ներքո՝ վերադարձի վայրերում նրանց թվային գերակշռում թույլ չտալը, այդ բնակավայրերից հեռացող թուրք-կիպրոսցիներին փոխհատուցում տրամադրելը և այլն: Ղարաբաղյան հակամարտության պարագայում բանակցային գործընթացի այս փուլում փախստականների վերադարձի հարցին առավել մանրամասն անդրադարձ դեռևս չի կատարվում: Սակայն ղարաբաղյան հակամարտության բանակցությունների ենթադրվող հաջորդ փուլում՝ կարգավորման շրջանակային պայմանագրում, փախստականների հարցի հիմքում կարևոր է դնել երկու դրույթ՝ փախստականների միակողմանի վերադարձի անընդունելի լինելը, վերադարձը չի կարող լինել ընդհանրական: Դա նշանակում է, որ պետք է նախատեսվի նաև պատերազմի ժամանակ Ադրբեջանը լքած հայերի վերադարձ կամ փոխհատուցման տրամադրում, իսկ ադրբեջանցի փախստականները պետք է վերադառնան միայն Ադրբեջանի վերահսկողության ներքո հանձնվող տարածքներ՝ նրանց թվային գերակշռում թույլ չտալու և լարվածության նոր օջախներ չառաջացնելու համար: Այդ փուլում արդեն, ինչպես և կիպրական խնդրի պարագայում, կարող են հիմքում դրվել թվային գերակշռում թույլ չտալու և անվտանգության ապահովման հարցերը:

Խաղաղապահների հարցը քննարկվում է երկու հակամարտությունների պարագայում էլ, սակայն ոչ մեկում չկա այս հարցի շուրջ հստակություն: Կողմերի միջև վստահության միջոցների տեսակետից կիպրական կղզում կարևոր է ռազմական գործողությունների, սահմանային լարվածության բա-

[2] Migdalovitz C., Cyprus: Status of U.N. Negotiations, CRS Issue Brief for Congress, Congressional Research Service, May 19, 2005, https://fas.org/sgp/crs/mideast/IB89140.pdf

ցակայությունը, ինչը մեծացնում է խաղաղ երկխոսության հաջողության հնարավորությունը: Մյուս կարևոր քայլն Էրջանի օդանավակայանի շահագործումն է՝ Հյուսիսային Կիպրոսի չճանաչված լինելու պարագայում գտնված իրավական որոշ լուծումների շնորհիվ[3], ինչը Կիպրոսի Հանրապետությունը չի խոչընդոտում: Այս վստահության միջոցները հնարավոր են դարձրել խաղաղ բանակցություններն ու ընթացող բանակցությունների նկատմամբ վստահությունն ու իրական կարգավորման ակնկալիքները: Մինչդեռ Ադրբեջանն ամեն կերպ խոչընդոտում է Ստեփանակերտի օդանավակայանի շահագործումը՝ անկախ դրա հումանիտար նշանակությունից: Բացի այդ, կիպրական հակամարտության կողմերի միջև ապահովված է մարդկանց ազատ տեղաշարժ. նույնիսկ իրականացվել է վիզային ռեժիմի ազատականացում:

2004թ. հանրաքվեից հետո, չնայած հասարակությունների մոտ ֆրուստրացիոն գործընթացներին, բանակցությունների վերսկսման, երկխոսության հաստատման հարցում մեծ նշանակություն են ունեցել երկու կողմերի հասարակությունները, ՀԿ ներկայացուցիչները, որոնք ցույցեր են անցկացրել՝ պահանջելով միավորել կղզին: Այդ գործընթացում կարևոր դեր են խաղացել «Կանաչ գծի» բացումը[4] և հասարակությունների միջև շփումների ակտիվացումը, նախկին բնակության վայրեր այցելելու հնարավորության ընձեռումը: Մարդկանց միջև շփումն առաջացրել է կարգավորման պահանջ «ներքևից վերև», որն իշխանության է բերել կարգավորման ուղիներ փնտրող քաղաքական ուժերին[5]: Մինչդեռ ղարաբաղյան հակամարտության պարագայում Ադրբեջանի իշխանությունների ներկայիս քաղաքականությունն ամեն կերպ խոչընդոտում է հասարակությունների միջև շփումներ և ժողովրդական դիվանագիտությունը:

Կիպրական հիմնախնդրի կարգավորման և մասնավորապես կողմերի միջև երկխոսության հնարավորության մեծացման, Հյուսիսային Կիպրոսում ժողովրդավարական ինստիտուտների զարգացման, ընդհանուր չափորոշիչների տեղայնացման հարցում մեծ է ԵՄ-ի դերակատարումը: Չնայած Հյուսիսային Կիպրոսի չճանաչված լինելուն՝ ԵՄ-ն ակտիվ համագործակցում է կղզու հյուսիսային հատվածի հետ՝ այդ կերպ նպաստելով վերջինիս բնականոն զարգացմանն ու կղզու երկու հատվածների միջև տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում առկա տարբերությունների հաղթահարմանը:

Կիպրոսի պարագայում առկա է նաև դերակատարների հստակություն՝ ի դեմս երեք երաշխավոր երկրների՝ Հունաստանի, Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի, որոնք մի կողմից՝ անմիջական շահագրգռվածություն ունեն հակամարտության կարգավորման ելքերի հարցում, մյուս կողմից՝ խորքային պատկերացում ունեն հակամարտության բոլոր բաղադրիչների վերաբերյալ: Ղարաբաղյան հակամարտության պարագայում երրորդ երկրների՝ ի դեմս հարևան երկրների, ներգրավումն ու ազդեցությունը գործընթացի վրա ավելի բազմաշերտ է: Բայց ի տարբերություն Կիպրոսի միջնորդ և երաշխավոր հիմնական երկրները՝ ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա, ՄԱԿ-ի ԱԽ մշտական անդամ

[3] 1975թ. փետրվարից կղզու և մայր ցամաքի միջև կապը պահպանելու նպատակով այն սկսել է շահագործվել՝ հիմնվելով հետևյալ փաստարկի վրա, որ «կղզու հարավային հատվածը հրաժարվում է ծառայություններ մատուցելուց Կանաչ գոտուց հյուսիս ընկած ազգաբնակչությանը»: Օդանավակայանի շահագործումն իրականացվում է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (International Civil Aviation Organization (ICAO)) չափորոշիչներին համապատասխան, թեև ICAO-ն այն չի ճանաչում որպես Կիպրոսի տարածքում օրինական գրանցված օդանավակայան: Կիպրոսի թուրքական հատվածի և Թուրքիայի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի վարչությունների միջև կնքված պայմանագիրը համարվում է փոխգործակցությունը կարգավորող հիմնական փաստաթուղթ:

[4] 1974 թ.-ից «Կանաչ գիծը» բաժանում է կղզու երկու հատվածները: ԵՄ «Կանաչ գիծ» կանոնակարգը սահմանում է այն պայմանները, որոնց ներքո մարդիկ և ապրանքները կարող են հատել այս գիծը, որը ԵՄ արտաքին սահմանչէ: Գլխավոր գործնական արդյունքն այն է, որ հյուսիսային շրջանները դուրս են ԵՄ մաքսային և ֆիսկալ տարածքից, բայց սա չի ազդում թուրք-կիպրոսցիների՝ իբրև ԵՄ քաղաքացիների իրավունքների վրա:

[5] Hadjipavlou M., The "Crossings" along the Divide: The Cypriot Experience, The Walls between Conflict and Peace, Edited by Alberto Gasparini, Brill Academic Pub, 2017, pp. 197-215.

են, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ հնարավոր համաձայնությունը կյանքի կոչելու հարցում:

Կոսովոյի հակամարտության կարգավորման գործընթացի դիտարկումը հնարավորություն է տալիս եզրակացություններ անելու միջազգային ուժերի ակտիվ և ուղղակի ներգրավմամբ հակամարտության կարգավորման արդյունավետության վերաբերյալ և դուրս բերելու այն հիմնական խնդիրները, որոնք լուծել չի հաջողվում նույնիսկ այդ դեպքում:

Կարգավիճակի որոշման հարցում Կոսովոյում որոշիչ ազդեցություն է ունեցել միջազգային հանրությունը, մասնավորապես ՆԱՏՕ-ի մեծ աջակցությունը: Կոսովոն միակողմանի հռչակել է իր անկախությունը՝ համաձայնության չգալով Սերբիայի հետ, ինչին հասել է միջազգային հանրության աջակցությամբ և ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ 100-ից ավելի երկրների կողմից[6]: Կոսովոյում ալբանական պետության ստեղծումը պայմանավորված էր արտաքին ուժերի գործողությամբ, ինչի օրինականացման փորձ կատարվեց այն երկրների կողմից, որոնք ճանաչեցին Կոսովոյի անկախությունը: Նախքան ՆԱՏՕ-ի միջամտությունն ալբանացիները փոքրամասնություն էին կազմում Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության անկման հետևանքով առաջացած Սերբիայի Հանրապետությունում: ՆԱՏՕ-ի միջամտությունից հետո ալբանացիները մեծամասնություն կազմեցին Կոսովոյում, որտեղ սերբերը դարձան փոքրամասնություն[7]: Ղարաբաղյան հակամարտության պարագայում անկախության հռչակումը, չնայած իրավական հիմքերին, ոչ միայն չի ստացել միջազգային աջակցություն, այլև հանգեցրել է ֆիզիկական գոյության սպառնալիքի՝ ի դեմս Ադրբեջանի սանձազերծած պատերազմի:

Կոսովոյի, ինչպես նաև Կիպրոսի հակամարտության պարագայում կարևոր դերակատարում է ունեցել այն հանգամանքը, որ բանակցություններն ընթանում են անմիջական կողմերի՝ Կոսովոյի և Սերբիայի միջև, մինչդեռ ղարաբաղյան կարգավորման գործընթացում Ադրբեջանը հրաժարվում է Արցախի հետ ուղղակի բանակցություններ անցկացնելուց:

Կոսովոյում մեծ է միջազգային աջակցությունն ինչպես դեռևս ակտիվ հակամարտության, այնպես էլ հետկոնֆլիկտային փուլերում՝ ի դեմս Կոսովոյի պետական ինստիտուտների կայացման, զարգացման գործընթացում ԵՄ-ի ուղղակի ներգրավման և ֆինանսական ու տեխնիկական աջակցության:

Փախստականների հարցում Կոսովոյի օրինակը ցույց է տալիս, որ չնայած նույնիսկ չի իրականացվել փախստականների լիարժեք վերադարձ, այնուամենայնիվ համակեցության կազմակերպումը մեծ խնդիր է, որ պետության տարածքում ձևավորում է փակ համայնքներ, չկառավարվող տարածքներ: Այն, որ սերբերն այսօր Կոսովոյում ապրում են առանձին, փակ շրջանում և չեն ենթարկվում Կոսովոյի իշխանություններին՝ միաժամանակ ստեղծելով սահմանային լարվածություն Սերբիայի հետ[8], ցույց է տալիս, որ նույնիսկ միջազգային ներկայությամբ անվտանգության երաշխիքների ապահովումը չի չեզոքացնում փախստականների վերադարձից բխող համակեցության խնդիրները:

Հյուսիսային Իռլանդիայի հակամարտության կարգավորման գործընթացը կարող է դիտարկվել որպես «մոդելային օրինակ» այլ հակամարտությունների համար, քանի որ ցույց է տալիս, որ նույնիսկ ամենածգձգված հակամարտությունները կարող են լուծում ստանալ, և նույնիսկ ամենածայրահեղական դիրքորոշում ունեցող ուժերի ներգրավումը բանակցություններում կարևոր է խաղաղության հաստատման համար[9]:

[6] Countries that have recognized Kosovo as an independent state, http://beinkosovo.com/en/countries-that-have-recognized-kosovo-as-an-independent-state

[7] Խարալամբիդիս Յ., Տրոյական պատերազմը և «Պրահայի հախճապակին». Կիպրոսի, Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների համեմատական վերլուծություն, «21- րդ ԴԱՐ », թիվ 2 (54), 2014 թ ., էջ 32:

[8] Sterio M., The Case of Kosovo: Self-Determination, Secession, and Statehood Under International Law, Proceedings of the Annual Meeting (American Society of International Law), Vol. 104, International Law in a Time of Change, 2010, pp. 361-365.

[9] Hughes J., Reconstruction Without Reconciliation: Is Northern Ireland a "Model"?, After Civil War Division, Reconstruction, and Reconciliation in Contemporary Europe, edited by Bill Kissane, University of Pennsylvania Press, 2015, pp. 245-272.

Այս հակամարտության կարգավորման փորձն ուշագրավ է այն համատեքստում, որ լարվածության աճի փուլում բախումներից խուսափելու համար որոշում է կայացվել հանրաքվեի անցկացման վերաբերյալ: Հանրաքվեն դիտարկվել է որպես Հյուսիսային Իռլանդիայի կարգավիճակի հարցի կարգավորման առավել լեգիտիմ ճանապարհ, որը հնարավորություն կտա խուսափելու ռազմական բախումների վերսկսումից: Միջազգային այդ ընկալմամբ է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ երկարատև անարդյունավետ բանակցություններից և կարգավորման տարբեր փաթեթների մերժումից հետո ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի միջնորդներն առաջարկել են վերջնական կարգավիճակը որոշել հանրաքվեի միջոցով:

Հյուսիսիռլանդական բանակցություններն ու կարգավորման ձախողված փորձերը ցույց են տվել, որ հակամարտության կարգավորումն առանց բոլոր կողմերն ընդգրկող բանակցությունների հնարավոր չէ: Այդ պատճառով Բելֆաստի պայմանագրի բանակցություններում ներգրավվել են բոլոր քաղաքական ուժերը, այդ թվում՝ իռլանդական հանրապետական բանակի քաղաքական թևը[10]: Այս հանգամանքը մեկ անգամ ևս հիմնավորում է բանակցություններում Արցախի լիարժեք ներգրավման անհրաժեշտությունը:

Չնայած կարգավորման փուլերի մեծ տարբերությանը՝ հյուսիսիռլանդական հակամարտության փորձը նույնպես ցույց է տալիս, որ կարգավորման գործընթացում և հատկապես թեժ փուլում հրադադարի ռեժիմի խախտումների դեպքում կարևոր խնդիր է միջնորդների անհասցեականությունը, սրող կողմի անպատժելիությունը: Իռլանդական հակամարտության կարգավորման գործընթացի հիմքում այդ խնդրի հաղթահարման նպատակով ներդրվել են Միտչելի սկզբունքները հրադադարի պահպանման մասին, ըստ որոնց, խախտող կողմը դուրս էր մղվում բանակցային գործընթացից: Դա և ընդհանրապես այս հակամարտության կարգավորման գործընթացը կառուցված են «մտրակի և բլիթի» սկզբունքի վրա, որը պայմանավորվածությունների պահպանման համար ենթադրում է խրախուսում, իսկ խախտման դեպքում՝ պատիժ: Այս մեխանիզմի ներդրումը կարող է առաջընթաց ապահովել նաև ղարաբաղյան հակամարտության պարագայում:

[10] O'Leary B., "Afterword: What is Framed in the Framework Documents," in Ethnic and Racial Studies 18, № 4, October 1995, p. 867.

Արցախի պարագայում շատ սահմանափակ է արտաքին աջակցությունը ժողովրդավարացման, պետական ինստիտուտների զարգացման գործընթացներում: Արցախին պետական մակարդակով ֆինանսական աջակցություն է տրամադրվում բացառապես ՀՀ-ի և մասամբ ԱՄՆ-ի կողմից: ԵՄ-ն առավելապես հանդես է գալիս հետկոնֆլիկտային վերականգնման փուլում աջակցություն ապահովողի դերում: Մինչդեռ Հյուսիսային Իռլանդիայի դեպքում ԵՄ-ն 1989թ.-ից ֆինանսական աջակցություն է տրամադրում խաղաղ կարգավորման համար, աջակցում է Հյուսիս-Հարավ անդրսահմանային համագործակցությանը, դերակատարում է ստանձնել փոխվստահության հաստատման և տնտեսական համագործակցության իրավական հիմքի ապահովման գործընթացում: Հյուսիսիռլանդական օրինակը ցույց է տալիս, որ արտաքին աջակցությունը կողմերի միջև երկխոսության կառուցման, ինչպես նաև հակամարտության կողմերի բնականոն զարգացման հարցերում մեծ դերակատարում է ստանում ընդհանուր հակամարտության կարգավորման համատեքստում:

Համակեցության խնդիրը, ինչպես Կոսովոյի պարագայում, առկա է նաև Հյուսիսային Իռլանդիայում: Չնայած երկարատև բանակցությունների և հետևողական գործընթացի միջոցով հաջողվել է հասնել խաղաղության համաձայնագրի ստորագրմանը և հաղթահարել հակամարտության սուր փուլերը հյուսիսիռլանդական հակամարտությունը վերջնականապես կարգավորված համարել հնարավոր չէ: Մշտապես պահպանվում են լարվածությունը և խաղաղության փխրունությունը, և, օրինակ, ԵՄ-ի կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու հարցը ևս մեկ անգամ անկայունության սպառնալիք առաջացրեց այս տարածաշրջանում: Պահպանվող սպառնալիքի պատճառը կրկին հակամարտող երկու կողմերի համակեցությունն է՝ անգլիացիների և իռլանդացիների խաղաղ գոյակցության փորձը Հյուսիսային Իռլանդիայում: Չնայած ստեղծ-

ված պաշտոնական մեխանիզմներին և իշխանության լծակների բաշխմանը՝ այս փորձն ակնհայտորեն ցույց է տալիս, որ իբրև թե հակամարտության կարգավորման նպատակով հակամարտող ժողովուրդներին արհեստական համակեցություն պարտադրելը մշտապես պահպանում է հակամարտության վերսկսման սպառնալիքը:

Շոտլանդիայի անկախության հանրաքվեն օրինակ է կողմերի միջև կառուցողական երկխոսության, որը նույնիսկ իրավական անհրաժեշտ հիմքի բացակայության պարագայում հակասությունների խորացում թույլ չտալու նպատակով ստեղծեց անհրաժեշտ իրավական հիմքը և հարցի կարգավորման հիմքում դրեց ժողովրդի կամարտահայտումը:

Քաղաքակիրթ այս երկխոսության համատեքստում կարևոր է նաև, որ Մեծ Բրիտանիան, ի դեմս հիմնական բանակցողների՝ վարչապետի, համաձայնել է ընդունել հանրաքվեի ցանկացած արդյունք և չի խոսել Շոտլանդիայի անկախացման հարցը Միացյալ Թագավորության ողջ տարածքում հանրաքվեի դնելու մասին: Մինչդեռ Ադրբեջանի կողմից հարց է բարձրացվում ամբողջ Ադրբեջանում հանրաքվե անցկացնելու վերաբերյալ: Սակայն ազգի ինքնորոշումը բացառապես իր կամարտահայտման արդյունք է և չի կարող կախվածության մեջ դրվել այլ ժողովուրդներից և պետություններից:

Շոտլանդիայի օրինակը նաև ցույց է տալիս, թե ինչպես են եվրահնտեգրման և ինքնավարության աստիճանի փոփոխություններն ազդում ազգային գիտակցության, նույնականացման վրա: Այս երկու գործընթացները մեծացրել են շոտլանդացիների տարածքային ինքնանույնականացումը, ազգային ինքնության կարևորումը և ինքնորոշման ավելի բարձր մակարդակի ձգտումը: Դրան զուգահեռ ազգայինի հետ մեկտեղ ամրապնդվել են նաև քաղաքացիական ինքնագիտակցությունը և ինքնանույնացումը[11]:

Արևելյան Թիմորի անկախացման գործընթացը մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից դրդված ազգային ինքնորոշման և դրա միջազգային ճանաչման

[11] Фадеева Л., Идентичность на пересечении интеграции и деволюции: шотландский кейс, «Современная Европа», № 5, 2015, с. 91-99.

օրինակ է: Արևելյան Թիմորի անկախությունը ՄԱԿ-ի կողմից ճանաչվել է այդ երկրում Ինդոնեզիայի կողմից իրականացվող մարդու իրավունքների զանգվածային խախտումները կանխելու նպատակով:

Այս պարագայում, եթե անմիջապես հակամարտության կարգավորման գործընթացում շատ չեն զուգահեռման հնարավորությունները, ապա դրանք առկա են երկու առանձին բաղկացուցիչներում:

Օրինակ, Ապրիլյան պատերազմը, եթե շարունակություն ունենար և չհաջողվեր կանխել դրա՝ երկարատև պատերազմի վերաճումը, այն կարող էր ցույց տալ միջազգային հանրությանը, որ միակ անվտանգության երաշխիքն անկախության ճանաչումն է: Սակայն սա ոչ բնական գործընթաց է, քանի որ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման, այդ գործընթացին միջազգային աջակցության հարցը պայմանավորվում է ոչ թե միջազգային իրավունքով և ամրագրված իրավունքի իրացմանն աջակցություն ցուցաբերելով, այլ ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգով և դրա չեզոքացման անհրաժեշտությամբ: Ինդոնեզիայի կազմում գտնվելու 24 տարիների ընթացքում Արևելյան Թիմորում տեղի են ունեցել մարդու իրավունքների մի շարք խախտումներ, այդ թվում՝ անկախացման ձգտումների բռնի ճնշումներ, զինված բախումներ և այլն: Արևելյան Թիմորում ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարության պահանջով CAVR (Comissao de Acolhimento, Verdade e Reconciliacao) հանձնաժողովի կողմից իրականացվել է Ինդոնեզիայի կառավարման ընթացքում՝ 1974-1999թթ., Արևելյան Թիմորում տեղի ունեցած բռնությունների գնահատում: Համաձայն զեկույցի տվյալների՝ հակամարտության պատճառով մահացել է 102 800 (+/- 12 000) մարդ, որոնցից մոտ 18 600-ը սպանվել է կամ անհետ կորել, 84 200-ը մահացել է սովից և հիվանդություններից[12]:

Մյուս խնդիրը միջազգային հանրության ուշադրությունն է փակ համակարգերի նկատմամբ: Արևելյան Թիմորի պարա-

[12] Conflict-Related Deathes in Timor-Leste 1974-1999, The findings of the CAVR Report CHEGA!, http://www.cavr-timorleste.org/updateFiles/english/CONFLICT-RELATED%20DEATHS.pdf

գայում միջազգային հանրության ուշադրությունը հաջողվեց սևեռել ինդոնեզական ուժերի կողմից իրականացվող զանգվածային ոչնչացման վրա միայն առանձին անհատների, նրանց գործադրած ջանքերի և ճանաչելիության շնորհիվ, ինչի արդյունքում ճանաչվեց Արևելյան Թիմորի անկախությունը՝ ցեղասպանություն թույլ չտալու համար: Որոշիչ դերակատարում են ունեցել Արևելյան Թիմորի նախկին վարչապետ և նախագահ Ժոզե Ռամուշ-Օրտան և արքեպիսկոպոս Կարլուշ Բելուն, ովքեր 1996թ. Խաղաղության Նոբելյան մրցանակի են արժանացել Արևելյան Թիմորի հակամարտության խաղաղ և արդար կարգավորման ուղղությամբ գործադրած ջանքերի համար: Նույն կերպ, եթե միջազգային հանրության ուշադրությունն առավել ակտիվ սևեռվեր ԽՍՀՄ-ի ներսում հասունացող ղարաբաղյան հակամարտության և ԽՍՀՄ-ի փլուզմանը զուգահեռ ընթացող գործընթացների վրա, ապա ակնհայտ կլիներ, որ Ադրբեջանի ծավալած գործողությունները պատերազմի որոշակի փուլերում սպառնում էին Ղարաբաղում *(օգտագործվում է «Ղարաբաղ» եզրույթը՝ Արցախից կամ Արցախի Հանրապետությունից փարանջատելու նպատակով)* հայերի բնաջնջմամբ: Խորհրդային Միության տարիներին Ադրբեջանի իրականացրած խտրական քաղաքականության, այդ թվում՝ նպատակային հայաթափության մասին վկայում են մարդահամարի տվյալներն ու դրանց համադրումը բնական աճի ցուցիչների հետ: Բացի այդ, ԼՂԻՄ-ի նկատմամբ վարած խտրական քաղաքականության մասին արձանագրում է նաև ադրբեջանական կողմը: «Ադրբեջանական ԽՍՀ ժողտնտեսություն» ժողովածուի տվյալներով մեկ մարդուն բաժին ընկնող կապիտալ ներդրումների ծավալով ԼՂԻՄ ցուցանիշը 1981-1985թթ. ավելի քան երկու անգամ, իսկ 1986թ. 2,7 անգամ պակաս է եղել ողջ Ադրբեջանի միջին ցուցանիշից[13]:

Եթե Արևելյան Թիմորի պարագայում ՄԱԿ-ն իր հումանիտար պարտքն է կատարել՝ աջակցելով Արևելյան Թիմորի անկախացմանը, ապա Ղարաբաղի պարագայում ՄԱԿ-ը որևէ կերպ չի արձագանքել բնաջնջման սպառնալիքին, և այդ

[13] Народное хозяйство АзССР к 70-летию Великого Октября, Баку : Азернешр, 1987, с. 3, 11, 270, 279.

խնդրի լուծումը Հայաստանի աջակցությամբ իր վրա է վերցրել Ղարաբաղի ժողովուրդը: Այս համատեքստի ներկայացումը միջազգային հանրությանը կարող է նպաստել հակամարտության բնույթի և նման զարգացման պատճառների մասին ամբողջական պատկերացման ձևավորմանը, ինչը կարող է հանգեցնել նաև միջազգային հանրության ընկալումների որոշակի փոփոխության:

Բացի այդ, վերլուծությունները ցույց են տալիս, որ ՄԱԿ-ի առաքելությունն Արևելյան Թիմորում ունեցել է մի շարք բացթողումներ, որոնք բխում են հակամարտության վերաբերյալ խորքային պատկերացում չունենալուց, իրավիճակին հակամարտության ողջ ընթացքում չհետևելուց, տեղական առանձնահատկությունները հաշվի չառնելուց[14]: Նույն խնդիրն առկա է նաև Արցախի պարագայում, քանի որ չճանաչվածության վրա հիմնվելով՝ միջազգային հանրությունը մշտական ներկայացուցչություն չի ապահովում Արցախում, ինչը կարող է նույնանման խնդիրներ առաջացնել, ինչ Թիմորում:

Եզրակացություն

Հակամարտությունների կարգավորման գործընթացների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ հակամարտությունների կարգավորման գործընթացում առաջընթաց ապահովելու համար կարևորագույն պայմանը բոլոր կողմերի ներգրավումն է բանակցություններում, պայմանավորվածությունների կատարման երաշխիքների ապահովումը, ինչը մեծապես կախված է կողմերի ժողովրդավարացման մակարդակից և միջազգային հանրության համապատասխան ներգրավումից: Կատարված հետազոտությունը թույլ է տալիս նաև արձանագրել, որ հակամարտության կողմերի քաղաքակրթական պատկանելությունը, արժեհամակարգն ուղղակիորեն ազդեցություն են ունենում քաղաքական բանակցությունների և հակամարտության կարգավորման վրա:

[14] Ofstad O., Reconciliation and conflict resolution in East Ttimor lessons for future peace operations, University of Oxford, 2012, http://www.elac.ox.ac.uk/downloads/Reconciliation%20and%20conflict%20resolution%20in%20East%20Timor%20Apr%202012.pdf

Վերոնշյալ վերլուծությունը հնարավորություն է տալիս, ընդունելով և կարևորելով հակամարտությունների տարբերություններն ու դրանց օրինակի միանշանակ կիրառման անթույլատրելիությունը, միևնույն ժամանակ հնարավորինս ամբողջական պատկերացում կազմելու ինքնորոշման իրավունքի շուրջ ծագող հակամարտությունների կարգավորման միջազգային փորձի վերաբերյալ: Իսկ դա, իր հերթին, կարևոր է հարկ եղած դեպքում առկա մեթոդաբանության և փորձի վրա հղում կատարելու, ինչպես նաև որոշ գործիքներ և մեխանիզմներ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի արդյունավետության բարձրացմանը ծառայեցնելու համար:

ԿԼՈՐ-ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

ԻՐԱՔՅԱՆ ՔՐԴՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՇՈՒՐՋ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Հոկտեմբերի 27-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ կլորսեղան քննարկում Իրաքյան Քրդստանում անկախության հանրաքվեի և դրա շուրջ զարգացումների վերաբերյալ: Քննարկմանը մասնակցում էին ինստիտուտի տարբեր բաժինների աշխատակիցներ: Քննարկումը բացեց ԱԻ տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը: Նա ընդգծեց թեմայի կարևորությունը թե՛ Հայաստանի համար, թե՛ աշխարհաքաղաքականության համատեքստում և հանդես եկավ իրավիճակի վերաբերյալ գնահատականով:

Հիմնական զեկույցով հանդես եկավ Միջազգային հարաբերությունների բաժնի գիտաշխատող Մուշեղ Ղահրիյանը: Նա անդրադարձավ Իրաքյան Քրդստանում անցկացված անկախության հանրաքվեի պատճառներին, հանրաքվեից առաջ քրդաբնակ շրջաններում քաղաքական, տնտեսական իրավիճակին: Մ. Ղահրիյանը ներկայացրեց նաև տարածաշրջանային պետությունների, ինչպես նաև գերտերությունների դիրքորոշումները քրդական հանրաքվեի հարցում և իրադարձությունների զարգացման մի շարք սցենարներ:

Բանախոսի և քննարկման մասնակիցների միջև, որից հետո ներկա մասնագետները հանդես եկան իրենց տեսակետներով, դիտարկումներով և նկատառումներով: Իրաքյան Քրդստանում և դրա շուրջ առկա իրավիճակի վերաբերյալ մասնավորապես գնահատականներով հանդես եկան պրոֆեսոր Վահան Բայբուրդյանը, ինստիտուտի աշխատակիցներ Տաթևիկ Մանուկյանը, Լևոն Հովսեփյանը, Արաքս Փաշայանը, Արմեն Մանվելյանը, Զվարթ Հովսեփյանը:

Քննարկման ընթացքում արծարծվեցին Քիրքուքում հնարավոր զարգացումներ, տարբեր երկրների կողմից քրդական անկախությանն աջակցելու կամ չընդունելու, նավթային,

քրդերի հասարակական կառուցվածքի և հարաբերությունների և մի շարք այլ թեմաներ:

Գնահատելով կլոր սեղանի ընթացքում հնչեցրած մոտեցումներն ու կարծիքները՝ Ռ. Սաֆրաստյանը նշեց, որ համոզված է, որ տեղի ունեցած հանրաքվեն պետք է դիտարկել լոկ քայլերից մեկը քրդական պետության ստեղծման երկար ու փշոտ ճանապարհին և չպետք է գերագնահատել դրա նշանակությունը: Միաժամանակ քրդական գործոնն իր ընկալմամբ աստիճանաբար կստանա ավելի մեծ նշանակություն, ինչը էլ ավելի կթեժացնի Մերձավոր Արևելքում ծավալվող աշխարհաքաղաքական հակամարտությունը գլոբալ ու տարածաշրջանային մի շարք ուժերի կենտրոնների միջև: Այն կարելի է որոշ չափով նմանեցնել XIX դարում Բրիտանական և Ռուսական կայսրությունների միջև ծավալված աշխարհաքաղաքական պայքարին, որը մասնագիտական գրականության մեջ ընդունված է բնութագրել որպես «Մեծ խաղ»: Ուժային կենտրոնների միջև աշխարհաքաղաքական հակամարտության թեժացումն իր հերթին կազդի քրդական գործոնի վրա, և նրա շուրջ ընթացող զարգացումները կստանան գիտական առումով էլ ավելի հետաքրքիր և միաժամանակ դժվար կանխատեսելի բնույթ: Այսպիսով, քրդական գործոնը դեռևս երկար է գտնվելու գիտական և քաղաքական քննարկումների առանցքում, որոնցում մեր ինստիտուտը նույնպես կունենա իր ներբերումը:

ՀԱՅ-ԼԵՀԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ

2017 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում կլոր սեղան անցկացվեց հայ-լեհական առնչությունների վերաբերյալ, որը կազմակերպել էին Արևելագիտության ինստիտուտը և Վարշավայի համալսարանը: Համառոտ զեկուցումներով հանդես եկան ԱԻ տնօրեն ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, ԱԻ Քրիստոնյա Արևելք բաժնի վարիչ Ազատ Բոզոյանը, ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ Հայկ Գրիգորյանը: Լեհական կողմից մասնակցում էին Վարշավայի համալսարանի իրավագիտության և կառավարման ֆակուլտետի ներկայացուցիչներ Յարոսլավ Տուրլուկովսկին, Միխալ Սադլովսկին, Պատրիկ Կալինովսկին և Յակուբ Խովանեցը:

Ռ. Սաֆրաստյանը և Յ. Տուրլուկովսկին հանդես եկան բացման խոսքով և բարձր գնահատեցին հայ-լեհական հարաբերություններն ու ընդգծեցին նման գիտական քննարկումներ անցկացնելու կարևորությունը:

Ազատ Բոզոյանը ներկայացրեց Լեհաստանում հայերի գործունեությունը և լեհական պետության հետ իրավապայմանագրային հարաբերությունները XIV-XVIII դարերում, հայերի կաթոլիկացման գործընթացը, ինչպես նաև հայկական համայնքի մշակութային և կրոնական կյանքը:

Հայկ Գրիգորյանն անդրադարձավ XIX դարում Ռուսական կայսրության դեմ լեհական ապստամբությունների վերաբերյալ արձագանքներին արևմտահայ և արևելահայ մամուլում: Նշվեց, որ եթե արևմըտահայ մամուլում համակրանք կար լեհական ապստամբությունների հանդեպ, ապա արևելահայ մամուլում ճիշտ հակառակ պատկերն էր. այդ մասին գրում էին քննադատաբար: Գրիգորյանն անդրադարձավ նաև XVIII դարում Լեհաստանի հայ համայնքի կյանքին, հայերի նկատմամբ Լեհաստանի իշխանությունների վարած քաղաքականությանը:

Հայ-լեհական հարաբերությունների արդի փուլի վերաբերյալ դիտարկումներով հանդես եկավ Ռ. Սաֆրաստյանը: Նա կարևորեց երկու երկրների կապերի զարգացումը հատկապես ներկայիս աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում: Ըստ ակադեմիկոս Սաֆրաստյանի՝ երկու երկրների հարաբերություններում հաղթահարվում է պասիվության շրջանը: Ռ. Սաֆրաստյանը հարաբերությունների զարգացման գործում ընդգծեց խորհրդարանական դիվանագիտության դերը:

Զեկուցումներից հետո քննարկում տեղի ունեցավ: Կլոր սեղանի մասնակիցները ներկայացրին իրենց տեսակետները պատմության և քաղաքականության մի շարք հարցերի վերաբերյալ:

ՍԻՐԻԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ

2017 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցած կլորսեղանի քննարկումը նվիրված էր սիրիական զարգացումներին: Զեկուցումներով հանդես եկան Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի գիտաշխատողներ պ.գ.թ. Արաքս Փաշայանը, պ.գ.թ. Գոռ Գևորգյանը և Արարատ Կոստանյանը: Քննարկումը վարում էր ԱԻ տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, ով հանդես եկավ ողջույնի խոսքով և քննարկվող թեմայի վերաբերյալ ներկայացրեց մի շարք դիտարկումներ:

Արաքս Փաշայանի զեկուցումը նվիրված էր սիրիայի ճգնաժամի հանգուցալուծմանը, այդ ուղղությամբ Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի քաղաքականության վերլուծությանը: Ա. Փաշայանը նշեց, որ ԴԱԵՇ-ի (Իրաքի և Լևանտի իսլամական պետություն) պարտությամբ Սիրիայում իրավիճակը կարծես թե մոտենում է իր հանգուցալուծմանը: Նոյեմբերի 11-ին սիրիա-իրաքյան սահմանին գտնվող Բուքամել բնակավայրի ազատագրումը ԴԱԵՇ-ից հանգուցային նշանակություն ուներ, քանի որ Սիրիայում ռազմական գործողություններին մասնակցող երկու դաշինքների միջև մրցակցություն էր ընթանում, թե ով առաջինն արդյունքի կհասնի: Այժմ Սիրիայի տարածքի մոտ 90 %-ը կառավարական ուժերի վերահսկողության տակ է:

Փաշայանի կարծիքով Սոչիում նոյեմբերի կեսերին Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի նախագահների մասնակցությամբ կայացած գագաթնաժողովն արձանագրեց, որ այդ երեք երկրները կարողացան գտնել Սիրիայի հակամարտության քաղաքական լուծման բանալին: Ռուսաստանը կարողացավ պահպանել ներկայությունը տարածաշրջանում, Թուրքիան ևս հաջողությունների հասավ՝ ամրապնդվելով Սիրիայի տարածքում և հակազդելով քրդական ինքնավարության ստեղծմանը, ինչպես նաև նավթը դուրս բերելով սև շուկա: Տարածաշրջանում իր դիրքերն ուժեղացրեց նաև Իրանը: Ա. Փաշայանը նշեց, որ

մի քանի տարի առաջ հնարավոր չէր անգամ պատկերացնել Ռուսաստան-Իրան-Թուրքիա համագործակցության ձևաչափի գոյությունը, որն այժմ լուրջ հաջողություններ է արձանագրում:

Սիրիական հակամարտության համատեքստում Փաշայանը խոսեց նաև իրանա-սաուդական մրցակցության մասին: Ամփոփելով նա նշեց, որ այս պատերազմում կարելի է արձանագրել Սիրիայի կառավարության հաղթանակը, սակայն պարտվեց սիրիացի ժողովուրդը: Սիրիան անցավ այն երկրների վերահսկողության տակ, որոնք կարողացան լուծում գտնել:

Գոռ Գևորգյանի ելույթը նվիրված էր տարածաշրջանում ուժերի նոր հարաբերությունների ձևավորմանը և դրանում Եգիպտոսի դերին: Եգիպտոսը, չնայած վերջին տարիների ճգնաժամին, շարունակում է պահպանել իր առաջատար դիրքն արաբական աշխարհում: Նա ընդգծեց Թեհրան-Կահիրե շփումների կարևորությունը սիրիական ճգնաժամի հաղթահարման գործում: Սիրիական հակամարտությունում Եգիպտոսի դիրքորոշումը, ըստ Գոռ Գևորգյանի, որոշակիորեն համընկնում է Իրանի և Ռուսաստանի դիրքորոշումների հետ:

Գոռ Գևորգյանը նշեց, որ Մերձավոր Արևելքում նոր դիմանկար է ձևավորվում՝ հին խաղացողներով ու նոր մարտահրավերներով: Նա առանձնացրեց մի շարք կետեր՝ մասնավորապես Եգիպտոսի վերածնունդը, նորացված Թուրքիան, որը կարողացավ օգտվել իրավիճակից և առաջ տանել նեոօսմանական օրակարգը, իսկ Իրանն ընդլայնեց տարածաշրջանում ծավալապաշտական քաղաքականությունը:

Արարատ Կոստանյանը խոսեց ալ-Նուսրա ճակատի մասին, որը շարունակում է պահպանել վերահսկողությունն Իդլիբի շրջանում: Կոստանյանն ընդգծեց Դեյր էզ-Զորի ազատագրումը, քանի որ սիրիական նավթի պաշարների 40%-ն այնտեղ է գտնվում: Նրա կարծիքով ԴԱԵՇ-ի պարտությամբ Սիրիայում պատերազմը չի ավարտվում, քանի որ դեռևս ուժեղ դիրքեր ունեն Նուսրա ճակատը և քրդական ուժերը, որոնք վերահսկում են երկրի հյուսիսային շրջանների մեծ մասը:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Գոռ Գևորգյան, պ. գ. թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի ավագ գիտաշխատող: Զբաղվում է Եգիպտոսի ներքին և արտաքին քաղաքական հիմնախնդիրներով, արաբ–իսրայելական հակամարտության, ինչպես նաև միջարաբական հարաբերությունների հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Արաքս Փաշայան, պ. գ. թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի առաջատար գիտաշխատող: Զբաղվում է արաբական երկրների ներքին և արտաքին հիմնախնդիրների, «Իսլամական համագործակցություն» կազմակերպության, ինչպես նաև քաղաքական իսլամի ուսումնասիրությամբ:

Նազելի Նավասարդյան, պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետազոտությունների ոլորտներն են Իրանի նոր և նորագույն պատմության հիմնախնդիրները, ինչպես նաև Իրան-Ռուսաստան միջպետական հարաբերությունները:

Անանա Կարապետյան

ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետազոտությունների ոլորտներն են ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը, կոնֆլիկտների կարգավորման միջազգային փորձը:

AUTHORS

Gor Gevorgyan, PhD, Assoc., Prof.

Senior Research Fellow of the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of his research include domestic and foreign political issues of Egypt, Arab–Israeli conflict and the Inter-Arab relations.

Araks Pashayan Assoc. Prof., PhD

Senior Research Fellow of the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of her research include domestic and foreign political issues of Arab Countries, Organisation of Islamic Cooperation, as well as political Islam.

Nazeli Navasardyan, PhD

Senior Research Fellow at the Department of Iran at the Institute of Oriental Studies, NAS RA. Main areas of her research include the modern history of Iran as well as the issues of Russian-Iran relations.

Anna Karapetyan

PhD student at the Public Administration Academy of the Republic of Armenia, Chair of Political Governance and Public Policy. The Main areas of her research include Karabakh conflict settlement process, international experience of conflict resolutions.

АВТОРЫ

Гор Геворгян, к. и. н., доцент

Старший научный сотрудник отдела Арабских стран Института Востоковедения НАН РА. Занимается внутренними и внешнеполитическими проблемами Египта, а также вопросами арабо-израильского конфликта и межарабскими отношениями в контексте международных политических процессов.

Аракс Пашаян к.и.н., доцент

Старший научный сотрудник отдела Арабских стран Института Востоковедения НАН РА. Занимается внутренними и внешнеполитическими проблемами арабских стран, изучением вопросов организации Исламского сотрудничества и политического ислама.

Назели Навасардян, к.и.н.

Старший научный сотрудник отдела Ирана Института Востоковедения НАН РА. Занимается изучением новой и новейшей истории Ирана, а также вопросами ирано-российских отношений.

Анна Карапетян

Аспирант кафедры политического управления и публичной политики Академии государственного управления РА. Занимается изучением процесса урегулирования карабахского конфликта, а также международного опыта урегулирования конфликтов.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ՀԱՏՈՐ VI (2)

Ռուբեն Սաֆրաստյանի խմբագրությամբ

Հրատ. խմբագիր՝ Ա.Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Հրատ. պատվեր № 844
Ստորագրված է տպագրության՝ 20.03. 2018թ.:
Չափսը՝ 60 x 100 1/16, 6 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ: